# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

33ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 7 (1607) ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 2, 2013
VOLUME 33, NO. 7 (1607) SATURDAY, MARCH 2, 2013

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՃՈՆ ՔԵՐՐԻ ԵՒՍ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՑ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

Սերժ Սարգսեանի վերընտրուելուն առթիւ շնորհաւորական նամակ յղած է նաեւ Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Ճոն Քէրրի:

«Յարգելի պարոն նախագահ, կը շնորհաւորեմ Ձեզ վերընտրուելու առթիւ: Փետրուարի 18-ի նախագահական ընտրութիւնները զարգացուցին 2012 թուականի խորհրդարանական ընտրութիւններու ժամանակ արձանագրուած միտումները եւ ես ուրախ եմ, որ լրատուամիջոցները քարոզարշաւի հաւասարակշռուած լուսաբանում ապահոված են: Համաձայն եմ նաեւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ նախնական եզրակացութիւններուն հետ, որ ընտրութիւնները ընդհանուր առմամբ լաւ էին կազմակերպուած՝ հիմնարար ազատութիւններու պահպանմամբ, թէպէտ տակաւին որոշ աշխատանք կը մնայ կատարելու: Առաջ շարժելով, Հայաստանը, յոյսով եմ, կը շարունակէ աւելցնել թափանցիկութիւնը, խրախուսել բազմակարծութիւնը հիմնական լրատուամիջոցներով եւ քաջալերել քաղաքացիներու ակտիւ մասնակցութիւնը բարեփոխումներուն ու կառավարման, ինչպէս նաեւ լուծել ԵԱՀԿ կողմէ բարձրացուած մնացեալ խնդիրները», - ըսած է Ճոն Քէրրի իր նամակին մէջ:

Ան նաեւ յոյս յայտնած է, որ Սերժ Սարգսեանի պաշտօնավարման երկրորդ շրջանին Միացեալ Նահանգներն ու Հայաստանը միասին կ՚աշխատին՝ «առաջ մղելու ժողովրդավարական եւ տնտեսական բարեփոխումները, որոնք էական են աճող երկկողմ առեւտուրի եւ ներդրումներու համար»:


Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Ճոն Քէրրի

«Ես նաեւ կը մնամ յանձնառու օգնելու ձեր երկրին՝ գտնելու Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ եւ բանակցային լուծում եւ կը խնդրեմ Ձեզմէ, որպէսզի այսուհետեւ եւս Մինսկի խումբի համանախագահներուն ցուցաբերէք Ձեր լիակատար աջակցութիւնը», - ըսած է Ամերիկայի պետական քարտուղար Ճոն Քէրրի իր շնորհաւորական նամակին մէջ:

## ՎԱԼԵՐԻ ՊՈՒԱՅԷ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ Է, ՈՐ ԵՐԲԵՔ ՊԻՏԻ ՉԱՅՑԵԼԷ ԹՈՒՐՔԻԱ

Ֆրանսիայի մէջ Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող նոր օրինագիծ ներկայացուցած Ազգային Ժողովի անդամ Վալերի Պուայէ յայտարարած է, որ կեանքին սպառնացող վտանգի պատճառով այլեւս երբեք պիտի չայցելէ Թուրքիա, կը տեղեկացնէ «Միլլիյէթ» թերթը:

Անցեալ տարի Ֆրանսայի խորհրդարան օրինագիծ ներկայացուցած երեսփոխանը այս անգամ ալ երկու օրինագիծ ներկայացուցած է: Առաջինը կ՚առնչուի Ցեղասպանութեան ժխտման քրէականացումին, իսկ երկրորդով կ՚առաջարկուի ստեղծել յանձնաժողով՝ 2012-ին ընդունուած օրինագիծը Սահմանադրական խորհուրդի կողմէ հակասահմանադրական հռչակելու որոշումը քննելու համար:

Պուայէ կը պնդէ, որ թրքական կառավարութեան կողմէ ինք անարգուած է եւ սպառնալիքներու ենթարկուած:

Պուայէ յայտնած է, որ YouTube-ի վրայ իր հասցէին հայհոյանք եւ անարգանք պարունակող հարիւրաւոր տեսանիւթեր կան:

«Լաւ է, որ թրքերէն չեմ հասկանար: Սակայն իմ եւ ընտանիքիս դէմ ֆրանսերէնով ալ սպառնալիքներ ստացած եմ: Ստիպուած եղայ շրջան մը ոստիկաններու պաշտպանութեամբ ապրել: Ես հայ-ֆրանսական բարեկամութեան խումբի փոխնախագահն եմ: Հայոց ցեղասպանութեան ժխտման պատժելիութեան համար պայքարս պիտի շարունակեմ»,-ըսած ան:


Ֆրանսայի Ազգային Ժողովի անդամ Վալերի Պուայէ

Ֆրանսացի երեսփոխանը ըսած է, որ նախապէս այցելած է Թուրքիա, սակայն այժմ այցելելու ցանկութիւն չունի, քանի որ իր կեանքին այնտեղ վտանգ կը սպառնայ:

Պուայէ աւելցուցած է, որ եթէ նոյնիսկ թրքական կառավարութիւնը երաշխաւորէ իր ապահովութիւնը, ինքը ռիսկի պիտի չդիմէ:

## ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԲԱՑԱՌԵՆ ԲՌՆԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ ԴԷՄ



Բողոքելով նախագահական ընտրութիւններու արդիւնքին դէմ Երեւանի մէջ տեղի կ՚ունենան ուսանողական ցոյցեր

Հայաստանի Իշխող Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) ներկայացուցիչները բացառած են իշխանութիւններու կողմէ բռնութեան կիրառումը «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ, նախագահական ընտրութիւններուն պաշտօնական տուեալներով երկրորդ տեղը գրաւած Րաֆֆի Յովհաննիսեանի նախաձեռնած խաղաղ հանրահաւաքներու եւ դասադուլ սկսած ուսանողներու բողոքի ցոյցերու մասնակիցներուն դէմ:

Յովհաննիսեան, նախագահ Սերժ Սարգսեանի հետ անցեալ շաբաթուայ հանդիպումէն ետք, հանդէս եկաւ հանրահաւաքային պայքարը ամբողջ հանրապետութեան տարածքին շարունակելու նախաձեռնութեամբ: Միաժամանակ կը շարունակուին ուսանողներու շարժումը:

ՀՀԿ-ի փոխնախագահ, Ազգային Ժողովի հանրապետական խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեան «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնած է, որ կուսակցութիւնը յետընտրական այս զարգացումներով մտահոգուած չէ, հակառակը, շահագրգիռ է, որպէսզի երկրէն ներս ձեւաւորուի ուժեղ ընդդիմութիւն, քանի որ ընդդիմադիր դաշտը վերջին շրջանին կարծես թէ ամայացած էր:

Րաֆֆի Յովհաննիսեան յայտարարեց, որ Սերժ Սարգսեանի հետ հանդիպման ընթացքի իր կողմէ ներկայացուած առաջարկները մերժուելէ բացի, գործող նախագահը իրեն առաջարկած է շարունակել պայքարը 2017-2018 թուականներուն՝ որպէս ընդդիմութեան ղեկավար, ինչ որ ինքը մերժած է, ըսելով, որ իրեն պէտք չէ այդ 2017-18-ը: Յովհաննիսեան հիմա է որ իշխանափոխութիւն կը պահանջէ:

Հանրապետականներու կարծիքով, Րաֆֆի Յովհաննիսեանի այցելած շատ մը շրջաններուն մէջ, բաւական նուազած է հետաքրքրութիւնը անոր շարժումին նկատմամբ:

## ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐՈՒՆ

Հայաստանի նախագահի Փետրուարի 18-ի ընտրութիւնները դիտարկած «Թրանսփարենսի ինթըրնէյշընըլ» հակակոռուպցիոն կեդրոնը, Հելսինքեան քաղաքացիական ասամպլիայի Վանաձորի գրասենեակը, Լրագրողներու «Ասպարէզ» ակումբը, «Համագործակցութիւն յանուն ժողովրդավարութեան» եւ մի քանի այլ կազմակերպութիւններ յայտարարութիւն հրապարակեցին, անդրադառնալով ու քննադատելով միջազգային դիտորդական կազմակերպութիւններու գնահատականները:

«Միջազգային դիտորդական առաքելութիւնների նախնական գնահատականները, խօսքը վերաբերում է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին, Եւրախորհուրդի խորհրդարանական վեհաժողովին եւ ԵԱՀԿ-ի խորհրդարանական վեհաժողովի համատեղ նախնական գնահատականին, դրանք չեն արտացոլում իրական ընտրական գործընթացները եւ ցաւօք սրտի վերստին մեծապէս պայմանաւորուած են քաղաքական դրդապատճառներով», - մամլոյ ասուլիսի ընթացքին տեղական կազմակերպութիւններու գնահատականները հրապարակելով ըսաւ իրաւապաշտպան Արթուր Սաքունց:

Եւրախորհուրդի խորհրդարանական վեհաժողովի պատուիրակութեան ղեկավար Քարին Ուոլսեթ, մասնաւորապէս յայտարարած էր, թէ անկասկած բարելաւում արձանագրուած է 2008-ի ընտրական գործընթացի համեմա-

Շար.ը էջ 4

# ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՎԱԽԵՐՆ ԱՐԴԱՐԱՑՈՒԱԾ ԵՆ

*ԱՐԱՄ ՍԱՀԱԿԵԱՆ*

*Դասադուլ, հանրահաւաք, պիկետներ, բողոքի ակցիաներ... Ռոմանտիկները բղաւում են, թէ 88-ի ազգային զարթօնքն է կրկին վերապրել, իսկ իրատեսները վերլուծում, որ աւելի քան ռոմանտիկ Րաֆֆի Յովհաննիսեանի կերպարն ու խարիզման ու փոքր-ինչ անկայուն բնաւորութիւնն ու այժմեան երերուն դիրքորոշումով հնարաւոր չէր բողոքի այսպիսի մեծ ալիք բարձրացնել: Իսկ որ վիճակը սպառնում է դուրս գալ վերահսկողութիւնից, փաստում են նաեւ իրենք, ՀՀԿ-ականները անհեթեթ եւ շանտաժի սպառնալիքներով յայտարարութիւններն ու դրսեւորած վարքագիծը խօսում են միմիայն իշխանութիւնում առկայ խորը ճգնաժամի եւ անհանգստութեան մասին, զարմանալի է, բայց շանտաժ է արւում եթէ չասենք այդչափ հանդուրժող, ապա Սերժ Ազատիչին այդքան մեծ-մեծ սիրող ու յարգող Րաֆֆի Յովհաննիսեանին հանդէպ: Դիցուք ՀՀԿ մամլոյ խօսնակ Էդուարդ Շարմազանովն է յայտարարում, որ եթէ Րաֆֆին այդպէս շարունակի, ապա իրենք կը հրապարակեն Սերժ Սարգսեանի հետ նրա ունեցած հանդիպման ձայնագրութիւնը, կամ Յովիկ Աբրահամեանն է խայծը կուլ տալով համաձայնում է Նիկոլ Փաշինեանի երկրում առկայ քաղաքական ճգնաժամի փաստը եւ ինքը նախաձեռնեց քննարկում կազմակերպել եւ քննել ու իրավիճակային ելքեր որոնել: Եթէ ԱԺ նախագահի այս միամտութիւնը ոմանք սեփական շահերի սպասարկման համատեքստում վերլուծեցին, հաշուի առնելով վերջինի եւ Ծառուկեանի ու Քոչարեանի հետ ունեցած յարաբերութիւնները, ապա ոչ մի բացատրութիւն կամ ենթատեքստ չի երեւում Շարմազանովի պարագայում: Ուստի այս երկու դէպքն արդէն խօսում է այն մասին, որ իշխանութեան ճամբարում ակնյայտ լարուածութիւն է եւ ինչպէս վերեւում նշեցինք, հենց այստեղ բոլորից լաւ են հասկանում, որ Րաֆֆիի անվճռականութեան ու չյստակեցուած ծրագրերի արդիւնքում չէ, որ երկրում օր օրի համատարած թափ է առնում բողոքի շարժման ալիքներ: Այս համատեքստում պարզապէս չի կարելի անտեսել արտաքուստ աննշմար, բայց իրականում իշխանութեան համար պայթունավտանգ մի իրողութեան մասին:*

*Իշխանութիւնը յանձին սեփական քարոզչամեքենայի հետաքրքիր մի վարկած է շրջանառութեան մէջ դրել, համաձայն որի Րաֆֆի Յովհաննիսեանին ստուերային աջակցութիւն է ցուցաբերում Ռոբերդ Քոչարեանը: Ըստ ամենայնի իշխանութիւնը այսպիսով պատասխանեց, որ պատրաստ է ցանկացած զարգացումների եւ ոչ մի պարագայում անակնկալի չի գալու: Ըստ ամենայնի, Քոչարեանի աջակցութեան հանգամանքով է պայմանաւորուած, որ վերջերս Րաֆֆի Յովհաննիսեանի մօտ երբեմն-երբեմն նկատելի է դառնում Ռոբերդ Քոչարեանի կոշտ բառապաշարը: Րաֆֆին Ուրբաթ յայտարարեց, որ նրանք, ովքեր ընտրել են Սերժ Սարգսեանին, չեն կարող համարուել ժողովուրդ, իսկ ողնաշար ունեն միայն այն քաղաքներն եւ գիւղերը, որտեղ յաղթել է ինքը: Ուշագրաւ է նաեւ, որ Քոչարեանի չգրուած դաշնակից Տէր-Պետրոսեանը Րաֆֆուն միանալու առաջին քայլն ըստ էութեան արել է այսօր, չեղեալ է յայտարարուել Ազատութեան հրապարակում Մարտի 1-ին նախատեսուած հանրահաւաքը եւ Կոնգրէսը միայն յարգանքի տուրք կը մատուցի Միասնիկեանի արձանի մօտ, որտեղ նոյն օրը հանրահաւաքի թոյլտուութիւն է ստացել Րաֆֆի Յովհաննիսեանը: Չի բացառւում, որ իշխանութեան վախերն իսկապէս արդարացուած լինեն, եւ առաջիկայում խաղի մէջ մտնի հենց Քոչարեանը:*

*«ՀԱՅԵԼԻ»*

# ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՐԱՖՖԻԻՆ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*ԱԺ ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը յայտարարել է, որ այժմ նոր ընդդիմութեան ծնունդ է, եւ պէտք է գնալ ոչ թէ հակազդելու ճանապարհով, այլ օգնելու, որ այդ ընդդիմութիւնն իր տեղն ու դերն ունենայ քաղաքական կեանքում: Սահակեանն ի դէպ յայտարարել է, թէ պատրաստ են ԱԺ ձեւաչափով քննարկել յետընտրական իրավիճակը: Նա նոյնիսկ խօսել է փաստաթուղթ պատրաստելու մասին:*

*Սերժ Սարգսեանի նախագահութեան շրջանում ՀՀԿ տարբեր ֆունկցիոներների յայտարարութիւններն իհարկէ դադարել են անսխալ ինդիկատոր լինելուց: Օրինակ, ՀՀԿ-ական որեւէ չինովնիկ կարող է յայտարարել, թէ Սերժ Սարգսեանը Րաֆֆի Յովհաննիսեանին չի հանդիպի, բայց յետոյ Սերժ Սարգսեանի խօսնակը կը յայտարարի, որ նա պատրաստ է ընդունել Յովհաննիսեանին ցանկացած ժամի:*

*Սարգսեանի նախագահութեան առաջին ժամկէտին էլ եղել են բազմաթիւ դրուագներ, երբ ներքաղաքական այս կամ այն հարցի վերաբերեալ ՀՀԿ չինովնիկները ասել են մի բան, Սերժ Սարգսեանը ասել կամ արել է բոլորովին հակառակը:*

*Այնպէս որ, Գալուստ Սահակեանի յայտարարութիւններն այլեւս չափման միաւոր չեն ոչ միայն ժամանակատարիքային, այլ նաեւ իրավիճակի բերումով:*

*Միեւնոյն ժամանակ սակայն, ՀՀԿ փոխնախագահի յայտարարութիւնները ոչ միայն «այո» կամ «ոչ»-ի շրջանակում են, այլ որոշակի հայեցակարգային մօտեցում են պարունակում՝ կամայ, թէ ակամայ:*

*Գալուստ Սահակեանը խօսում է նոր ընդդիմութեան ձեւաւորման մասին:*

*Չի բացառւում իհարկէ, որ այստեղ կայ բաւական նուրբ եւ խորամանկ մարտավարութիւն՝ իրավիճակը ներկայացնել այդպէս, Րաֆֆի Յովհաննիսեանին ու նրա շարժումը վարկաբեկելու, հարուածի տակ դնելու համար, թէ սա իշխանութեան հետ փոխհամաձայնեցուած խաղ է, որով Յովհաննիսեանին բերում են ընդդիմութեան առաջատարի դիրքեր:*

*Միւս կողմից, Րաֆֆի Յովհաննիսեանին գուցէ փորձում են նրբօրէն ներգրաւել իշխանութեան հետ տարբեր խորհրդակցական ձեւաչափերի շրջանակ, ժամանակ շահելու կամ էլ շարժման ալիքը «գործարքի» տպաւորութեամբ այդ ձեւով չեզոքացնելու համար:*

*Միեւնոյն ժամանակ, որքան էլ Հայաստանի իշխող համակարգին ընդհանուր առմամբ բնորոշ չէ հանրային իրավիճակների հանդէպ ադեկվատութիւնը, նոր ընդդիմութեան հարցը քննարկելու պատրաստակամութիւնը կարող է լինել այդ տիրոյթում, որովհետեւ իրավիճակն իսկապէս աննախադէպ է եւ այն այդպիսին է ստացուել նաեւ այն «ոչ ադեկվատութեան» հետեւանքով, որը դրսեւորուեց 2008 թուականի շարժման հանդէպ:*

*2008-ի շարժման թափը չեզոքացուեց մի քանի մեթոդով: Նախ իհարկէ բռնութիւնն էր, աննախադէպ բռնութիւնը, մարդասպանութիւնը: Յետոյ ռեպրեսիաները: Յետոյ դրանց լրացնելու եւ այսպէս ասած գործն աւարտին հասցնելու եկան քաղաքական առեւտրի կանոնները, երբ ՀԱԿ-ը նախ ՀՀԿ-ի հետ անյաջող երկխօսեց, յետոյ իշխանական երկրորդ կուսակցութեան՝ ԲՀԿ-ի հետ, յետոյ դարձաւ 7 մանդատի տէր ու յայտարարուեց «մեռած»:*

*Ու թւում է, որ այդ մարտավարութիւնը փայլուն կերպով չեզոքացրեց նաեւ այն քաղաքացիական դժգոհութեան ալիքը, որի վրայ ձեւաւորուել էր 2008-ի շարժումն ու ՀԱԿ-ը, առաւել եւս, որ այդ ընթացքում էլ թէ իշխանութեան, թէ նաեւ ՀԱԿ-ի լիդերների ջանքերով բաժանարար բաւական ամուր գծեր քաշուեցին քաղաքացիական տարբեր շերտերի միջեւ, հասցնելով դրանք ընդհուպ խրամատի:*

*Բայց, 2013 թուականի ընտրական գործընթացը ցոյց տուեց, որ անգամ այդ վիճակում, անգամ այդ ջանքերից յետոյ, քաղաքացիական դժգոհութիւնը միեւնոյն է առկայ է, եւ որքան այն փորձ է արւում խեղդել կամ զսպել ոչ համարժէք մեթոդներով, այդքան այն դրսեւորւում է առաւել մեծ թափով:*

*Եւ եթէ 2008-ի ոչ ադեկվատ միջոցներով ճնշուած շարժումը վերարտադրուեց 2013-ի ծաւալով, ապա կարելի է պատկերացնել, թէ 2013-ի շարժումը ոչ ադեկվատ միջոցներով ճնշելու դէպքում ինչ ծաւալով այն կարող է վերարտադրուել 2018-ին:*

*Միլիոններ ու միլիարդներ հաշուող իշխանութիւնը երեւի թէ կարող է շատ լաւ վարել հարիւր հազարների այդ հաշիւն, ու կոնկրետ օրինակի վրայ կատարել անհրաժեշտ, համեմատաբար բանական որոշումներ, դիմելով իրավիճակի հանդէպ արձագանքի առաւել բանական եւ փոխզիջումային մեթոդների:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# «ԹԷ ՉԷ ԳԼՈՒԽԴ ԿԸ ՋԱՐԴԵՄ»

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ*

*Անկախ նրանից, թէ ինչպէս է աւարտուելու այս հերթական յետընտրական լարուածութիւնը, մի բան կարող եմ վստահաբար ասել՝ ես բոլոր դէպքերում շարունակելու եմ աշխատել որպէս լրագրող: Կանխազգալով մեր արմատական ընթերցողների ցասումը՝ կարող եմ աւելացնել նաեւ՝ վերջին 5 տարում մեր բնագաւառում աշխատելը շատ աւելի հեշտ է դարձել, քան անցեալում: Վստահ եմ, որ Րաֆֆի Յովհաննիսեանն էլ, եթէ նախագահ դառնայ, մեզ չի կ՛աշկանդի: Այդ առումով ես միայն մի մարդուց եմ վտանգ զգում՝ գիտէք, թէ ումից:*

*Եւ չնայած խօսքի ազատութեան հետ կապուած որոշ խնդիրներ լուծուել են, մէկը դեռ կայ, եւ հենց դրա մասին էլ ուզում եմ գրել: Կրիմինալ, կիսակրիմինալ, մայլի խուժան, գողականներ, թաղային հեղինակութիւններ՝ Հայաստանում մի խաւ կայ, որը կրում է տարբեր անուններ, բայց որի էութիւնը նոյնն է: Այդ մարդկանց լուսանկարելը, տեսանկարելը այնքան էլ հեշտ չէ՝ նրանք նստած են իրենց տներում, իրենց թանկանոց ջիպերի ղեկին, ինչպէս նաեւ իրենց նախընտրած քեաբաբնոցներում՝ «մի կտոր հաց ուտելու» նպատակով: Գուցէ վերջին դէպքում, ասենք, սպիտակցի Հայկոյի երգերի ներքոյ այդ կերպարները որոշեն տեսագրել իրենց պարը, բայց այդ տեսագրութիւնը հանրութեան սեփականութիւնը չի դառնայ:*

*Եւ քանի որ մեր ընտրութիւնները պէտք է որ թափանցիկ գործընթաց լինեն, այդ օրը նրանց հնարաւոր է նկարահանել: Թւում է, թէ ինչ կայ. եթէ դու ազնուօրէն ու բարեխղճօրէն կատարում ես քո պարտականութիւնները կամ շարքային ընտրող ես, ինչո՞ւ ես կատաղում ու սկսում բղաւել՝ «չփորձուես ինձ նկարել, թէ չէ՝ հեսա էս կամերան գլխովդ կը տամ»: Բայց ոչ՝ դու բարկանում ես, որովհետեւ մեղաւոր ես: Այստեղից էլ լրատուամիջոցներին խոչընդոտելու բազմաթիւ դէպքեր, որտեղ ոստիկանները, բնականաբար, գողականների կողմից են: Դատախազութիւնն էլ, իհարկէ, քննելով այդ գործերը՝ ոչ մի յանցադէպ «չի յայտնաբերում»:*

*Առաջարկում եմ «Ֆէյսբուքում» բացել «Մի նկարի, թէ չէ՝ գլուխդ կը ջարդեմ» խումբ, որտեղ կը զետեղուեն քյաբաբից ուռած բոլոր դէմքերը, որպէսզի մենք ամէն օր ունենանք այդ կերպարները դիտելու հաճոյքը:*

*«ԱՌԱՒՕՏ»*


**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆ

### ՇԱՐՄԱԶԱՆՈՎԻ ՀԱՄԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՔԱՅԼԵՐՆ ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ԵՆ

*Հանրապետական կուսակցութեան խօսնակ, ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի համար «Ժառանգութիւն» կուսակցութեան ղեկավար Րաֆֆի Յովհաննիսեանի պահուածքն անհասկանալի է:*

*«Նորմալ երկրում նման խնդիրները լուծում են իրաւական ճանապարհով, կան դատարաններ, մինչդեռ այն ճանապարհով, որ գնում է իմ կողմից շատ յարգուած, հայրենասէր Րաֆֆի Յովհաննիսեանը, ինձ համար մի քիչ անհասկանալի է»,- ասաց նա եւ պարզաբանեց թէ ինչու:*

*«Առաջին օրը ասաց 80% ձայն եմ հաւաքել, յետոյ հասաւ Բաղրամեան 26, այդ 80%-ը դարձաւ երկրորդ փուլ, յետոյ էլ արդէն պառլամենտի ցրում: Մեր երկիրը պատուերով համերգ չի, ոչ էլ թագաւորական երկիր, որ երկրի նախագահը, երբ ուզի պառլամենտ ցրի, երբ ուզի չցրի: Մեր երկրում կայ Սահմանադրութիւն, եւ մենք բոլորս պէտք է ենթարկուենք Սահմանադրութեանը»,- լրագրողների հետ զրոյցում ասաց ՀՀԿ խօսնակը:*

*Ինչ վերաբերւում է Նախագահ Սերժ Սարգսեանի հետ հանդիպման ձայնագրութեան անհրաժեշտութեանը, ապա Շարմազանովը նշեց. «Պարոն Յովհաննիսեանն ամէն հանդիպումից յետոյ աւելի շատ մանրամասներ էր ներկայացնում եւ գալիս է մեր տարբերակին»:*

*Յիշեցնենք որ, Րաֆֆի Յովհաննիսեանը լրագրողների հետ հանդիպմանը պահանջել էր չսպառնալ իր եւ Սերժ Սարգսեանի հանդիպման ձայնագրութիւնով, եւ անյապաղ հրապարակել այն:*

*Էդուարդ Շարմազանովը խնդրում է յետընտրական շրջանում ստեղծուած իրավիճակը լարուածութիւն, ճգնաժամ բառերով չներկայացնել: «Հայոց լեզուն շատ հարուստ է, եկէք մի քիչ ռադիկալ լինենք, ոչ էլ լարուածութիւն կայ: Իւրաքանչիւր նորմալ ժողովրդավարական երկրում ընտրութիւններում յաղթած ֆավորիտ թեկնածուն յաղթում է 55-58%-ի սահմաններում»,- ասաց նա եւ նշեց, որ այդ են վկայում նախագահին վերընտրուելու կապակցութեամբ ստացուող շնորհաւորանքները: «Դրա վառ ապացոյցը այն շնորհաւորանքների տարափն է, դիտորդների գնահատականը, Րաֆֆի Յովհաննիսեանի յանձնաժողովի անդամների ստորագրութիւններն էլ ձեզ փեշքեշ»,- ասաց նա:*

*Հանգուցալուծումն, ըստ նրա, կը լինի միայն ու միայն նորմալ սահմանադրական ուղով:*

### «ԳԻՒՂԱԿԱՆ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՆԵՐ ԿԱՆ, ՈՒՐ 100% ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ Է ԵՂԵԼ ԵՒ 100%-Ն ԷԼ ԻՐ ՁԱՅՆԸ ՏՈՒԵԼ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ»



**ԱԺ «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ռուբէն Յակոբեան**

*ԱԺ «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ռուբէն Յակոբեանը ԱԺ յայտարարութիւնների ժամին բոլոր նրանց համար, ովքեր իսկապէս հաւատում են, որ ընտրութիւնները չեն կեղծուել, խօսեց փաստերով: Ըստ նրա, գիւղական ընտրատարածքներ կան, որտեղ ընտրական իրաւունք ունեցող քաղաքացիները մասնակցել են 100%-ով եւ 100%-ն էլ ձայնը տուել է Սերժ Սարգսեանին:*

*«Առաւել անթաքոյցն ու զաւեշտալին այն է, որ 5 տեղամասում մասնակցել են ընտրական իրաւունք ունեցող քաղաքացիների 100%-ը, որտեղ միջին հաշուով 5,7%-ն իր ձայնը տուել է Րաֆֆի Յովհաննիսեանին, իսկ 83,33-ը Սերժ Սարգսեանին: Կան տեղամասեր, որտեղ ընտրողների 100%-ը մասնակցել են ընտրութիւններին եւ 100%-ն էլ ձայները տուել են Սերժ Սարգսեանին, ընդ որում, հիմնականում, գիւղերում: Կարծում եմ, հասկանալի է, որ այստեղ կրկնակի քուէարկութիւն է եղել, քանի որ նրանց մի մասը կամ Երեւանում է, իսկ միւս մասն էլ հանրապետութիւնից դուրս է»,- ասաց նա եւ աւելացրեց. «Ա՞յս արդիւնքներով էք դուք յաղթել»:*

*Անդրադառնալով եւրոպական դիտորդական կառոյցների դրական գնահատականներին, նա յիշեցրեց, որ նրանք այն նոյն կառոյցներն են, որոնք շատ դէպքերում մեր ազգային շահը վաճառել են:*

*«Եւ Հայաստանի բարձրագոյն իշխանութիւնները նրանց բազմիցս ասել են խաւիարակերներ »,-ասաց նա եւ նշեց, որ նոյն կառոյցների արձանագրած «մէկ քայլ առաջ ընտրութիւններին» ինքը արհամարհում է:*

*Վերջում նա խօսքն ուղղեց Սերժ Սարգսեանին, նշելով, որ կեղծուած ընտրութիւնները Հայաստանում լարուած իրավիճակ են ստեղծուել, իսկ նրա կողմից բոլոր տարբերակներին «ոչ»-ով արձագանքելը վտանգաւոր է: Ըստ «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւորի՝ Սերժ Սարգսեանը պարտաւոր է ցուցաբերել խոհեմութիւն եւ ընդառաջել ժողովրդի կամքը, ընդունելով սեփական պարտութիւնը:*

### ՀՀՇ-Ն ԴԱՐՁԱՒ «ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԷՍ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

*Հայոց համազգային շարժումն այսուհետ կոչուել է «Հայ ազգային կոնգրէս» կուսակցութիւն:*

*Փետրուար 23-ին ՀՀՇ արտահերթ 18-րդ համագումարը ձայների մեծամասնութեամբ կողմ է քուէարկել առաջարկուած որոշմանը, ըստ որի ՀՀՇ-ն միանում է ՀԱԿ կուսակցութիւն ստեղծելու նախաձեռնութեանը եւ վերանուանւում է «Հայ ազգային կոնգրէս» կուսակցութեան:*

*Կուսակցութեան որոշման նախագծի մէջ նշուած է, որ այն շարունակում է մնալ Հայոց Համազգային շարժման ամբողջ պատմական ժառանգութեան տէրը, պատասխանատուն եւ ժառանգորդը: Նշւում է, որ վերակազմաւորումն իրականացւում է ՀԱԿ ստեղծման նախաձեռնող խմբի ՀՀՇ համագումարին ուղղուած առաջարկութիւնների հիման վրայ:*

*Քուէարկութեանը մասնակցած պատուիրակներից որոշմանը կողմ են քուէարկել 375-ը, դէմ՝ 6-ը, ձեռնպահ 3 պատուիրակ:*

*Նշենք, որ աւելի վաղ ՀՀՇ վարչութեան նախագահ Արամ Մանուկեանը նշել էր, թէ թէեւ յատկացրել էին 630 մանդատ, բայց համագումարն սկսելու պահին մասնակցում էին մօտ 430-ը:*

*Ի դէպ, դէմ քուէարկածների մէջ էր նաեւ Ազգային ժողովի նախկին նախագահ Բաբկէն Արարքցեանը, ով աւելի վաղ ելոյթ էր ունեցել, եւ ներկայացրել իր դիտողութիւնները:*

*Քուէարկութիւնից յետոյ համագումարը համարուեց փակուած, Մարտին կայանալու է ՀԱԿ կուսակցութեան համագումարը, որը նոր ծրագիր, կուսակցութեան ղեկավար մարմիններ է ընտրելու:*

*Նշենք, որ համագումարին մասնակցել է նաեւ Լեւոն Տէր-Պետրոսեանը, ով նշել էր, թէ Հայ ազգային կոնգրէս դաշինքը, որպէս այդպիսին այլեւս գոյութիւն չունի, եւ կողմ էր արտայայտուել կուսակցութեան ստեղծմանը:*

### ՍՏԵՓԱՆ ԴԵՄԻՐՃԵԱՆ. «ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻ ՀԱՍԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ»

*Փետրուարի 18-ին տեղի ունեցած նախագահական ընտրութիւնները ոչ թէ դարձան մեր երկրի նորագոյն պատմութեան լաւագոյն ընտրութիւնները, ինչպէս խոստանում էին իշխանութիւնները, այլ ընդամէնը համալրեցին կեղծուած ընտրութիւնների ցանկը: Այդ մասին Ազգային ժողովի ամբիոնից յայտարարութիւնների ժամին ասել է ՀԱԿ խմբակցութեան պատգամաւոր, ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեանը:*

*Վերջինիս խօսքով, այդպէս էլ պէտք է լինէր, քանի որ այս իշխանութիւններն ու արդար ընտրութիւնները անհամատեղելի հասկացութիւններ են:*

*«Ի՞նչ ժողովրդավարական ընտրութիւնների մասին կարող է խօսք լինել, երբ իրենց տեղերում են նախորդ ընտրութիւնների կեղծիքների կազմակերպիչները: Մինչ օրս պատասխանատուութեան չեն ենթարկուել Մարտի 1-ի սպանդը իրականացնողները: Եւ մենք, ինչպէս գիտէք, չմասնակցեցինք այդ ընտրութիւններին, քանի որ մեզմ ասած, երաշխաւորուած չէր արդար ընտրական գործընթացի ապահովումը»,- նշել է Դեմիրճեանը եւ յաւելել. «Փետրուարի 18-ին մեր հասարակութիւնը մերժեց գործող վարչախմբին: Մերժեց այն վարչախմբին, որի կառավարման տարիների ընթացքում երկրում աճել է աղքատութիւնը, խորացել սոցիալական բեւեռացումը: Մերժեց այն իշխանութեանը, որը մարդկանց դատապարտում է անյուսութեան եւ արտագաղթի»:*

*Ստեփան Դեմիրճեանը նշել է, որ Փետրուարի 18-ին ժողովուրդը «Ոչ» ասաց երկրում առկայ քրէաօլիգարխիկ համակարգին, կեղծիքին, ընտրակաշառքին եւ վերատիրացաւ իր արժանապատուութեանը:*

*«Փետրուարի 18-ի ընտրութիւնները եւ դրան յաջորդող իրադարձութիւնները շատ յստակ ցոյց տուեցին, որ մեր ժողովուրդը մտադիր չէ նուաստացած ապրել իր երկրում եւ թոյլ չի տալ բռնանալ իր կամքի վրայ: Մարդիկ փոփոխութիւններ են պահանջում, եւ այդ փոփոխութիւնները պէտք է սկսել ժողովրդի քուէնստացած իշխանութեան ձեւաւորումից:*

*ՀԺԿ-ն, ինչպէս միշտ, կը լինի ժողովրդի կողքին եւ կը շարունակի պայքարել յանուն արդարութեան եւ արժանապատուութեան յաղթանակի», - ասել է Դեմիրճեանը:*

### ԲՀԿ-Ն ԱՐԴԱՐԱՑԻ Է ՀԱՄԱՐՈՒՄ ՅԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՀԱՒԱՔՆԵՐԸ

*«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը (ԲՀԿ) հանդէս է եկել Փետրուարի 18-ին տեղի ունեցած նախագահի ընտրութիւնների վերաբերեալ յայտարարութեամբ, որում անդրադարձել է յետընտրական զարգացումներին եւ իշխանութիւններին կոչ արել զսպուածութիւն ցուցաբերել:*

*«Յետընտրական զարգացումները վկայում են, որ մեր երկրում առկայ է ընտրական համակարգի նկատմամբ հանրային անվստահութեան մթնոլորտ», - ընտրութիւններից ուղիղ մէկ շաբաթ անց յայտարարում է ԲՀԿ քաղաքական խորհուրդը. - «Հասարակութեան լայն զանգուածների դժգոհութիւնը խօսում է այն մասին, որ երկրում կուտակուած բազմաթիւ խնդիրներ շարունակում են մնալ չլուծուած: Իւրաքանչիւր քայլի հանդիպող անարդարութիւնը, իշխանութեան տարբեր օղակների կողմից քաղաքացու արժանապատուութեան ոտնահարման՝ սովորական դարձած գործելաոճը, օրաւուր մեծացնում են հանրային դժգոհութիւնը»:*

*ԲՀԿ խորհրդարանական խմբակցութեան անդամ, կուսակցութեան մամուլի խօսնակ Տիգրան Ուրիխանեանին հարցրեցինք, թէ իշխանութեան ներկայացուցիչները համոզմունքն են յայտնում, որ անցած նախագահական ընտրութիւններն ազատ էին ու արդար, մինչդեռ ընդդիմադիր ուժերը գտնում են, որ ընտրութիւնները կեղծուած են, ի՞նչ դիրքորոշում ունեն ԲՀԿ-ում:*

*«ԲՀԿ-ում կարծում են, որ ճիշդ այնպէս, ինչպէս կարծում է ժողովուրդը: Մարդիկ, ովքեր այսօր ոտքի են ելել, ոտքի են ելել տարրական կենսակերպ կազմակերպելու անհնարինութեան պատճառով: Մարդիկ այսօր արտայայտում են բողոք, դժգոհութիւն, ցասում ստեղծուած իրավիճակի վերաբերեալ: Սա են կարծում ԲՀԿ-ում: Նախագահի ընտրութիւնները առիթ էին, որպէսզի հայաստանցիները այդ դժգոհութիւնը արտայայտեն», - ասաց ԲՀԿ-ի խօսնակը:*

# ԼՈՒՐԵՐ

## ՄՈՍԿՈՒԱՆ ՉԳԻՏԻ, ԹԷ ԻՆՉՊԷՍ ԵՂԱՒ, ՈՐ «ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ՀԵՌՈՒ» ԹԵԿՆԱԾՈՒՆ ՔԻՉ ԷՐ ՄՆՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Օրեր առաջ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութիւնը հրապարակեց «Ռուսաստանի Դաշնութեան արտաքին քաղաքականութեան հայեցակարգը» խորագրով մի փաստաթուղթ, որում ներկայացուած է Մոսկուայի արտաքին քաղաքականութեան հիմնարար սկզբունքներն ու առաջնահերթութիւնները: Փաստաթղթում նշւում է, որ Մոսկուայի արտաքին քաղաքական առաջնահերթ ուղղութիւններից մէկն ԱՊՀ անդամ-երկրների հետ երկկողմանի եւ բազմակողմ յարաբերութիւնների զարգացումն ու ընդլայնումն է: Ռուսական «Նեզավիսիմայա գազետա» օրաթերթի խմբագրականում հրապարակուել է ուշագրաւ մի յօդուած, որում, վերլուծելով յետխորհրդային երկրների տարածքում կատարուող քաղաքական վերջին զարգացումները, եզրակացնում է, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան հայեցակարգն այդքան էլ գրաւիչ չէ յետխորհրդային տարածաշրջանի համար: Խմբագրականն այդ հայեցակարգի ձախողման օրինակ է համարում նաեւ Փետրուարի 18-ին կայացած նախագահական ընտրութիւններում Րաֆֆի Յովհաննիսեանի գրանցած յաջողութիւնը՝ «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդին բնութագրելով որպէս «ամերիկամէտ» եւ «Ռուսաստանից հեռու» քաղաքական գործչի:*

*«Նեզավիսիմայա Գազետան» նաեւ գրում է.*

*«Իսկ ի՞նչ անել այդ դէպքում Հայաստանի հետ, որն անցած շաբաթ քիչ էր մնում նախագահ ընտրեր ԱՄՆ-ի քաղաքացուն: Մի քաղաքական գործչի, որն այնքան «հեռու է» Ռուսաստանից, որ նոյնիսկ ռուսերէն չի հասկանում: Իսկ Երեւանը, ի դէպ, Մոսկուայի ռազմավարական դաշնակիցն է, միակը Հարաւային Կովկասում: Յետընտրական իրադարձութիւններն այդ երկրում չեն աւարտուել: «Գրեթէ յաղթած թեկնածուն», երեւում է, որ պատրաստ է գունաւոր յեղափոխութիւն խաղալ: Ռուսաստանը, երեւում է, պատրաստ չէ դէպքերի նման զարգացմանը յետխորհրդային պետութեան տարածքում, որտեղ ի դէպ ռազմաբազա ունի: Ինչպէս որ պատրաստ չէ պատասխանել այն հարցին, թէ ինչպէս եղաւ, որ եթէ ոչ «ակնյայտ ամերիկամէտ», ապա «անհասկանալի» թեկնածուն քիչ էր մնում գար իշխանութեան:*

*«Մոսկուան, ձեւաւորելով որոշակի նպատակներ եւ յաւակնոտ առաջադրանքեր, որոնք այս կամ այն կերպ առնչւում են հարեւաններին եւ այլ երկրների շահերին, երեւում է, որ անտեսում է գործընթացները, որոնք տեղի են ունենում այդ երկրների ազգային հասարակութիւններում: Թէկուզեւ փայլուն յարաբերութիւններ հաստատելով իշխող վերնախաւերի հետ՝ Մոսկուան ուշադրութիւն չի դարձնում բնակչութեան տրամադրութիւններին: Իսկ Soft Power-ը միայն արեւմտեան կենսակերպ չէ՝ գեղեցիկ, ասենք, հոլիվուդեան կամ ռոքն-ռոլեան «շպիկով»: Դա կոնկրետ էժան բիզնես-վարկերն են, առատ դրամշնորհները՝ տեղական հասարակական կազմակերպութիւններին, մարդասիրական նախագծեր, որակեալ կրթութեան հնարաւորութիւն եւ այլն: Իսկ այդ «բուրգի» գագաթին պէտք է լինեն ընտրութեան ազատութիւնը, մարդու իրաւունքները եւ բազմակուսակցական համակարգը, այսինքն ժողովրդավարական աւանդական արժէքները, առանց որոնց Soft Power-ը բովանդազրկւում է»:*

## ԹՈՒՐՔԻԱՆ ԱՌԱՋԱՐԿ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

*Թուրքիան առաջարկել է Հայաստանին մասնակցել Եւրոպան Ասիային կապող տարածաշրջանային համալիր տրանսպորտային ծրագրին՝ եթէ «կոնկրետ զարգացումներ լինեն ղարաբաղեան հարցը լուծելու ուղղութեամբ, որոնք կը բխեն Կովկասի բոլոր երկրների շահերից»:*

*Առաջարկի մասին հաղորդել է թուրքական «Հուրիէթ»-ը՝ յղում անելով Թուրքիայի դիւանագիտական անանուն աղբիւրներին:*

*«Մենք փորձում ենք ակտիւացնել Մինսկի խումբը՝ ղարաբաղեան խնդիրը լուծելու համար, եւ 2012 թուականի Նոյեմբերին «Միացեալ տրանսպորտային միջանցքներ» ծրագիր ենք ներկայացրել Մինսկի խմբին, որը պէտք է իրականացուի խաղաղ ժամանակներում, մասնաւորապէս՝ երբ Հայաստանը առաջ կը գնայ գրաւուած եօթ շրջանները ազատելու հարցում», - «Հիւրիէթ»-ին ասել է Թուրքիայի դիւանագիտական աղբիւրը:*

*Աղբիւրը նաեւ նշել է, որ այս ծրագիրը ներկայացուել է 2012-ի Նոյեմբերին Վիեննայում տեղի ունեցած հանդիպման ժամանակ, որին ներկայ են եղել ԵԱՀԿ Մինսկի խմբի բոլոր անդամները, եւ բոլորն էլ դրական արձագանք են տուել:*

*«Մենք ընդգծեցինք, որ այս ծրագրի նպատակն է խաղաղութեան հեռանկար ստեղծել, որից կը շահեն բոլոր կողմերը», - ասել է թուրքական դիւանագիտական աղբիւրը:*

*Թերթը նաեւ ծրագրի որոշ մանրամասներ է ներկայացնում: Ըստ այդմ՝ այն ունի երկու փուլ. մէկով նախատեսւում է միմեանց կապել Թուրքիան, Հայաստանը, Ադրբեջանն ու Ռուսաստանը՝ կարգի բերելով չօգտագործուող երկաթգծերն ու կառուցելով նորերը: Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծից բացի, որի շինարարութեան աւարտը ակնկալւում է այս տարեվերջին, կարող է բացուել նաեւ հայ-թուրքական երկաթգիծը՝ վերականգնողական ոչ մեծ աշխատանքներից յետոյ: Դրան զուգահեռ նախատեսւում է նաեւ մի նոր, ժամանակակից մայրուղի կառուցել, որն է՛լ աւելի կ՚աշխուժացնի առեւտուրը եւ մարդկանց տեղաշարժը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ:*

*Ծրագրի երկրորդ փուլով նախատեսւում է կապել տարածաշրջանի երկրները Եւրոպայի եւ Ասիայի հետ. «Մարմարի» ծրագրի շահագործումից յետոյ հնարաւոր կը դառնայ տրանսպորտային կապը Լոնդոնի եւ Պեկինի միջեւ, եւ, երբ կարգաւորուի տարածաշրջանի քաղաքական դրութիւնը, Հայաստանը եւս կարող է Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի միջոցով միանալ դէպի Եւրոպա եւ Ասիա ձգուող ճանապարհներին:*

*Թուրքական դիւանագիտական աղբիւրը նշել է, որ Անկարան այս ծրագրի մասին տեղեակ է պահել նաեւ Ադրբեջանի ղեկավարութեանը՝ ընդգծելով, որ դրա իրագործումը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ Հայաստանը քայլեր կը ձեռնարկի խաղաղութեան հասնելու ուղղութեամբ:*

*Միեւնոյն ժամանակ, թուրքական կողմը նշում է, որ Հայաստանը սառն է վերաբերուել այս նախագծին, եւ որեւէ պաշտօնական արձագանք չի փոխանցել Մինսկի խմբի միջոցով: Թուրքական դիւանագիտական աղբիւրը միաժամանակ նշել է, որ վերջին նախագահական ընտրութիւններում Սերժ Սարգսեանի յաղթանակից յետոյ Անկարան Հայաստանի՝ Ղարաբաղի շուրջ քաղաքականութեան մէջ արագ փոփոխութիւն չի ակնկալում:*

*«Մենք չենք սպասում նրանց քաղաքականութեան մէջ էական փոփոխութիւն մինչեւ 2015 թուականը», - ասել է աղբիւրը՝ առանց յաւելեալ մանրամասների:*

## «ԱՄՌԱՆԸ ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԷԻՆՔ ԹՈՅԼ ՉՏԱԼ ՌԱՄԻԼ ՍԱՖԱՐՈՎԻ ԱՐՏԱՅԱՆՁՆՈՒՄԸ»

*Մենք աշխատում ենք, որ Ռամիլ Սաֆարովին՝ հայ սպայ Գուրգէն Մարգարեանին սպաննողին քարշ տանք Հաագայի եւ Ստրասբուրգի դատարաններով: Այդ մասին Փետրուարի 26-ին կայացած մամուլի ասուլիսում յայտարարել է Եւրոպայի հայերի հայկական կազմակերպութիւնների ֆորումի նախագահ Աշոտ Գրիգորեանը:*

*Նա հաւաստիացրել է, որ ժամանակին Սաֆարովի արտայանձնումը հունգարական դատարանի դահլիճից տեղի չունեցաւ շնորհիւ իրենց ֆորումի կատարած աշխատանքի: «Եւ ամռանն էլ կարող էինք թոյլ չտալ յանցագործի արտայանձնումը, սակայն կայ Հայաստանի արտգործնախարարի յստակ հրահանգը՝ չաշխատել մեզ հետ: Բայց, այդուհանդերձ, մեր իրաւաբանները գործի են անցել: Մնում է համոզել զոհուածի հարազատներին, նրանք այժմ հիասթափուած են: Բայց հնարաւորութիւն կայ որպէս փոխհատուցում ահռելի գումարներ ստանալ»,- ասել է Գրիգորեանը:*



*Աշոտ Գրիգորեան*

*Յիշեցնենք, որ 2012թ. Օգոստոսի 31-ին Հունգարիան Ադրբեջանին յանձնեց ցմահ ազատազրկման դատապարտուած Ռամիլ Սաֆարովին, ով 2004թ. կացնահարել էր հայ սպայ Գուրգէն Մարգարեանին: Ադրբեջանում մարդասպանին հերոսի պէս էին ընդունել: Հայաստանը կասեցրել էր դիւանագիտական յարաբերութիւնները Հունգարիայի հետ:*

## ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵՆ

*Շարունակուածէջ 1-էն*

*տութեամբ, մինչդեռ տեղական հասարակական կազմակերպութիւնները յայտարարեցին հակառակը: Արթուր Սաքունցի ըսաւ- «Փետրուարի 18-ին Հայաստանի Հանրապետութիւնում կայացած նախագահական ընտրութիւնները աննախադէպ էինք պաշտօնապէս հրապարակած քուէարկութեան արդիւնքները չեն համապատասխանում իրականութեանը եւ հերթական անգամ ձախողեցին Հայաստանի Հանրապետութիւնում նախագահի լեգիտիմ ինստիտուտի ձեւաւորումը»:*

*Ի տարբերութիւն միջազգային դիտորդներուն, տեղական կազմակերպութիւնները յայտարարեցին, որ ընտրական ողջ գործընթացը ուղեկցուած է իշխանութիւններուն կողմն կազմակերպուած իրաւախախտումներով վարչական միջոցներու լայնածաւալ չարաշահումներով, ընտրակաշառքներու աննախադէպ մեծ ծաւալով, լցոնումներով, բացակայ ընտրողներու փոխարէն քուէարկութեան դէպքերով:*

*«Ընտրական յանձնաժողովների անդամները ուղղակիօրէն են մասնակցել այդ ընտրակեղծիքների ողջ գործընթացին, զուգահեռաբար իրաւապահ մարմինները ըստ էութեան անգործութեան են մատնուած եղել», - յայտարարեց Արթուր Սաքունցը:*

*Տեղական հասարակական կազմակերպութիւնները կը պնդեն, որ ընտրութիւններէն յետոյ ստեղծուած է աննորմալ վիճակ, հանրութեան ներկայացուած են, ըստ իրաւապաշտպան Արթուր Սաքունցի, չինծու թիւեր:*

HayastanInfo.net

massispost.com
daily news updates

# ԷԴՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ. «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԷՏՔ Է ՃԱՆԱՉՈՒԵՆ, ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՆ, ՉՊԷՏՔ Է ՀԱՆԴՈՒՐԺՈՒԻ ԴՐԱՆՑ ԺԽՏՈՒՄԸ»

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանի բացառիկ հարցազրոյցը Աւստրիական լրատուական գործակալութեան հետ

- Պարոն նախարար, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղութիւն հաստատելու ուղղութեամբ գործադրուող ջանքերը տարիներ ի վեր ապարդիւն են: Ի՞նչպէս կարելի է արդիւնքի հասնել այդ բանակցութիւններում:

*- Ադրբեջանը մերժում է ԼՂ հակամարտութեան կարգաւորման միջազգային մանդատ ունեցող Մինսկի խմբի եռանախագահների՝ Ռուսաստանի, Միացեալ Նահանգների եւ Ֆրանսիայի կողմից հակամարտութեան խաղաղ հանգուցալուծման վերաբերեալ բոլոր առաջարկները: Մերժում է նոյնիսկ վստահութեան ամրապնդմանն ուղղուած նախաձեռնութիւնները, այդ թւում գինադադարի ամրապնդման, դիպուկահարների դուրս բերման, հրադադարի խախտումների վերաբերեալ հետաքննութեան մեխանիզմի ստեղծման: Նրանք պատրանք ունեն, որ նաւթից եւ գազից հեշտ ստացուած եկամուտներով իրենք կարող են գնել ամէն ինչ՝ բարեկամներ միջազգային բեմահարթակում, իրենց համար նպաստաւոր լուծումներ: Ինչու մինչ այսօր չի ստացւում կարգաւորման հասնել: Որովհետեւ միջազգային հանրութիւնը եւ Ադրբեջանը խօսում են տարբեր լեզուներով: Այն ժամանակ, երբ մենք հաւաքուել ենք Վիեննայում խթանելու քաղաքակրթութիւնների միջեւ երկխօսութիւնը, Ադրբեջանի եւ միջազգային հանրութեան միջեւ խորանում է քաղաքակրթական անդունդը: Ադրբեջանի բարձրագոյն պաշտօնեաները քարոզում են անհանդուրժողականութիւն, ատելութիւն, քարոզում են պատերազմ, հերոսացնում են ռասիստ մարդասպաններին: Իսկ խաղաղութեան, համերաշխութեան կողմնակիցներին, ինչպէս դա պատահեց ադրբեջանցի գրող Աքրամ Այլիսլիի պարագայում, սպառնում են ականջ կտրել:*

- Արդեօ՞ք ԼՂ հիմնախնդիրը ինչոր ձեւով կախուած չէ նաեւ տարածաշրջանային այնպիսի երկրից, ինչպիսին Թուրքիան է, որը կողմնակալ դիրքորոշում ունի հակամարտութեան վերաբերեալ:

*- Այո, Թուրքիան միակողմանիօրէն պաշտպանում է Ադրբեջանին: Եւ բնականաբար չի կարող միջնորդի դեր խաղալ այս գործընթացում: Եթէ Թուրքիան իսկապէս ցանկութիւն ունի նպաստել խաղաղ կարգաւորմանը, լաւ կը լինէր, որ ընդհանրապէս չխառնուէր այդ գործընթացին: Պատճառը, որ մինչ այսօր հնարաւոր չի եղել հասնել կարգաւորմանը Ադրբեջանի ապակառուցողական եւ մերժողական քաղաքականութիւնն է: Ադրբեջանական կողմը կարծում է, որ ուժի գործադրումը, ռազմական լուծումը կարող է հնարաւոր տարբերակ լինել: Սակայն, իհարկէ, պատերազմը լուծում չէ եւ բանակցային գործընթացին այլընտրանք չկայ:*



- Կարծես, 2009 թ. հայ-թուրքական յարաբերութիւններում կարգաւորման միտումներ կային: Համապատասխան արձանագրութիւններն Անկարայի կողմից չվաւերացուեցին: Ի՞նչն էր ձախողման պատճառը:

*- Մենք համաձայնութեան եկանք: Ցիւրիխում ստորագրուեցին հայ-թուրքական արձանագրութիւնները, սակայն թուրքական կողմը մերժեց վաւերացնել եւ իրականացնել այդ համաձայնութիւնները: Փաստօրէն Թուրքիան մերժում է միջազգային յարաբերութիւնների կարեւորագոյն* pacta sund servanta *սկզբունքը ՝ պայմանաւորուածութիւնները պէտք է յարգուեն: Հայաստանի եւ միջազգային հանրութեան դիրքորոշումը նոյնն է՝ Թուրքիան պէտք է յարգի պայմանաւորուածութիւնները, վաւերացնի եւ իրականացնի արձանագրութիւններն առանց նախապայմանների:*

- Ինչո՞ւ էք Դուք Թուրքիայից պահանջում ճանաչել մօտ 100 տարի առաջ հայերի նկատմամբ իրականացուած Ցեղասպանութիւնը:

*- Այս հարցում մենք պատասխանատուութիւն ենք կրում մարդկութեան առջեւ՝ թոյլ չտալու նոր ցեղասպանութիւնների, մարդկութեան դէմ նոր յանցագործութիւնների կրկնութիւնը: Ցեղասպանութիւնները պէտք է ճանաչուեն, դատապարտուեն, չպէտք է հանդուրժուի դրանց ժխտումը: Սա է ճանապարհը: Դա ոչ միայն հայ ժողովրդի, այլ համայն մարդկութեան խնդիրն է: Սա մարդու հիմնարար իրաւունքների եւ միջազգային իրաւունքի յարգման խնդիր է:*

- Աւստրիան մինչ այսօր Թուրքիայի այդ գործողութիւնները որպէս Ցեղասպանութիւն չի որակել: Հիասթափուա՞ծ էք դրանից:

*- Մենք յուսով ենք, որ Աւստրիան եւս, ինչպէս Եւրոպայի եւ աշխարհի այլ երկրներ, կը ճանաչի այն:*

- Աւստրիայում շատ են հետաքրքրուած կովկասեան տարածաշրջանի էներգետիկ խնդիրներով: Ի՞նչ է նշանակում Նաբուկօ գազատարի նախագիծը Հայաստանի համար:

*- Տարածաշրջանային ծրագրերը կարող են յաջողութիւն ունենալ, եթէ հիմնուեն ներգրաւման, այլ ոչ բացառման սկզբունքի վրայ: Դրանք չեն կարող յաջողութիւն ունենալ, եթէ ուղղուած են որեւէ երկրի դէմ, եթէ ստեղծում են նոր բաժանարար գծեր: Այդ ծրագրերը կարող են յաջողութիւն ունենալ, եթէ դրանց ուղղուածութիւնը ոչ թէ դէմ է, այլ յանուն, եթէ նկատի են առնում բոլոր երկրների շահերը:*

- Կարո՞ղ է Նաբուկոն իր ներկայիս ձեւով վատթարացնել Հայաստանի եւ Ադրբեջանի յարաբերութիւնները:

*- Ես ասացի, այն ինչ ասացի:*

- Ի՞նչ առաջընթաց կայ Եւրոպական միութեան հետ Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցութիւններում:

*- Մենք լաւ առաջընթաց ենք արձանագրել Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցութիւններում, այդ թւում նաեւ Խորը եւ համապարփակ ազատ առեւտրի գօտու ստեղծման վերաբերեալ բանակցութիւններում: Մենք յուսով ենք, որ բանակցութիւնները աւարտին կը հասցնենք մինչեւ Նոյեմբերին կայանալիք Արեւելեան գործընկերութեան Վիլնիւսի գագաթնաժողովը: Դեկտեմբերին մենք Եւրոպայի Միութեան հետ ստորագրեցինք մուտքի արտօնագրային ռեժիմի դիւրացման մասին համաձայնագիրը, Յունուարից ԵՄ քաղաքացիները կարող են Հայաստան այցելել առանց արտօնագրերի: Այս ամէնը ճանապարհ է բացում արտօնագրային ռեժիմի ազատականացման բանակցութիւնների մեկնարկի համար:*

- Փետրուարի կէսին կայացած Հայաստանի նախագահի ընտրութիւնները ԵԱՀԿ դիտորդների գնահատմամբ մեծապէս ազատ եւ արդար են անցել: Սակայն դիտորդները որոշ թերութիւններ են մատնանշել, մասնաւորապէս պետական հաստատութիւնների եւ իշխող կուսակցութեան տարանջատման խնդիրը:

*- Դուք իրաւացի էք, դիտորդները դրական գնահատական են տուել ընտրութիւններին: Նրանք միակարծիք էին, որ ընտրութիւնները կարեւոր քայլ առաջ էին: Արուել են նաեւ առաջարկներ ընտրական գործընթացը կատարելագործելու ուղղութեամբ: Մենք ուշադրութեամբ կ'ուսումնասիրենք արուած առաջարկները, կը ձեռնարկենք բոլոր անհրաժեշտ քայլերը համապատասխան բարեփոխումներ իրականացնելու, մեր ընտրական համակարգն էլ աւելի բարելաւելու ուղղութեամբ:*

*Վերջին տարիներին կարեւոր բարեփոխումներ են իրականացուել Հայաստանում, որոնց արդիւնքում տարածաշրջանի երկրների համեմատութեամբ, մեր երկիրը առաջատար դիրքերում է որոշ միջազգային վարկանիշային աղիւսակներում եւ ցուցիչներում՝ մամուլի ազատութեան, գործարար միջավայրի եւ այլ բնագաւառներում: Եւ մենք վճռական ենք շարունակելու բարեփոխումների ընթացքը:*

ՎԱՐԺՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով Հետաքրքրուողներէն
հեռաձայնել` (626) 398-0506



## ԱԶԳԱՅԻՆ ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

ԱՒԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ

Հակառակ ընդհանրացած այն կարծիքին, որ հայոց պատմութեան ուսուցումը հեշտ եւ դիւրասահ դասաւանդութիւն մըն է, հայոց պատմութեան ուսուցիչը դասարանէն ներս կը գտնուի երկսայրի սուրի մը դէմ յանդիման: Ան եթէ իրապէս խորանայ պատմութեան ծալքերուն եւ մանրամասնութեանց մէջ եւ իր դիմաց տեսնէ անմեղ մանուկներ եւ պատանիներ, որոնք կլանուած պատրաստ են լսելու, սորվելու եւ իւրացնելու իրենց նախահայրերուն անցեալն ու պատմութիւնը, ապա ակամայ պիտի յայտնուի անյարմար եւ դժուարին կացութեան մը մէջ. ինքզինք պիտի նկատէ ծուղակուած ազգային հպարտութեան եւ ազգային խայտառակութեան միջեւ. որովհետեւ՝ հայրենասիրական ոգիին փոխանցումը պիտի Վաղխի ազգային այն իրականութեան դէմ, որ ապրած ենք անցեալին եւ կ՛ապրինք այսօր՝ իր ժխտական բոլոր երեսակներով:

Մանկավարժ եւ գրաքննադատ Գրիգոր Շահինեան իրաւացիօրէն հետեւեալ հաստատումը կ՛ընէ. «Հայ դպրոցը յարակից առաքելութիւն մըն ալ ունի. պատմական դէմքերու եւ դէպքերու ծանօթացումով հայ աշակերտը հասու դարձնել մշակութային այն ժառանգութեան, որ անոր ինքնութիւնը կը պայմանաւորէ» («Հայոց Պատմութեան Դասաւանդումի Կերպ», Անթիլիաս, 2002, էջ 17): Այսինքն՝ պատմութիւն եւ ազգային ինքնութիւն սերտօրէն առնչուած են իրարու: Ան կ՛աւելցնէ. «Մեր սովորութիւնները, հաւատալիքները, խոհալները, ազգային բոլոր արժէքները արտայայտութիւն գտած են պատմական եղելութիւններու մէջ, որոնք ազգին հաւաքական կենդանագիրը կը գծեն, ինչպէս անհատական արարքներն ու խօսքերը անձին բարոյական կերպարը կը դրսեւորեն:

Այս ամէնուն աշակերտը պէտք է հաղորդուի ազգային պատմութեան ընդմէջէն», եւ կ՛եզրակացնէ՝ «Այսինքն գիտակցութիւնը ունենայ իր ազգային ինքնութեան»:

Ազգային ինքնութեան բաղադրիչներէն մէկը, բնականաբար կը հանդիսանայ ազգային հպարտութիւնը (չշփոթել սնապարծութեան հետ, որ տարածուած երեւոյթ մըն է մեր մէջ):

Ցաչս օտար հաւաքականութեան, մարդ պէտք է ճանչնայ իր անցեալն ու մշակութային ժառանգութիւնը, որպէսզի հպարտանայ. հպարտութիւնը պէտք է խարսխուած ըլլայ նախահայրերու կտակած մտաւոր հարստութեան իմացութեան վրայ. ազգային բարձր ոգիի եւ սեփական պատմութեան ծանօթացման վրայ:

2004 Թուականին, երբ կը դասաւանդէի 5-րդ դարու Թարգմանչաց շարժման շուրջ եւ պարտաւոր էի շեշտել, որ հայը կրթօճախներ բացող, ուսումն ու գիտութիւնը սիրող եւ դպրոցի նկատմամբ իւրայատուկ մօտեցում ունեցող ժողովուրդ է եւ պարտինք հպարտանալ այս փաստին դիմաց, պարսկահայ աշակերտուհի մը ըմբերանիչ հարցումով մը գլխ դրաւ ցաւալի իրականութեան առջեւ, ըսելով. «բայց պարոն Ջան, Մելգոնեանը կողպուած են. այս որոշումը առնողները միթէ՞ հայեր չեն»:

Մեր դասագիրքերը յաճախ հերոսականութիւնն ու գաւեշտալի մեծխօսիկութիւնը (ռամիկ արեւելահայերէնով՝ լոփփագութիւն) կը խառնեն գիրար եւ յանկարծ կը կարդաս, որ 500 հայ ռազմիկներ ջախջախած են 10,000-նոց թշնամի բանակ մը. այս տողերուն դիմաց, աշակերտուհի մը խոցող մատնանշում մը ըրաւ, ըսելով. «պարոն, հայոց պատմութիւնը սուտ պատմութիւն է»: Անկեղծօրէն կարկամեցայ. չկրցայ հակափաստել:

Աշակերտին ազգային հպարտութիւն առթելու միտումով եթէ ուզենք օրինակ վերցնել հայ կղերականութեան հերոսական կեցուածքն ու նահատակութենէն չսարսափելու ոգին, յատկապէս Մեծ Եղեռնի օրերուն, եւ բերենք դիպուկ օրինակները Տիարպեքիրի առաջնորդ Տ. Մկրտիչ Վրդ. Չլղաթեանի եւ Ուրֆայի առաջնորդ Տ. Արտաւազդ Ծ. Վրդ. Գալէնտէրեանի, որոնք քստմնեցուցիչ եւ սահմռկեցուցիչ պայմաններու տակ մարտիրոսացան յանուն եկեղեցւոյ ու ազգին, ապա բանիմաց աշակերտը կրնայ կարկել ուսուցիչը՝ հարց տալով՝ միթէ՞ 1933 Դեկտեմբերի 24-ին Նիւ Եորքի մէջ, սուրբ պատարագի ընթացքին դաշունահար սպաննուած Ղեւոնդ Արք. Դուրեանի ոճրագործները «հերոս» հայեր չէին. ոմանց կողմէ նոյնիսկ փառաբանութեան եւ դրուատանքի արժանացած:

Եթէ ուսուցիչը անդրադառնալով Մեծ Եղեռնի ընթացքին ճիշդ Ապրիլ 24-ին հայ մտաւորականութեան հաւաքական ձերբակալութեան, աքսորին եւ կոտորածին, եւ զարմանայ այդքա՜ն հեշտութեամբ ցանկագրումին եւ հասցէներու բացայայտումին, ապա աշակերտը պիտի չըսէ՞, որ այդ հեշտութեան պատասխանատուները հայ լրտեսները, գործակալները եւ դաւաճաններն էին եւ մանաւանդ Օրթագիւղի մուխթար Արթին Մկրտիչեանը, որ հասցէներ տրամադրած էր թուրք ոստիկանութեան:

Նման ստորներ քի՞չ էին արդեօք:

Միւս կողմէ, եթէ անդրադառնանք Իթթիհատ կուսակցութեան բացայայտ հայաջինջ քաղաքականութեան, անոր ցեղասպանութեան ծրագրումին եւ գործադրութեան եւ հպարտութեամբ նշենք, որ շատեր դէմ ելան Իթթիհատին եւ զէնքով ու կեանքի գնով կազմակերպեցին ինքնապաշտպանական մարտեր, ապա իրազեկ աշակերտը պիտի չկրնա՞յ պապանձումի մատնել ուսուցիչը, ըսելով, որ շատ մը հայեր ֆինանսաւորած էին Իթթիհատ կուսակցութեան, անդամ էին անոր եւ ղեկավար պաշտօններ վարած: Այս ինչպիսի՜ քծնող, թշնամիին ծառայող եւ ոտքին խնկարկող տարրեր ունեցած ենք եղեր: Իսկ ուրիշ աշակերտ մը կրնայ մէջբերել Ռուբէն Փաշայի (Տէր Մինասեան) «Հայ-Թրքական Կնճիռը» (Գահիրէ, 1924) գործէն հետեւեալ հատուածը. «Թէ հայ ժողովուրդը եւ թէ նրա ամենաուժեղ կուսակցութիւնը անգնահատելի ծառայութիւններ մատուցին երիտասարդ թուրքերին ե՛ւ

Շար.ը էջ 7

## ՃԱՇԻՑ ՅԵՏՈՅ ԷԼ Ի՛ՆՉ ՄԱՆԱՆԵԽ

ՍԱՄՈՒԷԼ ԿՈՍԵԱՆ

Տեղեկութիւնները, որ Հայաստանը նախատեսում է Սիւնիքի մարզում 50.000 արօտավայր՝ 5-10 տարով, վարձակալութեան տրամադրել Իրանի Արեւելեան Ատրպէյճանին (Արեւելեան Ատրպատական), ապացուցում են անառարկելին, որ մեզանում ինչ-որ բան, այնուամենայնիւ, սխալ է: Երեւոյթն այնքան մանկամիտ ու անտրամաբանական է, որ աւելի զաւեշտի է նմանւում, սակայն իրողութիւնն այն է, որ տեղական կառավարման մարմինների մակարդակով արձանագրութիւններ են կազմուել ու պայմանաւորուածութիւններ ձեռք բերուել: Եւ թէեւ ՀՀ տարածքային կառավարման նախարարութիւնը նշում է, որ «ՀՀ Սիւնիքի մարզի եւ ԻԻՀ Արեւելեան Ատրպատական նահանգի միջեւ իրաւական հետեւանք առաջացնող որեւէ համաձայնագիր կնքուած չէ, եւ «Էկոլուր» հ/կ-ի կողմից հրապարակուած փաստաթղթերը, ըստ էութեան, երկու պատուիրակութիւնների հանդիպման արդիւնքների արձանագրութիւնն են, որոնք անուանուել են «Համաձայնագիր», այդուհանդերձ, փաստ է, որ գործարքն ընթացքի մէջ է եւ ելնելով մեր չինովնիկների տրամադրուածութիւնից՝ ամէն պահի կարող է իրաւական ուժ ստանալ, իր անցանկալի եւ վտանգաւոր հետեւանքներով, այնքան վտանգաւոր, որ նոյնիսկ այդ առուծախի արդիւնքում ենթադրուող բնապահպանական կործանարար վնասներն իսկ երկրորդական են թւում: Խօսքը արօտավայրերի հետ տրուող եւս 2000 հեկտարին է վերաբերում, որը տրամադրուելու է որպէս բնակավայր: Մենք կա՛մ մոռացել, կա՛մ չենք ուզում յիշել՝ ինչ ասել է ազերիներին հող տրամադրել, եւ կարեւոր չէ՝ ինչքան, երբ սցենարը յայտնի է: Գալիս է չոբանը, մի քանի ամիս անց պարզւում է, որ սարի գլխին արդէն համայնք կայ, որն աճում է երկրաչափական պրոգրեսիայով, եւ ամիսներ անց տները յայտնւում են արդէն սարերի լանջերին, այնուհետեւ մղձաւանջն իջնում է հարթավայր: Բազմիցս կրկնուած ու ծանօթ պատմութիւն: Ում ասես կարելի է հողերը վստահել, միայն ոչ նրանց, որովհետեւ ազերիները տեղաւորուելով՝ այլեւս չեն հեռանում: Շարունակութիւնն աւելի մղձաւանջային է: Նախ կը դադարեցնեն վարձակալութեան վարձը վճարել, հետոն էլ ամէնուրէք բողոքելով, որ Հայաստանում ճնշւում են ազգային փոքրամասնութիւններին: Ատրպէճանն ու Թուրքիան էլ կ՛անեն հնարաւորը, որպէսզի միջազգային կազմակերպութիւններում հնչի նրանց ձայնը եւ նրանց համար արտօնեալ պայմաններ ապահովուեն: Միջազգային կազմակերպութիւններն էլ, սովորականի պէս, առանց թացը չորից ջոկելու, սկսելու են հազար ու մի բանաձեւ ընդունել՝ մեղադրելով հայերին եւ պաշտպանելով ազերիների ապօրինի պահանջները: Մանաւանդ որ, վստահաբար, այդ ուղղութեամբ են աշխատելու նաեւ Պաքուի նաւթադոլարները: Այս ամբողջը եղել է, այս ամբողջը տեսել ենք, եւ եթէ չլինէր Ղարաբաղեան շարժումը, հաւանաբար արդէն մօտ ապագայում մեր խորհրդարանը ոչ թէ Ազգային ժողով, այլ մէջլիս էր կոչուելու: Թուրքերը երբեք չեն հրաժարուել իրենց ժողովրդագրական էքսպանսիայից եւ դա իրականացնելու համար օգտագործելու են ամենափոքր առիթն իսկ: Ո՞վ կարող է երաշխաւորել, որ Իրանի անձնագրերով Սիւնիք չեն մտնելու Թուրքիայի եւ Ատրպէյճանի յատուկ ծառայութեան ուժերը, հետախոյզները ու, Աստուած գիտի, էլի ինչ տականքներ: Պարզւում է, եթէ զէնքով հնարաւոր չէ, ապա մեր դիմադրութեան սուր կողմերը կարելի է դոլարներով հարթել: Այս գործարքի ձեռագիրն, իրօք, շատ ազերիական է, եւ հնարաւոր է, որ ամենաշահագրգռուած կողմը հէնց Պաքուն լինի: Եւ զուր է ՀՀ արդարադատութեան նախարարը յորդորում իրադարձութիւններից առաջ չանցնել. «Չեղած բաների մասին չխօսենք, երբ կը լինի, այդ ժամանակ էլ կը խօսենք այս ամբողջ պրոցեսներից»: Սակայն ծուխն առանց կրակի չի լինում: ՀՀ -ում Իրանի դեսպանը նոյնպէս չժխտեց, որ այդ հարցով բանակցութիւններ, իրօք, տարւում են, եւ նախաձեռնողն էլ իրանական կողմն է: Նշանակում է՝ ամէն ինչ օրակարգի մէջ է, եւ ինչպէս յաճախ է պատահում, ենթադրելի է, որ այս պայմանագիրն էլ հանրութեանն արդէն եղած փաստի առաջ կանգնեցնի: Եւ այդ ժամ, ոչ միայն ուշ, այլեւ անիմաստ կը դառնայ խօսելը, որովհետեւ խնդրի ճակատագիրը տնտեսականից քաղաքական ոլորտ տեղափոխուելուց յետոյ, քանիցս դժուարանալու եւ սահմանափակուելու են մեր հակագործողութիւնները: Այնպէս որ, հիմա է խօսելու ժամանակը, եթէ ուզում ենք այդ հակապետական գործողութեան դէմն առնել:

Այլապէս, ոնց որ ռուսը կ՛ասէր. «Ճաշից յետոյ էլ ի՛նչ մանանեխ»:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## ԿԻԼԻԿԵԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿԱՅԻՆ ՆԱԽԱՃԱՇԸ

*Կիրակի, Փետրուարի 24ին, 2013, Հալէպի Կիլիկեան Ճեմարանի նախկին սաները, իրենց կազմակերպած Բարեսիրական Միութեան անունով Հանգանակային նախաճաշ մը կազմակերպած էին ի նպաստ իրենց աղէտահար հաստատութեան:*

*Փասատինայի Ռաֆֆի ճաշարանին մէջ տեղի ունեցած սոյն միջոցառումին ներկայ էին Հալէպի Կիլիկեան Ճեմարանի շրջանաւարտներն ու նախկին սան-սանուհիները: Սոյն նախաձեռնութիւնը քաջալերելու եկած էին նաեւ Ս.Դ.Հ.Կ.ի ինչպէս նաեւ քոյր կազմակերպութեանց ղեկավարներն ու համակիրները: Բոլորի մօտ կար նոյն բարի ցանկութիւնը՝ սատարել հալէպահայութեան, իրենց այս ճգնաժամային եւ օրհասական օրերուն, մասնաւորաբար իրենց սիրելի Կիլիկեան ճեմարանին:*

*Կիլիկեան բարեսիրական Միութեան վարչութեան ատենապետ՝ Տիգրան Սարգիսեան իր բարի գալուստի խօսքին մէջ կանխաւ շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն եւ մաղթեց շուտափոյթ խաղաղութիւն Սուրիոյ արաբական հանրապետութեան, որպէսզի տեղւոյն ժողովուրդը վերագտնէ իր նախկին անդորրութիւնն ու բարօր կեանքը:*

*Կիլիկեանի քայլերգի խմբային երգեցողութենէն ետք տեղի ունեցաւ նախաճաշի սպասարկութիւնը՝ ֆուլկերոյթ:*

*Այնուհետեւ սրտի խօսքով հանդէս եկաւ վաստակաշատ կիլիկեանցի Տիկ. Ժօժենի Պարսումեան: Ան կոչ ուղղեց ներկաներուն գործնապէս սատարել մեր հայրենակիցներուն, որոնք անյապաղ օժանդակութեան կը կարօտին, դուրս գալու իրենց այս տագնապալի վիճակէն:*

*Օրուան պատշաճ ասմունքով ելոյթ ունեցաւ Ագնիւ Թարխանեան-Ագաճլեան:*

*Տեղւոյն վրայ կատարուեցան սրտաբուխ նուիրատուութիւններ եւ դրամական խոստումներ, ի նպաստ Հալէպի Կիլիկեան ճեմարանին:*

*Գնահատելի ձեռնարկ մըն էր: Կ՛իմանանք, թէ պատասխանատուները յառաջիկային եւս պիտի կազմակերպեն նման միջոցառումներ ի նպաստ սուրիահայ մեր հայրենակիցներուն:*

## ԵՐԵՔ ՀԱՅ ԿԻԹԱՌԻՍՏՆԵՐՈՒ ՀԱՄԵՐԳԸ ARMENIAN PUBLIC RADIO




*Շաբաթ, Փետրուարի 23, 2013, երեկոյեան ժամը 7:30ին, Լոս Անճելոսի Փօլ Կեթթի մշակութային համալիրի Հերըլտ Ուիլիամս հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ իր տեսակին մէջ եզակի համերգ մը: Արդարեւ Armenian Public Radio անուան տակ կազմակերպուած սոյն համերգը մեծ շփոթ մը ստեղծած էր ներկաներէն շատերուն մօտ: Ոմանք կը կարծէին թէ Հայաստանի Հանրային ռատիոկայանի մէկ նուագախումբն էր որ ելոյթ պիտի ունենար...: Սակայն մեծ եղաւ զարմանքը, երբ բեմին վրայ յայտնուեցան երեք կիթառիստ երիտասարդներ՝ Մհեր-Վահագն Աճեմեան, Ռիան Տէմիրճեան եւ Սարօ Գուժազեան:*

*Վերոյիշեալ եռեակի շնորհալի անդամները՝ իրենց երգ ու նուագով, շուրջ մէկ ու կէս ժամ մեզի հրամցուցին զուտ հայկական ժողովրդային երգերէ բաղկացած գողտրիկ ծաղկեփունջ մը, ուր առկայ էին առաւելաբար սիրային եւ հայրենական գործեր:*

*Բազմահարիւր հանդիսականները մեծ հետաքրքրութեամբ հետեւեցան երգ ու նուագի կատարումներուն: Ուշագրաւ էին զուգերգերը յօրինուած ժամանակակից հայ երգահաններու կողմէ: Միայն վերջինը՝ ամերիկեան հայրենասիրական երգ մըն էր (This land is your land) առ ի երախտագիտութիւն մեր հիւրընկալ երկրին:*

*Կը շնորհաւորենք երիտասարդ կիթառիստները, կը յուսանք տեսնել նորանոր յաջողութիւններ հայ երգը սփիւռքի մէջ տարածելու իրենց ինքնատիպ մատուցման ձեւին մէջ:*

*Բարի երթ եւ աւելի բարձրորակ կատարումներով նոր ծրագիրներու իրագործումներ այս եռեակին:*

*Գ.Մ.*

## ԱԶԳԱՅԻՆ ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

*Շարունակուած էջ 6-էն*

*յեղափոխական շարժումների օրերին ե՛ւ սահմանադրութեան հրատարակման ու կիրառման ժամանակ. սակայն այդ բոլորի փոխարէն՝ անարգօրէն դաւադրուած գտան իրենց: Ի պատասխան այդ խոշոր ծառայութեանց՝ Ատանայի հայկական կոտորածները տեղի ունեցան»: Ինչ հակասութիւն յեղափոխական պոռոտախօսութեան եւ այս խոստովանութեան միջեւ: «Անգնահատելի ծառայութիւններ մատուցած» մարդիկ ոչ խպնեցան եւ ոչ ալ պատմութեան դատաստանին ներկայացան:*

*Ինքնին հպարտաւիթ երեւոյթ է Սարդարապատն ու 1918-ի մայիսեան մարտերը Թրքական արշաւող բանակներուն դէմ. ինչպիսի՜ դիւցազնական խոյանքներ, որոնք կասեցուցին Թրքական եաթաղանին սպառնալիքը եւ ապահովեցին այժմու Հայաստանին գոյութիւնը:*

*Սակայն ի՞նչ պատմել 1920-ի Կարսի անկման խայտառակ եւ ամօթալի իրողութեան մասին. դասալքութեան եւ պարտուողականութեան ինչ վարկաբեկիչ փաստեր կան հոն: Ահա Գէորգ Եազըճեանի գիրքէն. «Քարապեքիրի մօտ կային ուրացող հայազգի տականքներ, այդ թւում՝ նախկինում հայ կաթոլիկ եւ հայ առաքելական եկեղեցիների մի վարդապետ, որը մահմետականութիւն էր ընդունել եւ Քարապեքիրի առանձին թարգմանն էր դարձել, մի «հրէշ հայ դաշւաճան», որը «չարագործ ոստիկանի պաշտօն էր կատարում»» ( Գէորգ Եազըճեան «Կարսի 1920 թ. Անկման Խորքային Պատճառները»):*

*Սա է իրականութիւնը. ազգային հպարտութեան ոչնչութիւնը, փուչիկութիւնը:*

*Ի հարկէ պիտի խօսինք 1605-ի Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթի մասին: 1915-ի արեւմտահայութեան գաղթի մասին եւ ապա պարծենանք նաեւ 1946-47 թուականներու ներգաղթով, երբ Հայաստանը իր տարագիր ու աշխարհասփիւռ զաւակները կը համախմբէր կռունկի հայրենակարօտ կանչով: Հայը վերջապէս կը վերադառնար իր ապահով եւ հօրենական երկիրը, սուրբ օճախը: Ինչ հպարտութիւն այդ օրերուն: Բայց աչակերտները այսօրուան իրականութեան մասին պիտի չհարցնե՞ն: Անկախութենէն ետք աւելի քան մէկ միլիոն հայ լքեց հայրենի սուրբ օճախը, ցրուեցան աստ ու անդ՝ մոռնալով հայրենականչին եւ հողի կարօտին նուիրական պատգամները: Հիմա ոչ Շահ Աբաս կայ, ոչ Թալաաթ Փաշա եւ ոչ Քարապեքիր կայ: Հա՛յը ստիպեց հայուն լքել իր երկիրը: Ինչ սարսափելի իրակա-նութիւն:*

*Մտադրած եմ օր մը մէկտեղել մեր մեծերուն եւ հեղինակներուն կարծիքները հայու մասին, հայու լուսաւոր եւ տգեղ երեսակներու մասին:*

*Թէ ինչպէս հայեր հալածած են հայոց եւ ազնիւ հայոց: Թող Թումանեանէն մինչեւ Տէրեան, Զարենցէն մինչեւ Ղ. Աղայեան ու Շահնուր խօսին իրենց դառն եւ լեղի փորձառութենէն:*

*Այո, մինչ մենք կը փորձենք ազգային հպարտութեամբ ուռիլ, առլցուիլ եւ պարծենալ՝ կեանքն ու փաստը, հայու գարշելի տեսակը իր սեւ գործը կատարելով մեզի կը դնէ իրակա-նութեան առջեւ, որ ոչ թէ ամօթի, այլ ինքնազզուանքի զգացում մը կը ստեղծէ ակամայ:*

*Գրագէտ Նշան Պեշիկթաշլեան «Հայը« գրութեամբ կ՛ընդգծէ. «Ելի՛ր ու կ՛ընդունիս իր ոտքը կամ իր նախանձէն եկող կիցը. որ սակայն ազգօգուտ է, որովհետեւ կը մարզէ քեզ եւ պատճառ կ՛ըլլայ որ պինդ կենաս ու ա՛լ չիյնաս»:*

*Այս կիցէն ճաշակած եմ մի քանի անգամ:*

*Տարըսը յաջորդին:*



# «ԿԻԼԻԿԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆՆ ԱՐԴԱՐԱՑՐԵԼ Է ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ



Երեւանում սիրիահայ երեխաների համար հիմնուած «Կիլիկեան» վարժարանն արդարացնում է սիրիահայերի սպասելիքները: «Արմէնպրես»-ի հետ զրոյցում վարժարանի տնօրէն Նորա Փիլիպոսեանը, ով եղել է Հալէպում «Կիլիկեան» վարժարանի ուսուցչուհի, դպրոցը Հայաստանում վերաբացելը լաւ գաղափար համարեց: «Այս հարցով շատ աշխատանք տարանք եւ արեցինք ամէն ինչ, որ հիմնուի այս դպրոցը: Մեզ ֆինանսաւորեցին «Կիլիկեան» բարեսիրական ընկերութիւնը եւ Հնչակեան կուսակցութիւնը: Աջակցութիւն ցուցաբերեցին նաեւ ՀՀ սփիւռքի, Կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնները եւ Երեւանի



Նորա Փիլիպոսեան

քաղաքապետարանը,-ընդգծեց Փիլիպոսեանը: Դպրոցում դասապրոցեսն ընթանում է սիրիական ծրագրով: Դասաւանդուող առարկաների թւում են՝ արաբերէնը, անգլերէնը, ֆրանսերէնը, արեւմտահայերէնը: «Դպրոցն անհրաժեշտութիւն էր սիրահայ այն աշակերտների համար, ովքեր Հալէպում արդէն սովորում էին հայկական պրոցներում եւ նոյն ծրագրով կրթութիւն ստանալու կարիքն զգում էին նաեւ Հայաստանում»,-ասում է վարժարանի տնօրէնը:

«Կիլիկեան» վարժարանում աշխատում են Սիրիայից եկած փորձառու մասնագէտներ, ովքեր ընդունուել են նախօրօք ներկայացրած դիմումների համաձայն: Տնօրէնը վստահեցնում է, որ ընտրուել են լաւագոյնները: «Ի վերջոյ, սերունդ ենք դաստիարակում, ուստի ընտրեցինք փորձառու ուսուցիչների: Փառք Աստծոյ, ամէն ինչ լաւ ստացուեց»,-ուրախութեամբ նշեց Փիլիպոսեանը:

Վարժարանում սովորում է 1-9-րդ դասարանի շուրջ 300 աշակերտ, իսկ 9-րդ դասարանից բարձր սովորող աշակերտները ուսումը շարունակում են երեւանեան դպրոցներում:

Նորա Փիլիպոսեանը վստահ չէ, որ մշտական բնակութիւն կը հաստատի Երեւանում: Կարծում է, որ Սիրիայում ամէն ինչ կարգաւորուելուց յետոյ կը վերադառնայ Հալէպ, քանի որ այնտեղ է իրենց տունը, աշխատանքը, այնտեղ են հարազատները: «Ի վերջոյ այնտեղ է մեր ծննդավայրը, մեր երկար տարիների կուտակած աշխատանքը, Հալէպում անցել է մեր մանկութիւնը եւ կեանքի մեծ մասը»,-ցաւով նշում է նա:

Սիրիահայ ծնողները եւս գոհ են դպրոցից: Նրանք ուրախութեամբ են ընդունել դպրոցի վերաբացման լուրը: «Իմ աղջիկը սովորում է «Կիլիկեան» վարժարանում: Ընտրեցինք այդ դպրոցը, որպէսզի աւելի հեշտ լինի նրա համար, մենք էլ կը կարողանանք օգնել, իսկ հայկական դպրոցում սովորելը բարդ կը լինէր, քանի որ այնտեղ արեւելահայերէն են անցնում, մենք տիրապետում ենք արեւմտահայերէնին»,-ասաց Նայիրի Բաղդասարեանը:

Անդրանիկ Կանաջեանն ու Պօղոս Սարգսեան նիրենց երեխաների կրթութեան համար ընտրել են հայկական դպրոցները, քանի որ որոշել են մշտապէս բնակուել Երեւանում:

Սիրիայի Հալէպ քաղաքում գտնուող «Կիլիկեան» վարժարանի ուսուցչուհի, իսկ այժմ Երեւանի նոյնանուն վարժարանի տնօրէն Նորա Փիլիպպոսյանն ամուսնը զբօսաշրջիկի կարգավիճակով Հայաստան գալուց յետոյ որոշեց մնալ եւ բնակութիւն հաստատել Երեւանում: Սիրիահայ կինն աստիճանաբար յարմարւում է նոր կեանքին ու միջավայրին: «Անխօս, սկզբում շատ դժուար էր, յետոյ երբ ընտանիքս միացաւ ինձ, ամէն ինչ աստիճանաբար հեշտացաւ»,-ասաց Նորա Փիլիպպոսյանը:

Սիրիայում պատերազմական գործողութիւններով պայմանաւորուած Հայաստանում հաստատուել է շուրջ 6500 սիրիահայ, որոնց մեծ մասը ապահովուած են բնակարաններով: Յատուկ սիրիահայ երեխաների համար դպրոց է բացուել: Հայրենիքում ապաստանած մեծ թուով սիրիահայեր այս ընթացքում ապահովուել են աշխատանքով:

ԱՐՄԷՆՊՐԵՍ

www.massisweekly.com

# ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ



Փետրուարի 19-21-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցաւ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի ժողով ընդլայնուած կազմով: Ժողովի սկզբում Վեհափառ Հայրապետն իր օրհնութիւնն ու գնահատանքը բերեց ՀԽ անդամներին՝ իրենց օգտակար ծառայութեան համար:

ԳՀԽ նիստերը նախագահեցին Երուսաղէմի հայոց պատրիարքական տեղապահ Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանեանը եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքական փոխանորդ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթէշեանը: Ժողովում քննութեան առնուեցին նուիրապետական աթոռներին եւ թեմական կեանքին, Եկեղեցու հոգեւոր-կրթական, քարոզչական առաքելութեանը, կանոնադրական ու ծիսական հարցերին վերաբերող մի շարք խնդիրներ:

Երուսաղէմի պատրիարքութեան ընթացիկ գործունէութեան վերաբերեալ զեկոյց ներկայացրեց Երուսաղէմի հայոց պատրիարքական տեղապահ Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանեանը՝ մասնաւորաբար անդրադառնալով Երուսաղէմի հայոց պատրիարքի ընտրութեանը եւ տեղեկացնելով, որ նորընտիր պատրիարք Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանի ընտրութեան վաւերացման դիմումներն արդէն իսկ ուղարկուել են Պաղեստինի եւ Յորդանանի իշխանութիւններին եւ մօտ ժամանակներս սպասւում է նրանց վաւերացումը: ՀԽ անդամները գոհունակութեամբ ընդունեցին զեկոյցը՝ վերստին շնորհաւորելով նորընտիր պատրիարքին եւ մաղթելով, որ Տէրը զօրացնի նրան՝ իր ջանքերով առաւել պայծառացնելու պատմական Ս. Աթոռը: Կ. Պոլսի Հայոց պատրիարքութեան վերաբերեալ զեկոյցով հանդէս եկաւ Կ. Պոլսի հայոց պատրիարքական փոխանորդ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթէշեանը: Փոխանորդ Սրբազանը նշեց, որ Կ. Պոլսի պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանի առողջական վիճակը շարունակում է մնալ ծանր եւ նա գտնւում է բժիշկների մշտական խնամքի ներքոյ: Արամ Սրբազանը նաեւ մասնաւոր անդրադարձ ունեցաւ Թուրքիայում հայոց սրբավայրերի պահպանութեան եւ վերադարձման խնդիրներին: Ի գիտութիւն ընդունելով զեկոյցը՝ ՀԽ անդամները Տիրոջ զօրակցութիւնը հայցեցին Ամենապատիւ

Շար.ը էջ 18

Yoga for Health

Introduce your Body to your Brain
they might like each other

Please Join us Every Tuesday and Thursday, starting February 5th, from 7:15pm to 8:30pm and learn how to manage your:

MigraineFatigue
Back pain
Stress/Anxiety
Irregular heartbeat
Constipation
Depression
Body Fat
Sex Drive
Wrinkles
Blood Circulation
Insomnia

Location: 1060 N Allen, Pasadena CA 91107
For more Information, Please contact
"Tina Vartabetian" at (818) 720-0277

1st Month Free

# Massis Weekly

Volume 33, No. 7 — Saturday, MARCH 2, 2013


## CEC Officially Declared Sarkisian Election Winner
## Hovannisian Rejects the Results Will Continue Protest Campaign
### University Students Join Opposition Protests Against Elections

YEREVAN -- President Serzh Sarkisian was formally declared the winner of Armenia's February 18 presidential election on Monday amid continuing opposition protests against the official vote results.

The Central Election Commission (CEC) approved and released the final results that show Sarkisian winning 58.6 percent of the vote. His main challenger, Raffi Hovannisian, finished second with 36.8 percent, followed by another opposition candidate, Hrant Bagratian (2.2 percent), according to the CEC.

The figures are practically identical with the CEC's preliminary vote tally released on February 19. Hovannisian rejected it as fraudulent, saying that he is the rightful winner of the election. He also launched a nationwide campaign of anti-government rallies to demand a rerun of the vote.

The CEC's pro-government chairman, Tigran Mukuchian, again rejected fraud allegations at a news conference that followed the publication of the final results. He insisted that irregularities reported by observers and opposition proxies were not serious enough to affect the election outcome.

Mukuchain said Sarkisian would still have had enough votes to secure reelection outright even if the CEC had accepted Hovannisian's demands to invalidate official vote results in 118 precincts. There are about 2,000 such precincts across Armenia.



Raffi Hovannisian rallies thousands of supporters in Gyumri

Hovannisian, meanwhile, maintained that he is the rightful winner of the ballot, denouncing the CEC decision as illegal. "CEC members must be brought to responsibility in the strictest way for their clearly unlawful and antidemocratic behavior. Possessing the entire information, they have done nothing, and, therefore, they must bear responsibility for that," emphasized Hovannisian at a press conference held shortly after the announcement by the election body.

Hovannisian also announced that he is likely to ask the Constitutional Court to scrap the official figures and call a repeat election. "I will do everything to ensure that the people are not disappointed and don't back away," he said. "And I don't exclude that before we will appeal to the Constitutional Court the March 2 [legal] deadline."

The U.S.-born oppositionist, who had served as Armenia's first foreign minister, pledged to continue his nationwide protests at a rally held in Yerevan's Liberty Square on Sunday. He told several thousand people demonstrating there that he will tour three more Armenian provinces this week before staging a massive "national rally" in the capital on Thursday. He earlier urged supporters to prepare for a "pro-

**Continued on page 3**

## Secretary of State John Kerry Congratulates Sarkisian on his Reelection

WASHINGTON, DC -- U.S. Secretary of State John Kerry congratulated President Serzh Sarkisian on Monday on his victory in a disputed presidential election, saying that the United States expects to deepen ties with Armenia during his second term.

"I agree with the OSCE/ODIHR preliminary findings that the elections were generally well-administered and characterized by a respect for fundamental freedoms, but there is work that remains to be done," Kerry wrote in a letter released by Sarkisian's press service. "Moving forward, I hope Armenia will continue to increase transparency, promote multiple viewpoints in the mainstream media, and encourage citizens' active participation in reforms and governance, as well as address the outstanding electoral issues raised by the OSCE."

"During your second term, I hope that the United States and Armenia can work together to pursue the democratic and economic reforms critical to increased bilateral trade and investment," he said.

Kerry also urged Sarkisian to continue giving "full support" to international efforts to resolve the Nagorno-Karabakh conflict spearheaded by the U.S., Russia and France. "We cannot be satisfied with the status quo: we must seize this moment to pursue meaningful progress in the peace process," he said.

## French MP Valerie Boyer: I Will Never Visit Turkey Again

PARIS -- French MP, author of the bill criminalizing the denial of the Armenian Genocide, Valerie Boyer said she will never visit Turkey because of threats she receives, Turkish Milliyet reports.

This year she presented two bills one of them relating to criminalizing the denial of the Armenian Genocide, the other offers creation of a commission to investigate the decision of the French Constitutional Council to recognize the bill unconstitutional.

She said the Turkish government has disrespected her and threatened. She said there are many videos in YouTube containing bad words and disrespect in her address.

"I am glad I do not understand Turkish. But my family and I have received threats in French, I was forced to live under police protection for a while. I am deputy head of Armenian-French friendship group. I will continue my fight for punishing the denial of the Armenian Genocide," she said.



French MP Valerie Boyer

The French MP said she previously visited Turkey but now she does not want as she will endanger her life there. Boyer said even if the Turkish government promises to guarantee her safety she will not take the risk.

"The government did not kill Hrant Dink, while it is not known who did it," she said, adding that besides threats she is also receiving supportive messages from Turkey.

"There are still people in Turkey who believe in human rights," she said.

## Rep. Schiff Congratulates Nagorno Karabakh on 25th Anniversary of National Liberation





WASHINGTON, DC -- Rep. Adam Schiff (D-CA) has sent a letter to the President of the Nagorno Karabakh Republic Bako Sahakian congratulating the people of Artsakh on the 25th anniversary of the National-Liberation Movement. In the letter, Rep. Schiff praises the Karabakh people's courage as they pursue freedom and self-determination in the face of unremitting threats by Azerbaijan.

The full letter from Schiff is below:

Dear Mr. President:

I am writing to congratulate you, the people and government of the Nagorno Karabakh Republic on the 25th anniversary of the national liberation movement. A quarter century ago the people of Artsakh raised their voices for freedom and dignity and against Soviet communism and ethnic intolerance.

Artsakh's path forward has not been easy and it is a tribute to you and your people that the trials of the past did not break your will and determination. The tragedy of Sumgait and other

**Continued on page 3**

# The White House Rejects Issuing a Proclamation on Khojalu

WASHINGTON, DC -- Azerbaijan and Turkey have got a clear message to temper their ambitions as the White House issued a statement on behalf of the president declining to commemorate the so-called massacre in Khojalu.

Moreover, the Obama administration also said that the events in which the Azeri side claims Armenians were responsible for many civilian deaths were connected with military operations – another reminder to Azerbaijan that the Karabakh conflict cannot be resolved by force.

"While we will not be issuing a Presidential Proclamation, the United States deeply regrets the tragic losses of life in the war between Azerbaijan and Armenia. It reminds us that there cannot be a military solution to the Nagorno Karabakh conflict, and that only a lasting and peaceful settlement can bring stability, prosperity, and reconciliation to the region. As a Co-Chair of the Minsk Group, the United States remains firmly committed to working with all sides to achieve peace," the statement reads.

Azerbaijani activists had run two petitions on the White House website, gathering more than 120,000 votes in their support. The petitions called for the recognition of the 1992 events near the village of Khojalu in Karabakh and also for a U.S. presidential statement on February 26 – the day that marks the tragedy.

The White House response rejected the Azeri propaganda, which has spent millions of dollars on the dissemination of information about the events in Khojalu. And while in some cities and states it still became possible for the Azeri side to hold some events, even in parliaments, then in other places, like in Moscow, authorities banned such arrangements. The White House statement proved a final blow to the efforts of Azerbaijan to make Khojalu a factor in the ongoing settlement of the protracted dispute and a general attitude towards Armenia as a state and nation.

Meanwhile, during these days the Armenian nation also remembers the victims of the 1988 Sumgait pogroms, which were the reaction of Azeri nationalists to Karabakh Armenians' demands for reunification with Armenia and set the armed conflict going. In many countries local Armenian communities organize events timed to the anniversary of the Sumgait tragedy. But this isn't the "answer" of Armenians to intensified Azeri efforts for Khajalu. Recent days have seen another remarkable event in this regard.

On Tuesday, a parliamentary group of friendship with Karabakh was set up in the Seimas of Lithuania. This can be considered as the first diplomatic victory for the new Foreign Minister of Karabakh, Karen Mirzoyan, who was in Lithuania on the day of the group's establishment. Lithuania is a member of the European Union and NATO, and the establishment of friendship with Karabakh in the top legislative body of this Baltic nation is viewed by many within the context of early signs of a future recognition of the second Armenian state's independence.

More active efforts of Turkey and Azerbaijan on Khojalu can also be regarded as reaction to the world community's increasing inclination to recognizing the right of the Armenian people to material and territorial claims to Turkey in view of the approaching Armenian Genocide centennial. Turkey is waiting for what Obama and Armenian lobbyists in the United States might do when the 100th anniversary of the Armenian Genocide is commemorated in 2015.

# Armenian, Azeri Defense Chiefs Discuss Border Skirmishes

BRUSSELS -- The defense ministers of Armenia and Azerbaijan reportedly discussed an apparent upsurge in ceasefire violations along the border between the two countries during a rare conversation on Friday.

Seyran Ohanian and Safar Abiyev briefly spoke to each other on the sidelines of a meeting in Brussels of top defense officials from countries participating in the NATO-led military mission in Afghanistan.

According to the Armenian Defense Ministry, Ohanian urged the Azerbaijani side to honor the ceasefire regime and thus minimize casualties on both sides.

The Azerbaijani military issued no official statements on the conversation. Instead, Azerbaijani news agencies claimed that Ohanian "asked for truce" because of "big losses" suffered by Armenian forces in recent days.

A statement by the Defense Ministry in Yerevan brushed aside that claim. "As always, Azerbaijan is trying to present what is desirable for it as reality," it said. "The Armenian side has made no secret of the fact that ceasefire violations are unacceptable to it and on various occasions urged the Azerbaijani side not to violate the ceasefire regime. We are talking about losses suffered not only by the Armenian side but mutual losses."

Ohanian and Abiyev talked the day after both sides reported fresh skirmishes at a western section of the Armenian-Azerbaijani frontier. Ceasefire violations in the area appear to have become more frequent in recent weeks.

Azerbaijani forces reportedly opened fire from automatic weapons at several border villages in Armenia's northeastern Tavush province on Thursday evening. The mayors of two of those villages told RFE/RL's Armenian service (Azatutyun.am) by phone that local residents again had to take cover in their basements. They said the gunshots damaged more houses.

News reports from Baku, meanwhile, said Armenian army units shot at two nearby Azerbaijani villages.

# Decision 2013: Student Factor in Post-Election Standoff; Study v Boycott



**By Gohar Abrahamyan**
**ArmeniaNow.com**

Calls for boycotting classes over "rigged" elections that have been made by some students since Monday and the general activity of student groups in recent days have elicited mixed reactions from representatives of different political forces.

Some have condemned such behavior, while others have backed student rights to actively express their political views.

Students disgruntled at the conduct of the February 18 presidential election and mostly supporting opposition candidate Raffi Hovannisian declared an open-ended boycott of classes on February 25, demanding a re-run of what they claim was a rigged election.

Students, among whom are also young activists affiliated with Hovannisian's Heritage Party, have been going from university to university, urging others to join their action.

In doing so the student groups have met with resistance from police, university administrations, lecturers as well as some students who are against "disrupting the education process" over political matters. Some lecturers and university leaders have cited the statement of the Ministry of Education and Science according to which "political activities and propaganda within the premises of educational institutions is prohibited by law."

Assistant to the rector at Yerevan State University Gevorg Melkonyan, who also heads the Union of Young University Students and is a member of the ruling Republican Party, has been explaining to students that this is not a nationwide movement, but rather a political movement, and students should not be joining it.

"Yerevan State University stood up once, in 1988, when Karabakh was at stake, and God forbid, if tomorrow there will be this problem again, the university, all of us will again rise. This isn't the Artsakh issue now, this is not a national issue," explained Melkonyan.

Meanwhile, most members of student councils of Armenia's state-run universities are also members of the ruling party, a circumstance making student life 'politicized' per se.

In general, it appears the ruling party has also been using extensively the resource of students for its own political purposes.

Political analyst Levon Shirinyan reminds of "organized" student actions near embassies of foreign states, for example, of France, in 2011, to say "thank you" for criminalizing genocide denial at a legislative level, which eventually, however, was not upheld by the highest court.

Students have also been used en masse for supporting the ruling party's campaigns, including during this year's presidential election and last year's parliamentary polls.

As many as 150 students, most of them aged 18-22, were badly injured in an accident at a campaign rally of the Republican Party in May 2012 when air balloons filled with flammable gas exploded. None of the organizers has been punished for obvious negligence of safety rules resulting in a tragedy.

"If society is getting politicized, how can students remain aloof? They are part of the country and have attitudes of their own," said Shirinyan, who himself is a university lecturer.

Ethnographer Hranush Kharatyan says that it is only natural that all political parties should be trying to politicize young people and shape their own youth wings with which to implement their programs.

"Students should decide themselves whether they want to become politically active or not. They are adults, they have their own positions and the right to express their positions," said Kharatyan, reminding that students played a key role in forming political thought in Europe in the 1960s.

The ethnographer also remembers the 1988 Karabakh movement, in which students also played a key role.

"At that time, too, lecturers and university administrations told students that they were wrong in getting involved in ongoing political processes and that their duty was to study," said Kharatyan, adding that since independence students in Armenia have also been quite active in political process, especially in post-election developments.

Հայ news am

# Edward Nalbandian: Civilizational Abyss Between Azerbaijan and International Community is Deepening

Minister of Foreign Affairs of Armenian Republic Edward Nalbandian has given an exclusive interview to the Austrian news agency. Following is the full text of interview.

**- Mr. Minister, efforts aimed at establishment of peace between Armenia and Azerbaijan made during years have been in vain. How one can reach a result in those negotiations?**

- Azerbaijan refuses all suggestions of Minsk group Co-Chairs, Russia, USA and France regarding the peaceful resolution of Nagorno-Karabakh conflict. It refuses even initiations aimed at trust strengthening, including strengthening of ceasefire, withdrawal of snipers and creation of investigation mechanism on the violation of ceasefire. They have an illusion that with the help of revenues from petrol and gas they can buy everything: friends on international arena and beneficial resolutions for them. Why the settlement process hasn't succeeded till now. Because international community and Azerbaijan speak different languages. While we have gathered in Vienna to promote the dialogue between civilizations, civilizational abyss between Azerbaijan and international community is deepening. Higher officials of Azerbaijan propagate intolerance, hatred, war and proclaim racist murderers as heroes. And what about supporters of peace and solidarity, like in Akram Ailisli's case, they threaten to cut off his ear.



**- Doesn't NKR issue in some point depend on such regional country as Turkey, which has a partial position regarding the conflict?**

- It does, Turkey is unilaterally advocating Azerbaijan. And naturally it cannot have the role of mediator in this process. If Turkey has a willing to promote peaceful settlement, it would be better, not to intervene in this process at all. The reason that the peaceful settlement hasn't been reached till now is the destructive policy of Azerbaijan. Azerbaijani side believes that use of force, military resolution may be a possible option. Though, of course, war is not a resolution and there is no other option but negotiating process.

**- It seemed there was a tendency for the settlement of Armenian-Turkish relations in 2009. Appropriate protocols haven't been ratified by Ankara. What was the reason of the failure?**

- We reached an agreement. Armenian-Turkish protocols were signed in Zurich, nevertheless, Turkish side refused to ratify and implement those agreements. Actually, Turkey refuses the most important pacta sund servant principle of international relations, that agreements have to be respected. Positions of Armenia and international community are the same-Turkey should respect agreements, ratify and implement protocols without any preconditions.

**- Why are You demanding Turkey to recognize Armenian Genocide committed about 100 years ago?**

- In this issue we are responsible to humanity, in order to prevent repetitions of new genocides, crimes against humanity. Genocides must be recognized, condemned, their denial must not be tolerated. This is the way. This is not only the issue of Armenian nation, but of the all humankind. This is an issue of respect for fundamental human rights and international law.

**- Austria hasn't qualified those Turkish actions as Genocide till nowadays. Are you disappointed?**

- We hope that Austria, as well as other countries of Europe and world will recognize it.

**- What about the progress over negotiations on Association Agreement with the European Union?**

- We have recorded a visible progress over negotiation on Association Agreement, including negotiations on establishment of deep and comprehensive free trade zone. We hope to complete negotiations till Eastern Partnership Summit in Vilnius in November. We signed visa facilitation regime agreement with EU on December, so that EU citizens may visit Armenia without visa.

**- According to evaluations of OSCE observers, presidential elections of Armenia, held on February, were generally free and fair. Though observers have pointed out some shortcomings mainly the issue of separation of state institutions and the ruling party.**

-You are right; observers have given positive evaluations to the elections. They were unanimous that elections were an important step forward. Suggestions on improvements of election process were also made. We will attentively examine the proposals and will initiate all needed steps in order to implement appropriate reforms aimed at the improvement of electoral system.

Important reforms have been implemented in Armenia recently, in a result of which, our country has leading positions in some international rankings, including freedom of press, business environment and other spheres. We are determined to continue the reform process.

**ARMENPRESS**

# Baku Slams Turkey's Gul Over Armenia Congratulation

Senior government officials in Azerbaijan criticized Turkey's President Abdullah Gul on Thursday for congratulating his Armenian counterpart Serzh Sarkisian on winning a second term in office.

News of the congratulatory letter sent by Gul to Yerevan was reported by the official Turkish Anatolia news agency on Wednesday. It was not immediately confirmed by Sarkisian's office.

Officials in Baku expressed serious concern at the development, with President Ilham Aliyev's chief foreign policy aide demanding an official explanation from Ankara. "If there was such a congratulation, that is the position of the Turkish state and Abdullah Gul and it must be clarified," the official, Novruz Mammadov, was quoted by the Trend news agency as saying.

For his part, Mubariz Gurbanli, the deputy executive secretary of Aliyev's ruling Yeni Azerbaycan Party, said that the "hasty congratulation" amounted to a show of "moral, political and ideological support" for Sarkisian, according to an APA news agency report cited by Day.az. Another pro-government lawmaker, Zahid Oruj, denounced Gul's move as "irrational."

Azerbaijan has fiercely opposed any attempts to improve Turkey's strained relations with Armenia, saying that would strengthen the Armenian side's hand in the unresolved Nagorno-Karabakh conflict. An uproar from Baku was apparently instrumental in Ankara's decision not to unconditionally implement U.S.-brokered normalization agreements signed with Yerevan in 2009. The agreements were the result of an unprecedented Turkish-Armenian rapprochement initiated by Sarkisian and Gul.

Gul already congratulated Sarkisian when the latter was first elected president in 2008. The two leaders have also sent each other congratulatory messages in connection with Turkish and Armenian national holidays.

# Rep. Schiff Congratulates Nagorno Karabakh

Continued from page 1

Azerbaijani cities 25 years ago, proved the righteousness of Nagorno Karabakh's choice to survive and preserve its identity by establishing a sovereign democracy.

You have my support as you work to strengthen your democracy, and I will continue to stand with the people of Artsakh in their struggle towards international recognition. I join you today in looking forward to the day when Artsakh will achieve the recognition it deserves among the community of nations.

Sincerely,
Adam B. Schiff
Member of Congress

# CEC Officially Declared Sarkisian Election Winner

Continued from page 1

longed struggle."

Hovannisian on Monday also divulged more details of his surprise meeting with Sarkisian held last Thursday. He said the incumbent urged him to stop challenging the official vote results and start preparing for the next national elections "as the leader of the opposition."

"I don't need that. The Armenian people and their young generations will have asserted their constitutional rights by 2017-2018," he said, adding that Sarkisian did not offer him any power-sharing deals.

Hovannisian said on Friday that Sarkisian rejected his calls for the holding of fresh presidential or parliamentary elections.

**University Students Join Protests**

Authorities tightened security at state-run universities in Yerevan on Monday as students boycotted classes and took to the streets to demand a rerun of last week's presidential election.

The protesters supporting opposition candidate Raffi Hovannisian rallied outside several universities, urging fellow students to join the boycott. "We are calling on you to join this movement," one of their leaders shouted through a megaphone outside Yerevan State University (YSU), the starting point of the protests.

Chanting "Boycott to classes", "We are the masters of our country", "Free, independent student" and with posters "You are taking the dead to vote, to do what?", students rallied for 20 minutes in front of the State University.

"This [opposition] movement has no concrete political orientation, it's everybody's fight," he said. "We all know well who won these elections. The people won these elections."

"I'm against vote falsifications. This is my civic position," another participant told RFE/RL's Armenian service (Azatutyun.am).

Several others claimed to have been warned by university administration that they will risk dismissal in case of boycotting classes. "Of course I'm not scared," one young woman said. "I am not taking unconstitutional actions. I'm not for sale. I'm fighting for my future."

After the protest the students marched from YSU to other universities, urging other students to join them. The gates of Yerevan State Economics University (YSUE) and Yerevan State Medical universities had been shut down to not let them in. Despite that, a group of male students at YSUE jumped out of the ground-floor auditorium window to join the strike. They marched to their final destination - the Central Election Commission, where the second count of ballots was being summed up at that moment.

The crowd waving Armenian flags and wearing orange ribbons was briefly joined by Hovannisian at one point. The opposition leader hailed the action.

# Armenia, Artsakh Win Best New Exhibitor Booth Award at LA Times Travel Show



LOS ANGELES -- The exhibitor booth of Armenia and Artsakh was named the best at the prestigious Los Angeles Times Travel Show 2013 held February 22-24 at the LA Convention Center. The award was handed to the Armenian National Competitiveness Foundation.

The joint Armenia-Artsakh booth featured some of Armenia's major travel companies while offering information guides, films, video clips as well as cultural performances and national delights to its visitors. Yerevan, the capital city of Armenia—also a sister city of Los Angeles—was prominently featured at the booth exemplifying the artistic and cultural diversity of Armenia.

The Armenian booth attracted unprecedented interest all through the exhibition thanks to the efforts of the National Competitiveness Foundation and the Armenian Consulate General in Los Angeles.

In addition to tourism professionals, Armenian artists and celebrities were also be present to greet the visitors. Matthew Karanian and Robert Kurkjian, authors of Armenia's first-ever commercial travel guidebook, were present to sign the new edition of Armenia's best selling travel guide, *The Stone Garden Travel Guide: Armenia and Karabakh.*

The third edition of the book contains 320 pages, featuring 27 color maps and more than 150 color photographs. In addition to the new artwork, the book also features a never-before published map of historic Armenia, which was created shortly after the Genocide. The highly acclaimed book is Award Finalist for Best Travel Guide by the Independent Publishers Association.

Author-photographer Matthew Karanian and photographer Robert Kurkjian have each spent more than a decade traveling and working in Armenia. Their writing and photography about Armenia has collectively been featured in magazines and newspapers including the CNN Traveler magazine, Global Adventure and Photo Life.

Taking into consideration the




growing interest towards the Armenian culture and attaching importance to the expansion of cooperation, the Armenian National Competitiveness Foundation intends to organize the visit of leading American media to Armenia this year to promote the development of tourism.

# 2013 "Artavazd" Theatrical Competition Dedicated to Vahram Papazyan

2013 "Artavazd" theatrical competition started on February 27 in the international day of Theatre . The ceremony are hosted in Hakob Paronyan musical comedy state theatre. The Armenian Actors Union press secretary Vlad Muradyan told Armenpress, the applications submission deadline expires on March 1. "This year competition will be dedicated to famous actor Vahram Papazyan 125 anniversary" press secretary stated.

"Artavazd" annual prizes are being awarded to the actors most prominent in the course of the year. The categories are as follows: honorable services rendered to the theatrical art, best woman and man actors, second plan best woman and man actor, best directing, best play, best young actor-actress, best young director, best youth performance and best performance.

The competition is organized with the efforts of The Armenian Actors Union."Artavazd" theatrical competition was established in 1996. Initially the competition possessed one category "honorable services rendered to the theatrical art".The number of categories increases year by year started 1999. The competition was then being held only in the frame of theatrical actors yet started from the previous year was being celebrated gorgeously.

# Armenian Studies Program Brings Eric Bogosian to University of Michigan

ANN ARBOR, MI -- The University of Michigan's Armenian Studies Program is pleased to announce that playwright, novelist, and actor Eric Bogosian will deliver the 2013 Berj H. Haidostian Annual Distinguished Lecture on Wednesday, March 13, 7:00 pm. Bogosian will discuss how his decision to write a screenplay about the 1915 assassination in Berlin of the Ottoman Grand Vazir, Talat Pasha, led him to write a non-fiction history of the Nemesis assassins and their context. He has dedicated the last five years to the study of Armenian and Turkish history, interviewing prominent historians around the world, translating primary texts from Armenian, French, and German, and conducting primary research in the British archives. He will talk about his public experience as a writer, as well as the private and personal self.



**Playwright, novelist, and actor Eric Bogosian**

Eric Bogosian has most recently starred with Laura Linney on Broadway in Donald Margulies' Time Stands Still. He wrote and starred in the play Talk Radio (NYSF, 1987; Broadway with Liev Schreiber, 2007), for which he received Pulitzer Prize and Tony award nominations. For his film adaptation of the play, Bogosian received the Berlin Film Festival Silver Bear Award. In addition to Talk Radio, Bogosian has written a number of full-length plays including subUrbia (LCT, Second Stage, adapted to film), Griller (Goodman), Red Angel (Williamstown Theater Festival), Humpty Dumpty (The McCarter), and 1+1 (New York Stage and Film). He is also the author of three novels—Mall, Wasted Beauty, and Perforated Heart—and a novella, Notes from Underground. As an actor, Bogosian has appeared in numerous films and television programs, starring in Robert Altman's The Caine Mutiny Court Martial, Oliver Stone's Talk Radio, Under Siege II, Wonderland, and as Captain Danny Ross on Law & Order: Criminal Intent. His six solo Off-Broadway performances between 1980 and 2000—including Drinking in America; Sex, Drugs, Rock & Roll; and Wake Up and Smell the Coffee—received three Obie awards. He lives in New York with his wife, director Jo Bonney.

The Haidostian Annual Distinguished lectureship was established by the family of the late Dr. Berj Haidostian, a prominent and devoted physician in Michigan. The Haidostian family has a long and continuing relationship with the University of Michigan and the Armenian Studies Program. Every year, together with the Armenian Studies Program faculty they select a speaker from among internationally recognized experts on Armenia and Armenians. Recent Haidostian Distinguished Lecturers have included the renowned director Atom Egoyan, Dr. Gerard Chaliand of Paris, Dr. Fiona Hill of the Brookings Institution, Mr. Thomas de Waal of the Carnegie Endowment for International Peace, and Dr. Vartan Gregorian of the Carnegie Foundation.

The lecture is open to the public and will be followed by a question and answer period, and will also be video recorded and posted on our website at www.ii.umich.edu/asp.

LOCATION: Helmut Stern Auditorium, University of Michigan Museum of Art, 525 S. State St., Ann Arbor, MI 48109

SPONSORS: Armenian Studies Program, Arts at Michigan, Department of Screen Arts & Cultures, UMS

WEB LINK: www.ii.umich.edu/asp

# Cultural Genocide Precedes all Physical Pressure – Armenian Expert

YEREVAN -- All physical pressure is preceded by cultural genocide, Chairman Ashot Grigoryan of the Forum of Armenian Associations of Europe stated during a press conference on Tuesday.

"We continue our fight for the recognition of the Armenian Genocide, and we also are fighting at UNESCO, in the matter of destruction of the cross-stones of the [Armenian] cemetery of Old Jugha [Julfa, in Nakhichevan, Azerbaijan].

"Azerbaijan paid $1.5 million to UNESCO, and we will [launch a] protest to Director-General Irina Bokova of this organization," Grigoryan said.

The expert also stressed that they issued a letter to UN Secretary-General Ban Ki-moon, with a request to set up a UNESCO commission and, within the scope of whose activities, the



Azerbaijanis' destruction of 10,000 Armenian cross-stone-monuments is aimed to be recognized.

"The British Museum is another matter. Armenian exhibits are displayed there, [but] with the inscription: 'Ancient Turkey,'" Ashot Grigoryan noted.

# ԼԱՐՔԸ՝ ԻԲՐԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԴՐՕՇՄ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

*ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ ԵՒ ՎԱՐԵՑ ՎԱՐԴԻ ԴԱՆԻԷԼԵԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺ–ԸՆԿԵՐԱԲԱՆ*

*(Շարունակուածնախորդ թիւէն)*



Վ. Դ. Այս աշակերտները ամէ՞ն օր հոս են, հետեւելու համար թէ՛ գործիքային կատարման եւ թէ՛ ձեր ակնարկած երաժշտութեան գրաճանաչութեան դասերուն:

***Վ. Պ.** Ոչ, ամէն օր հոս չեն: Իրենց գործիքային անձնական դասաւանդութեան համար կու գան շաբաթը մէկ կամ երկու անգամ, երկուշաբթիէն ուրբաթ օրը անձնական դասաւանդութեանց յատկացուած են, նախապէս որոշուած ժամու մը: Իսկ շաբաթ օրերը խմբակային–դասարանային դրութեամբ կը տրուին երաժշտութեան գրաճանաչութեան դասերը: Այդ օրն է, որ բոլորը կը հաւաքուին, եւ այնքան հաճելի մթնոլորտ մը կը ստեղծուի իրենց մէջ, մանաւանդ երբ կեդրոնէն դուրս ելոյթներ կ'ունենան, բարեկամութիւններ կը ստեղծուին եւ այնքան կը կապուին իրարու: Ընկերային կեանքի հոյակապ երեւոյթ է ամէն շաբաթ առտու դառնալ անհամբեր հոս գալու եւ իրարու հետ երաժշտութեամբ պարապելու: Կատարողական դասերու պարագային միայն, ինչպէս պար եւ երգչախումբ, կրնայ ըլլալ որ շաբթուան մէջ ալ փորձի օրեր ունենան:*

Վ. Դ. Կը կարդանք, թէ Լարքի շրջանաւարտներէն շատեր արդէն ելոյթներ կ'ունենան Գալիֆորնիոյ հանրածանօթ նուագախումբերուն հետ: Քանի մը անուն կարելի՞է հոս յիշել: Ի վերջոյ, անոնք ոչ միայն Լարքի, այլեւ՝ համայն հայութեան հպարտութեան գնահատանքին արժանի են:

***Վ. Պ.** Մեր բոլոր սաներն ալ արդէն կը պաշտօնավարեն զանազան համալսարաններէ ներս, եւ որքան որ հնարաւոր է, կապը միշտ կը պահեն Լարքի հետ: Ասոնք, երբ դուրսի երաժշտանոցները կ'երթան բարձրագոյն մասնագիտութեան հետեւելու, շատ յաճախ, կը ցատկեն բոլոր նախապատրաստական կամ առաջին դասարանի երաժշտագիտական դասարանները, որովհետեւ հոս իրենց տրուած մակարդակը շատ բարձր է: Անոնք, զինուած՝ իրենց մասնագիտութիւններով մաս կը կազմեն մեր դպրոցի դասախօսներու կազմին: Ասոնցմէ են Տիգրան Առաքելեանը, Կարինէ Աւագեանը, որ անցեալ տարի ստացաւ իր տոքթորականը, եւ արդէն բաւական լեցուն աշխատանքի օրերէն զատ, դարձաւ նաեւ մեր մանկական երգչախումբի ղեկավարը: Ուրիշներ, ինչպէս՝ Աշոտ Գարթալեան, Շուշիկ Պարսումեան, Մեղրի Պապիկեան, ամբողջական ցանկը չունիմ աչքիս առջեւ, բայց ըսեմ, որ 8-9 հոգիէն աւելին արդէն վերադարձած են Լարք եւ մեր որակաւոր ուսուցիչներէն են: Ասոնց մէջ կան անձեր, որոնք օժտուած են նաեւ կազմակերպչական կարողութիւններով: Կ'ուզեմ շեշտել, թէ անհեռանկար ապագայ մը չի սպասեր մեր սաներուն:*

Վ. Դ. Ձեր ուսանողներու վերջին ելոյթին, այնքան շօշափելիօրէն զգալի էր, որ իւրաքանչիւր կատարող ոչ միայն կը տիրապետէր նուագած կտորի մեղեդիին, այլ մենք ականատես կ'ըլլայինք հաւաքական աշխատանքի արդիւնքին: Յոն էր տեսականին հետեւող ուսուցչին մատը, կատարողական արուեստին հսկողինը, եւ ընդհանրապէս անոր ոճայինին հետեւող ուսուցչի ներկայութիւնը, շո՛ւնչը: Մէկ խօսքով՝ իւրաքանչիւրին կատարումը հաւաքական խմբակի մը արդիւնքը կը թուէր ըլլալ: Ճի՞շդ եմ: Թէեւ հոս տեղը չէ այդ ելոյթին արձագանգելու, սակայն նկատելի է Լարքի ուսուցչական կազմի բաւական պատկառելի երաժիշտներէ բաղկացած ըլլալը: Կարելի՞ է որոշ պատկեր մը տալ անոնց մասին, թէ որո՞նք են ձեր ուսուցիչները, եւ ուրկէ՞ են:

***Վ. Պարսումեան.** Շատ ճիշդ ներթափանցում է ձերը այդ առնչութեամբ: Այդ ձեր սուր տեսողութեամբ ընկալած հաւաքական աշխատանքը իրականութիւն է Լարքէն ներս, որ մեծաւ մասամբ աննշմարելի է ընդհանրապէս: Ահաւասիկ ա՛յս միատեղուած հաւաքական ուշադրութիւնն է, որ աշակերտը կը դարձնէ աւելի յանձնառու եւ լուրջ՝ երաժշտութեան հանդէպ:*

*Կը խնդրէք, որ որոշ պատկեր մը տամ մեր ուսուցիչներուն մասին: Մեծ սիրով, սակայն այս պարագային ես այդ պատկերը պիտի դնեմ լուսարձակի տակ, որովհետեւ իրենք են Լարքի փառքն ու պարծանքը: Նախ եւ առաջ ըսեմ, որ մեծամասնութիւնը Հայաստանցի են, բայց պէտք է անպայման նշեմ, որ ես բախտաւորուած կը զգամ լաւերուն լաւը ունենալու: Անոնցմէ իւրաքանչիւրը, առանց բացառութեան, այնքան մեծ սիրով ու խանդաղատանքով կը մօտենայ աշակերտին, այնպիսի նուիրումով կը կատարէ ուսուցչի իր պաշտօնը, որ կարծես վաղը գոյութիւն չունենայ, որ ինք, այսօ'ր իսկ, ամէն բան պէտք է տայ: Եւ այս ամէն ինչը անվերապահօրէն տալու, ամէն բան սորվեցնելու իրենց մարմաջը կը զգաք ու կը տեսնէք ամէն մէկ աշակերտի հետ պարապելու ընթացքին:*

*Ազնիւ են անոնք եւ աներեւակայելիօրէն համեստ. հոգեկան այնպիսի ամուր կառոյց ունեցող մարդիկ են, եւ մանաւանդ՝ այնքան յանձնառու, որ կ'ապշեցնէ քեզ, եւ որ միեւնոյն ատեն երախտագիտութեամբ կը լեցնէ հոգիդ: Մօտիկ եւ լաւագոյն ընկերներ բարեկամներ ունենալու բախտաւորութիւնը ունիմ շնորհիւ՝ իրենց: Օրինակ մը տալու համար բացատրեմ, թէ ինչ ըսել կ'ուզեմ: Սովորական եւ թեթեւսոլիկ դրուատիք չեն մեր ուսուցիչներուն մասին ըսածներս, այլ՝ ապրուած իրականութիւն: Այսպէս: Եթէ պատահի, որ կատարողական արուեստի մէջ բան մը կայ, որ մէկն ու մէկը չեն հասկնար, կամ երաժշտական պատկերի մը ըմբռնումը պղտոր կը հնչէ եւ պրպտում կը պահանջէ, կու գան ինծի, որ միասին փնտռենք լուծումը: Ըսել կ'ուզեմ, «ես»-ի հարց չկայ հոս, բաց են, ազատ եւ անբարդոյթ: Յաւակնոտ չեն, որեւէ նոր բան գիտնալու, սորվելու կամեցողութիւնը ունին: Ձի նշանակեր, որ ես աւելին գիտեմ, բայց որեւէ հարցի մասին միասնաբար խորհելու, միասնաբար բանի մը լուծումը գտնելու համար չեն վարանիր դիմելու ինծի, կամ՝ իրարու: Եթէ բան մը կայ, որ ինծի ալ անծանօթ է, ես ալ կ'ուզեմ գիտնալ, ուրեմն՝ համագործակցութիւնը կը դառնայ մեր յարաբերութեան գլխաւոր առանցքը: Այս՝ մեծութիւն կ'ենթադրէ կը կարծեմ, ինչ որ հազուագիւտ բան է, եւ ես երջանիկ եմ, որ իրենց Աստուածատուր շնորհները կը վայելեն մեր աշակերտներն ու մանաւանդ՝ ես: Ուրիշ օրինակ մը եւս: Ունինք բացառիկ տաղանդով օժտուած ուսուցիչ մը, Արտաշէս Քառթալեանը, որ յառաջացեալ դասարաններու երաժշտական տեսութիւններ կը դասաւանդէ: Այնքան դիւրահաղորդ բնաւորութեան տէր մարդ է, այնքան լաւ կը բացատրէ, այնպիսի ձեւերով այդ խրթին տեսութիւնները դիւրութեամբ մատչելի կը դարձնէ, որ կ'ըսեմ թէ երանի ես իր աշակերտը ըլլայի կեանքիս ընթացքին: Երանի ես իրեն պէս ուսուցիչ մը ունեցած ըլլայի: Կը կրկնեմ, իրենց պարզութիւնն ու համեստութիւնը, իրենց աշակերտներուն հանդէպ ցուցաբերած գորովն ու նուիրուածութիւնն են, որ կ'երաշխաւորեն մեր աշակերտներու կապուածութիւնը իրենց, եւ իրենց միջոցաւ՝ երաժշտութեան:*

Վ. Դ. Պզտիկ փակագիծով մը կ'ուզեմ հարց տալ ձեզի: Երաժշտութեան հետեւելու համար, կամ որեւէ գործիք նուագելու համար որեւէ ընդունուած տարիք կա՞յ: Որովհետեւ, նոյնիսկ եթէ երաժշտութեան ասպարէզ դժուար թէ կարելի ըլլայ մտնել, որոշ տարիքէ ետք, սակայն ձեռք բերուած կ'ըլլայ կեանքի անփոխարինելի ընկեր մը, երաժշտական գործիքի մը ընտելութիւնը, որուն հետ զրուցելը աւելի սփոփիչ է: Ի՞նչ է ձեր կարծիքը: Վստահ եմ, շատեր ինծի պէս կը վարանին, խորհելով որ ո՞ւշ է արդէն:

***Վ.Պ.** Երբեք ուշ չէ: Ճիշդ երէկ, 66 տարեկան հայ տիկին մը հարցուց, թէ կրնա՞յ դաշնակի դասեր առնել: Ուրիշ հայր մը, որ իր 4 տարեկան զաւկին համար ջութակի դասեր առնել կու տար, ըսաւ թէ ամբողջ կեանքին ընթացքին ջութակ նուագել ուզած է, բայց պայմանները չեն ներած: Հարցուց թէ կրնա՞յ այդ նոյն ջութակով սկսիլ նուագել: Ըսինք, որ իր մարմնին համար աւելի մեծ չափի ջութակ մը պէտք ունի, բայց անշուշտ որ կրնայ նուագել սորվիլ: Մենք հոս ունինք արդէն 5-6 չափահաս տարիքի ուսանողներ, երկու հոգի 60-ի մէջ, երեք հոգի 50-ի մէջ եւ նաեւ 2 հոգի 40-ի թէ 30-ի մէջ: Եթէ աւելի մեծ թիւով չափահասներ ունենայի, անոնց համար առանձին դասարան կը բանայի: Կան նաեւ անոնք, որոնք երաժշտական գրաճանաչութեան յատկացուած դասերուն կը դժուարանան հետեւիլ, որովհետեւ չեն ուզեր նստիլ շատ փոքր տարիքի մանուկներու դասարաններուն մէջ, ուրեմն՝ կը մեկնին: Կարգ մը անձեր կը դիմանան, եւ իրենց անձնական գոհացումը ստացած կը մեկնին: Իրենցը վկայական մը ձեռք ձգելու հարցը չէ, գոհանալու ձեւ մըն է, սակայն մանուկները ընթացք մը ունին աւարտելիք, մանաւանդ իրենց ծնողներուն համար, հակառակ անոր, որ մենք տակաւին պաշտօնական ճանաչողական վկայագիրը (accreditation) չունինք տակաւին, բայց որ պիտի ունենանք մօտիկ ապագային:*

*Շար.ը էջ 20*




ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Լոս Անճելըսի Մասնաճիւղ
ԶԱՒԷՆ ԽԱՆՃԵԱՆԻ
ՀԱԼԷՊ՝ ԱՌԱՋԻՆ ԿԱՅԱՐԱՆ
Նոր հրատարակուած գիրքի
ԳԻՆԵՁՕՆԻՆ եւ Գիրքի մակագրութիւն հեղինակին կողմէ
Ելոյթ կ'ունենան՝
ՅՐԱՆԴ ԱՂՊԱՊԵԱՆ
ԴՈԿՏ. ՎԱՀՐԱՄ ՇԷՄՄԱՍԵԱՆ «Հալէպ՝ Առաջին Կայարան» գիրքը
ԼԵՆԱ ՊՕՂՈՅԵԱՆ
Հանդիսավար՝
ՎԱՉԷ ՍԵՄԵՐՃԵԱՆ
Գեղարուեստական յայտագիրով՝
ՌԱՖՖԻ ՔԵՐՊԱՊԵԱՆ քնար
ՌՈՒԶԱՆՆԱ ՎԱՆԷՍԵԱՆ դաշնակահար
ՍՈՆԱ ԽԱՆՃԵԱՆ ընթերցում
ԿԻՐԱԿԻ, ՄԱՐՏ 3, 2013 կ.ե. 6:00
ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ
117 S. Louise Street
Glendale, California 91205
ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

# ՎԱՀԷ ՎԱՀԵԱՆ... ԳԵՂԱՄ ՍԵՒԱՆ... ԵՒ ԵՍ...

*ԼԻՒՍԻ ՍԻՒԼԱՀԵԱՆ*

Ժամանակակից մեր քնարերգակ բանաստեղծներէն Վահէ Վահեան Հալէպ հրաւիրուած էր Թէքէեան Մշակութային Միութեան կողմէ, ներկայացնելու ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ բանաստեղծի գրականութիւնը:

Վահէ Վահեանի մանրակրկիտ սերտողութիւնը, Հայ բանաստեղծութեան Իշխան Վահան Թէքէեանի մասին կլանեց գրասէր ներկայ հասարակութիւնը: Վահէ Վահեանի ի պատիւ սարքուած ճաշկերոյթին սեղանակից էինք:

- Կ'ուզեմ «Կիւրինցի»ներու քէմբը այցելել, ըսաւ:

- Ես կը տանիմ Ձեզի, առաջարկեցի:

- Շատ ազնիւ էք, շնորհակալ եմ իսկապէս, ինծի համար էական է:

Զարմացայ:

Յետոյ պիտի իմանայի որ Վահեան մանկութիւնը անցուցած էր այդ քէմբին մէջ:

Հալէպի «Կիւրինցի»ներու քէմբը կը գտնուի ՆԷՅԷԼ պողոտայի վերջաւորութեան նախկին ՍՈՒՔ ԷԼ ԱՀԱՏ - ի կողքին: ՆԷՅԷԼ պողոտայէն անմիջապէս ետք կը սկսի, ՌԱՄԱՏԱՆԻՅԷ պողոտան ուր եղած է նաեւ ուրիշ խոշոր Քէմբ մը, որ պատսպարած է եղեռնէն ճողոպրած հայերը տախտակէ եւ թիթեղէ շինուած խրճիթներու մէջ: ՌԱՄԱՏԱՆԻՅԷ-ն վեր արդէն ԱՐՂՈՒՊ շրջանը կը սկսի: Դեռ կանգուն է Հայերուն կերտած ՋԷՅԹՈՒՆ խանը, ՆՈՐ ԳԻՒՂ թաղամասի վերի մասը:

ՆՈՐ ԳԻՒՂ-ն ալ եղած է այն հողաշէն տուներու ընդարձակ տարածութիւնը զոր Քէմբերէն դուրս եկող ՀԱՅԵՐԸ կառուցած են:

Եղած են նաեւ այլ Հայաւաններ ՊՈՍՏԱՆ ՓԱՇԱ եւ ՀԷՕԼԼԻՒՔ, ուր Հայերը կրցած են կառուցել հողաշէն տուներ: Բլուրներու գագաթ մագլցողներ ալ եղած են: ԽՈՐԴԼԱԽ այժմ ՇԷԽ ՄԱԳՍՈՒՏ եւ ՏԱՒՈՒՏԻՅԷ այժմ ԷՇՐԷՖԻԷ:

Որոշ թիւով Հայեր սկսած են քարաշէն տուներ ալ սարքել: Մօտաւորապէս քսան հինգ տարի յետոյ գաղթական Հայը իր վերապրելու հզօր կամքով կերտած Հայաւաններու մէջ, կերտեց եւ Եկեղեցի եւ Դպրոց: Նոր Սերունդը առողջ պահելու համար հիմը դրաւ Մարմնամարզական Կառոյցներու, Մշակութային կեդրոններու: Այս բոլորի մասին խօսեցաւ Վահէ Վահեան մինչ կը քալէինք դէպի ԿԻՒՐԻՆՑԻներու Քէմբը:

Զարմանա՛լի Եղեռնէն տարիներ ետք Հայ բնակիչներ ունէր Քէմբը . . .

Վահէ վահեան յուզուած էր մանկութեան խրճիթը փնտռելով: կորսուած էր: Չկրցաւ գտնել:

- Շատ բան փոխուած է հոս, ըսաւ:

Աստին, անդին մօրը անունը տուաւ, անօգուտ: Ծերունի մը ցածլիկ աթոռի մը պպզած կը ծխէր: Յիշեց Վահեանի մօրը ու պզտիկ զգոյշ քայլերով մեզ առաջնորդեց Քէմբին ներսի կողմերը ու տնակ մը մատնանշեց: Վահեան տնակի այժմու տանտիրուհիէն խնդրեց խրճիթէն ներս մտնել: Պզտիկ էր տարածութիւնը տնակին: Կարօտագեղ ակնարկով չորսդին պտտցուց աչքերը: Այդ վայրկեանին փոքրիկ Սարգիսն էր, Թէքէեանագէտ Վահէ Վահեանը ... Խեղճուկ էր տեսքը խրճիթին, պատին վրայ ծաղիկներու գոյնը թառամած, լայն վարագոյր մը կախուած էր: Կար սեղան մը եւ խսիրները փտտած, երեք աթոռներ:

- Անկողինները վարագոյրին ետին շարուած են, չէ՛.... հարցուց Վահեան տանտիրոջ եւ առանց պատասխանի սպասելու դարձաւ ինծի ու ըսաւ:

- Մայրս ալ հոն կը զետեղէր մեր անկողինները ... Տամկացած էին աչքերը: Ծառուկեանի ՄԱՆԿՈՒԹԻՒՆ Ջ'ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ-ներէն էր Սարգիս Ապտալեան: Իմ մօրս մանկութիւնն ալ դժոխալի եղած էր: Վահէ Վահեանի յիշողութեան մէջ մանկութեան յուշերը տաժանելի էին: Մօրս մանկութեան յուշերն ալ տաժանելի էին ու արիւնով ներկուած...

Նկարեցի ես Վահէ Վահեանը մանկութեան խղճալի յուշերով պատուած իր խրճիթին դիմաց: Մեր մանկութիւնն ու պատանեկութիւնը ապրեցանք մեր ծնողաց կորսնցուցած հարազատներու կսկիծով ու դաժնադէտ յուշերով:

Մեր զաւակներուն փոխանցեցինք Եղեռնի Զոհերուն յիշատակը: Բայց մեր զաւակներուն զաւակները (երրորդ սերունդ) ու անոնց զաւակները (չորրորդ սերունդ) եւ (հինգերորդ սերունդ) պիտի հասնի՛ Հայութեան ԿՏԱԿԸ: Գնաց Վահէ Վահեան Մանկութեան իր յուշերը վերապրելով ու որպէս մասունք մանկութեան իր խրճիթին լուսանկարը սրտին սեղմած:

Վահէ Վահեան Պէյրութ լոյս տեսնող ՍՓԻՒՌՔ-ի, ԲԱՆԱՍԷՐ-ի, ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ-ի, եւ ՇԻՐԱԿ-ի էջերէն հետեւած էր գրական քայլերուս: ԹԱՓԱՌՈՂ ՀՈԳԻՆԵՐ առաջին հրատարակած գիրքս, մակագրեցի իրեն: Մանրիկ գիրերով ընդարձակ, դիւրընթեռնելի նամակը, գեղուն անկեղծ թելադրութիւններով:

Պէյրութ տեսնուեցանք յաճախ: Երբեք չէր կրցած մտքէն սրբել ԿԻՒՐԻՆՑԻ-ներու Քէմբը մեր այցելութիւնը եւ նաեւ ԾԵՐԱՆՈՑ ու ԿՈՒՐԱՆՈՑ մեր այցը: Կը հիանար Հայու վերապրելու կամքին:

- Առաջին օրինակը Վահէ Վահեանն է ... կ'ըսէի իրեն: Կը ժպտէր հեզօրէն:

Հիմա Երեւանի մէջ ենք: Հայաստանի Գրողներու Միութեան ութերորդ համագումարին, Մայիս 1981, Հայկական գաղթօճախներէն գրողներ ի մի հաւաքած է Հայրենիքը, սերտ կապ ստեղծելով Սփիւռքահայ եւ Հայրենի Գրողներու միջեւ: Ժամանակակից վաւերական Գրողներու հետ ծանօթացումը եւ սերտակցութիւնը նոր խանդ եւ աւիւն տուաւ օտար երկնակամարի տակ Վահէ Վահեան Արմէնիա հիւրանոցի ելքի դրան մօտ յայտնի է մէկու մը կը սպասէ: Կը ժպտի ու կը հարցնէ:

- Դուք ալ ժամադրութիւն ունիք:

- Ես Գրականութեան թանգարանը կ'ուզեմ այցելել, ըսի:
- Գեղամ Սեւանին պիտի երթամ, միասին կրնանք երթալ:

- Այո, ես ալ կը կրկնեմ հրաւէրը, հրամեցէք, խնդրե՛մ, ըսաւ, Գեղամ Սեւան, որ նոյն վայրկեանին հասած էր մեր մօտ:

Ես պահ մը վարանեցայ ... Վահէ վահեան ժպտագին միջամտեց:

- Կը հրամմէ, կը հրամմէ ու մենք կը պատմենք ձեզի ԿԻՒՐԻՆՑԻ -ներու քէմբին մասին, ու դառնալով ինծի.

-Տունը մօտ է, կրնանք քալել, ըսաւ:

Այդպէս անակնկալ քալեցինք Լենինի պողոտայէն մինչեւ Գեղամ Սեւանի բնակարանը գոց շուկայի մուտքին:

Կօշիկս սկսաւ նեղել ճկոյթ մատս: Հոգիս նեղ էր արդէն: Ի՞նչ ընելու կ'երթայի ես Գեղամ Սեւանի տունը:

Գրող բարեկամ մը այնպէս վարկաբեկած էր այս նախկին Պոլսահայ Գրողը որ շրջան մըն ալ Լիբանան ապրած ու մաս կազմած էր Պէյրութի այդ օրերու Գրական Շրջանակին: Անարգական այնպիսի՛ ածականներով որակած էր կողքէս քալող այս Մարդը: Եթէ իրապէս Գեղամ Սեւան արժանի էր գրող բարեկամիս այդ քսու որակումներուն:

Վահէ Վահեանի պէս ՅԱՐԳԵԼԻ անձնաւորութիւն մը ի՞նչպէս կրնար յարգել Գեղամ Սեւան ՄԱՐԴԸ: Սեւանի Տիկինը, Զեփիւռը եւ տիկնոջ մայրը, տատիկը հարազատի նման սիրալիր դիմաւորեցին մեզ: Դէմքս պրկուած էր: Հարցուցին եթէ տհաճ բան մը պատահած է ինծի: Ականջիս մէջ կը վխտային գրող բարեկամիս բանսարկու խօսքերը. ...

-Կօշիկը ճկոյթ մատս ցաւցուց, ըսի: Տիկինները իրար անցան: Հազար ու մէկ թելադրութիւններ ըրին: Ու ակնթարթի մէջ հայկական ճոխ սեղան մը սարքուեցաւ եւ հայկական գինին լեցուեցաւ գաւաթներու մէջ: Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Գեղամ Սեւան:

- Գաւաթիս մէջ գինիի փոխարէն ջուր կայ, բայց իմ սրտիս մէջ գինիի առթած ջերմութիւնը կայ Սփիւռքահայ գրչեղբայրներուս հանդէպ ու ... խօսեցաւ նաեւ Վահէ Վահեան նկարագրելով Սեւանի անցած դժուարին փշալի ճանապարհը Պոլսէն Լիբանան ապա Հայրենիք: Երկար մնացինք մենք այդ օր Գեղամ Սեւանի ընտանեկան յարկէն ներս: Վահեանի միջոցաւ Սեւանի հետ ծանօթութիւնս առիթ ընծայեց ինծի վերաքաղի ենթարկելու գրող բարեկամիս բանսարկութիւնները եւ Գեղամ Սեւան հանդէպ վերապահութիւնս կրկին արժեւորելու Վահեանի վկայութեամբ:

Գեղամ Սեւան պարկեշտ մարդ էր: Մոլի խմող եղած էր շրջան մը: Հայաստանի բոլոր լաւ Գրողներու նման:

Զեփիւռը իր երկրորդ կինն էր: Որպէս Գրող սքանչելի գրիչ ունէր Գեղամ Սեւան, սքանչելի մարդ էր եւ սքանչելի սփիւռքագէտ:

- Գիտէ՛ս որ ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ երկրորդ հատորին մէջ Գեղամը ընդգրկած է գրական մէկ գործդ ... Եւ շատ հանգիստ կը հարցնէ ինծի

- Ի՞նչու Երեւան հրատարակուելիք գիրքդ Գեղամին չես վստահիր, լսեցի որ Շահէն Թաթիկեան Վահագն Դաւթեանէն վերցուցած է եւ ինք խմբագրել կ'ուզէ: Վահեանի անակնկալ հարցումը շփոթի մատնեց զիս:

Ի՞նչ պատասխան կրնայի տալ ե՛ս: Գեղամ Սեւան ինք պատասխանեց:

-Ես սիրով յանձն կ'առնեմ գիրքը խմբագրելու աշխատանքը, եթէ հեղինակը ի՛նք գիրքը վերցնէ Թաթիկեանի մօտէն ու գործը ինծի հասցնէ:

- Համաձայն ե՛նք, դարձաւ ինծի Վահէ վահեան:

Ի՞նչ կրնայի ըսել.... ե՛ս:

ԱՆԱՒԱՐՏ ՍԻՐԱՆՈՒԱԳ պատմուածքներու հատորս լոյս տե-

Շար.ը էջ 19



# ԱՐԴԵՕՔ ՄԻ ԲԱՆ ՀԱՍԿԱՆՈ՞ՒՄ ԷՔ «ՀԱՅԻՑ». ԻՐ ՉԱՓԸ ՉԱՓԱԶԱՆՑՆ Է. ԶԱՐՄԱՆԱ՜ԼԻ ՀԱՒԱՍԱՐԱԿՇՌՈՒԹԻՒՆ, ՈՐ ԾԱՅՐԱՀԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ Է…

«Հայը» առաջին անգամ տպագրուել է «Հայաստանի անկախութեան փոխառութիւն միօրեայ թերթում (Թիֆլիս, 1920 Օգոստոսի 2)

***ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆ՝ «ՀԱՅԸ»***

*Արդեօք մի բան հասկանո՞ւմ էք Հայից…Որքա՜ն տարօրինակ, հանելուկային արարած: Որքա՜ն խաբուսիկ: Երեւոյթը, ո՛չ ինքը: Բայց եւ ի՞նչ է ինքը, իր նկարագիրը: Զո՛ւր աշխատանք. որոնում ես իր ինքնութիւնը, գտնում, բայց եւ իսկոյն տեսնում ես, որ դա էլ նորից երեւոյթ էր: Անհանգիստ դէմք ունի, չի թողնում նկարես: Իր ցեղային պատկերն էլ տարօրինակ է: Թուով, գրեթէ ամենափոքրն է, տառապանքով՝ ամենամեծը, ժամանակով ամենահինն է, վիճակով ամէնից անփոփոխը: Ամէնից աննպաստը իր երկրի դիրքն է, ինքը ամէնից յամառ կառչեց նրան: Որքա՜ն անյոյս է թւում իր ապագան, բայց եւ որքա՜ն յուսացող է նա: Ասենք՝ իր կեանքում երկու բան բնաւ չտեսաւ. մէկ՝ բախտ, մէկ էլ յուսահատութիւն: Ինչպէ՞ս ճանաչես նրան, ինչպէ՞ս չափես: Իր չափը չափազանցն է. զարմանա՜լի հաւասարակշռութիւն, որ ծայրահեղութեան մէջ է:*

*Ահա՛ նայիր այս բեռնակրին. ի՞նչ է սա. իսկական գրաստ, մէջքին մի սար բեռ՝ ճկւում է, մէջքը կոտրում: Աշխատա՞նք է կատարում, թէ՞ ինքնախորտակում: Վրէ՞ժ ունի, ի՞նչ է, իրենից հանելու: Ո՞ւմ դէմ է չարացել, որ իրեն է պատժում: Որքա՜ն ուժ, որքա՜ն աշխատասիրութիւն: Ապա՞ տար տունդ ծառայ: Ի՞նչ է միտքը, մի փոքրիկ գումար շինէ, գնա, դուքան բաց անէ: Մարդը իր հացի եւ իր գործի տէրն է ուզում լինել եւ ո՛չ թէ սրա-նրա ծառան: Եւ արդէն Հայ նշանակում է տէր… Բայց տեսե՞լ էք նրան, երբ գաղթական է. ինչ ծոյլ մուրացկան: Ամենաձեռնտու գործը տուր, չի ուզի: Ազգը տայ, ինքը ուտի: Եւ սովից կը մեռնի անխօս, անխնայ, կ՚ասես՝ ջգրու: Եւ սա այն գիւղացին է, որ երէկ կատաղած, գազանացած՝ հողը քանդում էր, չարչարւում, մզւում, հոգին հանում: Ամենաչարքաշ անասունը՝ իր արտի մէջ: Այնպէս է հաւաքում բերքը, կարծես յաւիտեան պիտի ապրի, կարծես ոչ ոքի բաժին չպիտի թողնէ: Բայց գնա՛ իր խրճիթը, հազար գող, մարդ, շուն ու գէլ նրա հացի վրայ է: Ուտում են նրա հացը, ինչպէս Հայր Աբրահամի սեղանից:*

*Տեսե՞լ էք նրա բնակարանը. խլուրդի ծակուռ… բայց անցիր նրա երկիրը: Ինչ հիասքանչ վանքեր, հոյակապ աշտարակներ, գողտրիկ խաչքարեր: Հաւատալ կարելի՞ է, թէ ինքն է շինել այդ բոլորը: Խօսակցութիւնն ես լսում՝ հայհոյանքների կէսը եկեղեցի ու Աստուած է: Լցրել է իր երկիրը եկեղեցիներով, բայց տարին մէկ անգամ չի մտնում մէջը՝ աղօթելու: Աղօթք էլ չի անում առօրեայ կեանքում. իր կրօնը երբեք չէ քարոզել ուրիշներին: Եւ հաւատալի՞ բան է, որ իր պատմութիւնը ամենամեծ կրօնական պատերազմների պատմութիւն է, եւ այս չաղօթող ցեղի Նարեկացու շուրթերից թռաւ աղօթքի ամենաբարձր թռիչքը առ Աստուած…*

*Տանել չի կարողանում ծէս, ձեւ, աստիճան, քաղաքավարութիւն: Ռամիկ է գերազանցապէս: Իր Խրիմեան Հայրիկը ամէնից շատ կաթողիկոսութիւնը ատեց: Դիպլոմատիայի մէջ մի բանումն է շատ հոգածու՝ անկեղծ լինել: Այնքա՜ն անկեղծ է եւ միամիտ, որ անկասկածելի խորամանկի եւ կեղծաւորի տպաւորութիւն է անում: Մինչդեռ իր հարեւանները՝ այս աշխարհի բեմի վրյա դեր կատարելով միայն, ցոյց են տալիս, թէ կացնով հարուածում են դիմացինին, Հայը իսկապէս կացինը իջեցնում է գլխին: Ապա ճշմարտութի՞ւնը,- մտահոգւում է նա:*

*Դանդալոշ է եւ խոնարհ՝ իր Սասունցի Դաւթի նման եւ անսպասելի ըմբոստ, հարուածող՝ նրա պէս երբ վրայ է հասնում գերագոյն վտանգը, հերոսանում է յանկարծ եւ ծառանում վիշապի նման: Բարի է առհասարակ, շոյի՛ր, կը կողոպտուի, բայց եւ, առհասարակ, ինքն է բարեկամ քեզ, իսկ քո բարեկամութիւնը վանում է: Այնտեղ, ուր մի ուրիշ ցեղ ուրիշների միա՛յն սէրը կարող է վաստակել, Հայը գտնում է հնարը ատելութիւն առաջ բերելու: Տաղանդ է՝ իր դէմ ատելութիւն ստեղծելու: Ուրիշի յաջողութեան մէջ նախանձոտ է, ինչպէս վարդապետ: Եթէ գժտուեց մէկի հետ, ոխակալ է, ինչպէս ուղտ: Ամէն հայ մի հայ ունի, որի հետ թշնամի է մինչեւ մահ: Սա նրա անհրաժեշտութիւնն է: Անկարգ է եւ անիշխանական թէ՛ հասարակութեան, թէ՛ պետութեան եւ թէ՛ գաղափարների մէջ: Իբրեւ ժողովրդական՝ անմիաբան է, անտանելի, խռովարար:*

*Ուր յեղափոխութիւն՝ այնտեղ Հայութիւն: Բայց իբրեւ ական՝ ծայրահեղական է: Իր կռիւը երեք ճակատի վրայ էր միաժամանակ: Շահի դէմ, Սուլթանի դէմ, Ցարի դէմ: Ասենք՝ ամէն հայ մի փոքր Շիրակացի է Դոն Քիշոտի պէս: Կոտորածներից ամենազարհուրելին ինքը տեսաւ եւ ինքն էր, որ չխրատուեց:*

*Ինչո՞ւ է այսպէս, ինչի՞ց է դժգոհ, ի՞նչ է կամենում… Ինչո՞ւ է այսպէս անհաւասար, ներհակ, մաղձոտ, անչափելի՝ իր վեհ թռիչքներում:*

*Երեւի, վրէժ ունի նա, մի վատ բան սրտի մէջ, որի համար եւ մեկուսանում է, որ նիւթէ, դաւէ, վնասէ: Ո՛չ. Հայի ամենամեծ առաքինութի՞ւնն ես ուզում. ամենաներողամիտ ցեղը աշխարհիս մէջ: Ի՞նչ եղաւ իր պատմութիւնը. զարհուրելի ջարդեր, խոշտանգում, բնաջնջում… Ջարդի՛ր ինձ,- ասում է նա,- ահա՛ քո պատիժը եւ իմ վրէժը: Ինձ թւում է, թէ մի շատ մեծ վիրաւորանք կայ հայի սրտի խորքը, շատ խորը թաքնուած… Ինձ թւում է, թէ դրա համար է նա ջարդւում, ժապոնացու պէս, որ, երբ մէկից խորապէս վիրաւորւում է, կանչում է իր բարեկամներին, յայտնում է իր վիրաւորանքը եւ վերցնելով դանակը՝ պատռում է իր որովայնը:*

*Այսպէ՛ս է Հայը: Զի՛ ուզում, որ իրան դիպչեն, մօտենան, սիրեն*

*Շար.ը էջ 19*

# ԾՈՎԻՆԱՐ ՀԱՅՈՑ ՀԻՆ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԷՊՈՍԸ

***ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ***

*Հայոց հին, նախաքրիստոնէական, կամ աւելի ճիշտ է ասել՝ նախապատմական, այլ ոչ հեթանոսական, ինչպէս ընդունուած է բնորոշել նախաքրիստոնէական ժամանակաշրջանը, էպոսը վերականգնելու ուսումնասիրութիւնների ճանապարհին ինքնաբերաբար ծառանում են հարցեր, որոնց արմատները առասպելաբանութեան մէջ են, քանի գիտութիւնը դրանց պատասխանները չունի եւ առաւելագոյնը՝ իբրեւ պատասխան առաջարկում է վարկածներ, որոնց հաւաստիութիւնը նոյնքան է, որքան առասպելներինը, եւ դրանց հաւատալ չհաւատալու հանգամանքը կախուած է ընդամէնը մարդկանց բարեհաճութիւնից:*

*Միաժամանակ յայտնի է, որ իւրաքանչիւր վարկած կեանքի իրաւունք ունի այնքան ժամանակ, քանի դեռ գիտութիւնն իր յայտնագործութիւններով չի ժխտել դրանք:*

*Միանգամից ասեմ, որ իմ խնդիրը այս կամ այն վարկածը ժխտելը կամ հաստատելը չէ, ոչ էլ Աստծոյ-Ա րարչի ամենաստեղծ զօրութեան հանդէպ դոյզն-ինչ թերահաւատութիւնը: Ես անվերապահ հաւատում եմ Արարչի ամենաստեղծ զօրութեանը, ամենակարող ուժին:*

*Խնդիրն այլ մի տեղ է, ուրիշ մի հարթութեան վրայ. աշխարհ ստեղծման առասպելի շարադրանքը, որով սկսւում է Սուրբ Գիրքը, մի տեսակ, կիսատ տեղից սկսելու տպաւորութիւն է թողնում. պատմութիւնը գրի առնողը կամ գրի առնողները ոչ մի տեղեկութիւն չեն հաղորդում, թէ այդ ի՞նչ խաւար էր, որ տիրում էր անհունի վրայ, այդ ի՞նչ խաւար ջրեր էին, որոնց վրայ շրջում էր այդ ժամանակ գոյութիւն ունեցող միակ լոյսը, որ ԱՍՏԾՈՅ Հոգին էր կամ Աչքը, եւ ի՞նչ էր որոնում: Անժխտելի է, որ այդտեղ կայ մի նախապատմութիւն, որ ինչ-ինչ պատճառներով զանց են առել գրի առնողները՝ գերադասելով նոր կեանքի սկիզբը մատուցել իբրեւ արարչագործութեան նախասկիզբ: Առասպելից տրամաբանական մի իրականութիւն դուրս քաշելու գաղափարը ներկայանում է ինքնամատոյց ձեւով:*

*Ահա այսպէս: Իսկ եթէ դա Առաջին մեծ ջրհեղե՞ղն էր, որ Աստուած ստիպուած էր անել՝ սրբագրելու համար այն կեանքը, որ անտանելի էր դարձել երկրի վրայ, ինչպէս նա դա արեց Նոյի հետ կապուած ջրհեղեղի ժամանա՞կ: Կարծում եմ՝ հնարաւոր է, որ եղել է մէկ ուրիշ, պայմանականօրէն ասենք, «քաղաքակրթութիւն», որ ընթացել էինք նրա յօշոտման ճանապարհով, եւ որի իրական հետքերն այսօր գիտնականները յայտնաբերելով երկրի վրայ եւ դրանց համար չունենալով ոչ մի հաւաստի բացատրութիւն, ստիպուած դիմում են վարկածների օգնութեանը՝ այդ ամբողջը տեղաւորելով անյայտի-անբացատրելիի-առեղծուածի դաշտում, իսկ դրանց հետ կապուած առասպելական պատմութիւններն ու երեւոյթները պահէն տալիս ենթագիտակցութեանը: Մինչդեռ եթէ ընդունենք, որ դա Առաջին մեծ ջրհեղեղն էր. երկնքից թափուող քարերը, երկրից բարձրացող փոշու ամպը եւ ալեկոծ ահռելի ջրերը միանգամայն իրական պատկերն են «անհունին տիրող այն խաւարի», որի մասին գրում է Սուրբ Գիրքը: Եթէ ընդունենք՝ պարզ կը դառնայ, որ դրանից առաջ երկիրը բնակեցուած է*

*Շար.ը էջ 19*



ՄԱՇՏՈՑ ԳՈԼԷՃ
Տիկնանց Օժանդակ Մարմին
Զաւեշտի Բայաթիկ Երեկոյ
Կատարողութեամբ՝
Տաղանդաշատ Երգիծաբան



ՍՏԵՓԱՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ
Ուրբաթ, Մարտ 22, 2013
Երեկոյեան ժամը 7:00-ին
Raffi's Banquet Hall
3887 E. Sierra Madre Blvd., Pasadena CA
Մուտքի Նուէր՝ $30
Համադամ ճաշեր   Գեղարուեստական Յայտագիր   Անակնկալներ
Տոմսերու համար հեռաձայնել՝
Մաշտոց Գոլէճ՝ 818- 548-9345 Արփի՝ 818-912-0884 Իրմա՝ 626- 272-9384

# «ԱՐԱՐԱՏ 73»- 40 ՏԱՐԻ ԱՆՑ.
## ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ ՆՐԱՆՑ ԴԻՄԱՒՈՐՈՒՄ ԷԻՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՄԲ




*«Հայ ֆուտբոլիստների այսօրուայ յաջողութիւնը ամենակարեւորն էր: Նրանց մասին յաւերժ կը յիշեն նաեւ յետագայ սերունդները». 40 տարի առաջ լոյս տեսած Հայաստանի միակ մարզական պարբերական «Հայաստանի Ֆիզկուլտուրնիկ»-ն այսպէս է գրել այդ օրերի մասին: Անդրադառնալով «Արարատ»-ի երկու ձեռքբերումներին՝ ԽՍՀՄ գաւաթի նուաճման եւ ախոյեան դառնալու փաստին, թերթի յօդուածագիրը նշում է, որ չնայած ունեցած բազմաթիւ մեծ ու փոքր խոչընդոտներին, թիմը կարողացաւ պատուով եզրափակել 1973 թուականի մրցաշրջանը:*

*«Արարատ»-ի երկու յաղթանակները պայմանաւորուած էին ոչ միայն լաւ խաղացողներով, այլ նաեւ կուռ մարզչական կազմով:*

*Աւելի ուշագրաւ եւ հպարտութիւններ չնչող վերլուծական մի յօդուած եւս պատմում է մեր երազանքն իրականութիւն դարձրած «Արարատ 73»-ի մասին: Ռուս մարզական տեսաբանը, իր գեղեցիկ՝ «Արարատի երկու գագաթները» ծաւալուն յօդուածում խօսում է այն մասին, թէ «բաց ֆուտբոլ» խաղացող մեր թիմը ինչպէս է իրեն դրսեւորել մարզադաշտում: «Բաց ֆուտբոլ» խաղալու համար պահանջւում է ոչ միայն վարպետութիւն, այլ նաեւ արիութիւն, եւ ոչ միայն ֆուտբոլիստներից, այլ նաեւ մարզիչներից»:*




*Հեղինակը հերքել է նաեւ այն կարծիքը, թէ «երկու նապաստակի հետեւից վազողը մէկին էլ չի բռնի: Այնուամենայնիւ, «Արարատ»-ը «վազեց»:*

*Այդ տարուայ խորհրդային, ինչպէս նաեւ՝ արտասահմանեան մարզական մամուլը հիացական բազմաթիւ նիւթեր եւ թղթակցութիւններ են տպել «Արարատ»-ի յաղթանակների մասին: Լիբանանում լոյս տեսնող «Լաաւիու լեբան....» շաբաթաթերթը մի ամբողջ էջ է նուիրել «Արարատ»-ի հանդիպումներին: Պարբերականն իր «Արարատը» կախարդում է լիբանանի հայութեանը» վերնագրի տակ, նշում է, որ «Արարատ»-ի հանդիպումներին հետեւում է ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլ նաեւ Ամերիկայում, Ասիայում եւ Եւրոպայում ապրող ամբողջ հայութիւնը:*

*«Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթի ֆուտբոլային տեսաբան Արսէն Բաբայեանը, ով ամենուրէք «Արարատ»-ի կողքին է եղել, մի «պատառիկ» յուշ ներկայացրեց «Արմենպրես»-ին ԽՍՀՄ գաւաթի «Արարատ» Երեւան-«Դինամօ» Կիեւ եզրափակիչ խաղից, որը տեղի է ունեցել Մոսկուայում:*

*«Մեր թիմը մէկ օր առաջ էր գնացել Մոսկուա: Ես եւ լուսանկարիչ Ռաֆիկ Հէքեքեանը միասին գնացինք: Մարզադաշտում լրագրողների օթեակում էինք նստած: Այն ժամանակ «Դինամօ-Կիեւ»-ը ԽՍՀՄ ուժեղագոյն թիմերից մէկն էր: Խաղի առաջին կէսն անցաւ գոլազուրկ ոչ-ոքիով: Երկրորդ խաղակէսում Նորայր Մեսրոպեանը խախտեց խաղի կանոնները՝ վայր գցեց Բուրեակին: Մրցավարը նշանակեց 11 մեթրանոց հարուած: Բաց թողած գնդակը մի տեսակ սթափեցրեց մեր ֆուտբոլիստներին: Հանդիպումն աւելի հետաքրքիր դարձաւ եւ խաղաւարտից ընդամէնը մէկ րոպէ առաջ՝ 89-րդ րոպէին, Ալեքսանդր Կովալենկոյի հեռահար փոխանցումը Նիկոլայ Ղազարեանն ուղղեց դէպի Լեւոն Իշտոյեանը: Կատարուածից մարզադաշտը ալեկոծուեց: Իշտոյեանը գրաւել էր մրցակցի դարպասը: Հաշիւը դարձաւ 1-1:*

*Յաղթողին որոշելու համար նշանակուեց լրացուցիչ ժամանակ: Այստեղ եւս փայլեց Իշտոյեանը: Նա 103-րդ րոպէին խփեց յաղթական երկրորդ գնդակը: Եւ ԽՍՀՄ գաւաթն ուղեւորուեց Հայաստան: Հանդիպման աւարտից յետոյ իջայ հանդերձարան: Բիւրեղապակեայ գաւաթը ես էլ ձեռքս առայ: Անափ ուրախութիւն էր՝ չնայեած Զանազանեանի երկու ոտքերն էլ վնասուած էին: Իմ հարցին աւագ մարզիչ Նիկիտա Սիմոնեանը կարճ պատասխանեց. «Ամենագեղեցիկը հաշիւն է», իսկ Առնօ Բաբաջանեանն ինձ ասաց. «Հալ ու մաշ եղանք այդ յաղթանակի համար»: Խաղի մեկնաբանութիւնը գիշերը հեռախօսով թելադրեցի թերթին: Թիմը յաջորդ օրը վերադարձաւ Երեւան: Ես եւ լուսանկարիչը գնացինք Դոնեցկ, որտեղ արդէն գաւաթակիր «Արարատ»-ն օրեր անց հանդիպելու էր «Շախտյոր»-ի հետ: Որպէս մարզական լրագրող ասեմ, որ մեր թիմի յաղթանակին մեծապէս նպաստեց «Դինամօ»-ի մարզչի սխալը: Նա հանդիպման 86-րդ րոպէին Բուրեակին, իսկ 88-ին Բլոխինին փոխարինեց պահեստայիններով: Կարծում էր, թէ արդէն յաղթել էին: 89-րդ րոպէին Իշտոյեանը խփեց առաջին գնդակը: Ինձ համար եզրափակիչ այդ հանդիպումը աննկարագրելի էր: Անկեղծ ասեմ, հիմա էլ նոյն հպարտութիւնն ու ոգեւորութիւնն եմ ապրում»:*

*«Հայաստանի ֆիզկուլտուրնիկ»-ի, իսկ այժմ «Արմենպրես» լրատուական գործակալութեան լուսանկարիչ Ֆելիքս Առուստամեանն «Արարատ»-ի յաղթանակը համեմատեց շախմատիստ Տիգրան Պետրոսեանի աշխարհի ախոյեան դառնալու հետ: «Այդ օրը նոյն ուրախութիւնն ու ոգեւորութիւնն էր ապրում հայ ժողովուրդը: Ես գնացել էի օդանաւակայան, ուր հաւաքուել էին հազարաւոր երկրպագուներ՝ իրենց սիրելի թիմին դիմաւորելու համար: Ամենուր տօն էր ու ցնծութիւն»,- պատմում է Առուստամեանը:*

*Այսպիսի յօդուածներով եւ ականատեսների վկայութեամբ է նշանաւորուել 1963 թուականից «Արարատ» անունն ստացած մեր թիմի 1973 թուականը: Այդ յաղթանակների օրերը մեր ժողովրդի համար մնացին որպէս տօնական օրեր:*

**«Արարատ 73»–ի,**
**կենսագրութիւնը» թերթեց**
**Վարվառա Հայրապետեանը**
**ԱՐՄԵՆՊՐԵՍ**

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 * $100,00 (first class) for USA
$ 100,00 (Air Mail) for Canada.
$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----------------------------------------
Address: ---------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :----------------------- Fax : -------------------------






## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱԼԱԾԱՆՔԸ

*Մոպպինկ եզրը կը բնորոշէ ժամանակակից գրասենեակային հալածանքը: Որպէս կանոն, ան գործի կը դրուի նոր աշխատակիցներու առկայութեան ժամանակ: Այսպիսի իրավիճակի մէջ աշխատիլը ի հարկէ սարսափելի է, բայց հարկ չկայ գործ փնտռելու մասին մտածելու, քանի որ այս փորձը կրնայ ձեզի շատ բան սորվեցնել:*

** Ինչո՞ւ ուրախ չեն ձեր ներկայութեան համար.*

*Առհասարակ չսիրուիլը որոշակի պատճառներ ունի: Անոնցմէ մի քանին ձեզի կը վերաբերին: Շրջապատող կանանց կողմէ չսիրուելու պատճառ կրնայ ըլլալ ձեր վարքը, տղամարդ գործընկերներու վերաբերմունքը ձեր նկատմամբ, ինչպէս նաեւ արտաքոյ հագուածքը:*

*Բայց նաեւ կան ձեզի հետ անմիջական կապ չունեցող պատճառներ: Օրինակ, աշխատախումբին մէջ գոյութիւն ունեցող մրցակցութիւնը, որուն փաստօրէն դուք ալ առնչուած էք, առանց այդ մասին տեղեակ ըլլալու: Հնարաւոր է, որ տուեալ հաստատութիւնը ծանր պայմաններու մէջ է, եւ աշխատակիցներն ալ կը կարծեն, թէ դուք իրենցմէ կրնաք խլել արդէն ոչ-առատ հացը:*

*Մէկ խօսքով, պէտք է գլուխ հանել իրավիճակէն, որպէսզի հնարաւոր ըլլայ խուսափիլ սխալներէն ու յանկարծահաս խնդիրներէն: Աշխատանքային հալածանքը կրնայ ա՛յն դրական կողմը դառնալ, որ լաւ ձեւով պիտի կոփէ ձեզ՝ ապագայ աշխատանքային գործունէութեան ընթացքին: Փորձեցէք ինքնուրոյն ելք գտնել ստեղծուած իրավիճակներէն ու երբեք ձեր վիճակին համար ուրիշները մի մեղադրէք:*

** Մի փորձէք բոլորին կողմէ հաւնուիլ.*

*Սկսնակներու ամենէն մեծ սխալը այն է, որ յայտնուելով ոչ ցանկալի իրավիճակի մէջ, կ'ուզեն որ բոլորը անխտիր հաւնին իրենց, այդպիսով սրելով իրավիճակը: Իրականութեան մէջ, այդ հաւնուելու ցանկութիւնը կրնայ այնքան ալ ճիշդ ձեւով չըմբռնուիլ: Հնարաւոր է, որ սկսին ձեզ երկերեսանի անուանել եւ ոչ թէ հաւատալ մարդոց հետ բարեհաճ ըլլալու ձեր ցանկութեան: Այդ իսկ պատճառով գործընկերներու շրջանակին մէջ փնտռեցէք մարդիկ, որոնք իրականութեան մէջ կը հետաքրքրեն ձեզ: Մտերմացէք մէկ անձնաւորութեան հետ, ինչ որ արդէն պիտի օգնէ ամուր հող զգալու ձեր ոտքին տակ: Եթէ այս վերջինը յաջողիք կատարել, ապա վստահ եղէք, որ ուշ կամ կանուխ պիտի կարենաք ձուլուիլ ամբողջ կազմին հետ:*

** Թոյլ տուէք ձեզի լաւ ճանչնան.*

*Դուք նոր աշխատանքի կ'անցնիք ու ձեր մասին տակաւին ոչինչ յայտնի է: Այս փաստը ենթադրութիւններ ընելու եւ ձեր անձին*

*Շար.ը էջ 18*

## ՓՈՐԻ ՃԱՐՊԵՐԸ ՀԱԼԵՑՆԵԼՈՒ ՆՈՐ ՁԵՒԵՐ

*1) Աշխոյժ եւ արագ կշռոյթով մարզանք ընել.- Մարմնային շարժումը կ'օգնէ այրելու ամէն տեղ կուտակուած ճարպերը, սակայն եթէ կ'ուզես փորի բաժինինը հալեցնել, պէտք է մարզանքի կշռոյթը արագցնես: Պատճառն այն է, որ բազմապատկուած յոգնութիւնը կ'ամրապնդէ աճման հորմոնի արտադրութիւնը, ինչ որ իր կարգին կ'օգնէ այս առնչութեամբ գոհացուցիչ արդիւնքներու հասնելու:*

*2) Գիշերային լոյսը թեթեւցուր.- Այս տեսակի գիրութիւնը ուղղակիօրէն առնչուած է մարմնին մէջ լարուածութեան հորմոնի (քորթիզոլ) քանակի բարձրացումով, ինչ որ իր կարգին կախեալ է աչքի ցանցին ստացած լոյսով (կամ լոյսերով):*

*Քնանալէ գոնէ մէկ ժամ առաջ ելեկտրոնային սարքեր գործածելէ (նաեւ համակարգիչ) հեռու մնացիր, ինչ որ սահման կը դնէ գիշերը մարմնի պարտադրած քորթիզոլի քանակին:*

*Գիշերուան այս ժ ա մ ա ն ա կը նախընտրելի է տրամադրել հանգիստի:*

*3) Ցիշէ բաւարար չափով (եւ կանուխ) քնանալու կարեւորութիւնը.-*

*Իւրաքանչիւր գիշեր հինգ կամ վեց ժամ քնացողը 60 առ հարիւր տոկոսով աւելի մեծ փորէ կը տառապի քան անոնք՝ որոնք եօթ կամ ութ ժամ հանգիստ քուն կը քնանան: Անքնութիւնը ախորժակ զօրացնող կրիլին հորմոնի արտադրութիւնը կը խթանէ, ինչպէս նաեւ կը սահմանափակէ ախորժակը կանոնաւորող լիփթին հորմոնի քանակը: Այլ պատճառ մը եւս. քիչ քնացողները հակում կ'ունենան շաքարով եւ ջերմուժերով հարուստ ածխաջրատներու դիմելու:*

*4) Քացախ խմէ.- Ճապոնացի գիտնականներ կը խրատեն օրական երկու դգալ քացախ (գաւաթ մը ջուրին աւելցնելով) խմել հիմնական երկու ճաշի ժումերէն առաջ: Քացախը կը պարունակէ ասիթիք կոչուող ասիտը, որ կը մղէ լեարդը՝ ջերմուժներ այրելու:*

*5) Մածուն կեր.- Օրական սննդակարգիդ մէջ 1000 միլիկրամ մածունի սպառումով պիտի կարենաս 80 առ հարիւր տոկոսով աւելի փորի ճարպերէդ կորսնցնել քան անոնք՝ որոնք այս քանակին կէսով կը գոհանան (ըստ ամերիկեան Թենըսի համալսարանին կատարած ուսումնասիրութեան), որովհետեւ մածունը կ'օգնէ այդ ճարպերը այրելու:*

*6) Ծաղիկներու հոտին դիմէ՝ հանգիստ ընելու.- Այդ մէկը կ'օգնէ պայքարելու լարուածութեան դէմ, որ պատասխանատու է մարմնին մէջ քորթիզոլ եւ ինսիւլին հորմոններու քանակի բարձրացման: Այսօր յստակ իրողութիւն է, թէ այս հորմոնները կը մղեն փորին վրայ ճարպեր կուտակուելու:*

*7) Յաւելեալ քանակութեամբ D կենսանիւթի դիմէ.- Այս կենսանիւթով հարուստ սննդականոնը աւելի լաւ կերպով առիթ կու տայ յաւելեալ քիլոկրամները հալեցնելու, ինչպէս նաեւ անբաղձալի սանթիմեթրները կորսնցնելու (ըստ ամերիկեան Մինեսոթա համալսարանին կատարած ուսումնասիրութեան):*

*8) Դադրեցուր ծխախոտը.- Հոլանտական համալսարանի մը գիտահետազօտողները յայտնաբերած են, որ ծխելու սովորութիւնը մեծ տոկոսով պատասխանատու է փորի աճեցման: Կ'ենթադրուի, որ ծխելը կը սահմանափակէ մարմնին մէջ էսթրոժին հորմոնին արտադրութիւնը, ինչ որ կը զօրացնէ առնական հորմոնին ազդեցութիւնը, բան մը՝ որ առնչուած է խնձորաձեւ գիրութեան հետ:*

## 30 ՕՐԷՆՔՆԵՐ ՁԵԶ ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏԵՆ

*Ամուսնական կայուն յարաբերութիւնը կը կերտուի երկկողմանի միացեալ հիմքերու եւ սկզբունքներու վրայ, ինչպէս փոխ-վստահութիւնը, յարգանքը եւ առօրեայ կեանքի պատասխանատուութիւններուն հանդէպ յանձնառութիւնը, եւայլն: Այս օրէնքները հրամայական են յարատեւութեան եւ երջանկութեան համար, որոնք տարիներու ընթացքին կը զօրանան ու կը բարգաւաճին:*

*Արդարեւ, ի՞նչ է ձեր վիճակը. ներդաշնակ ու համաձա՞յն էք անոնց առնչութեամբ, արդեօք կը հիմնէ՞ք գեղեցիկ ապագայ մը: Այո, կամ ոչ պատասխան տուր հետեւեալ հարցումներուն եւ ապա ստուգէ արդիւնքները:*

*1) Ծանր վիճաբանութենէ ետք կը հաշտուիք կրակոտ հանդիպումով մը:*

*2) Արգելք չունիս մինչեւ աշխարհին վերջը իրեն հետեւելու, եթէ անոր գործին եւ կեցութեան պայմանները այդպէս պարտադրեն:*

*3) Ըստ ձեր երկուքին, ամուսնալուծումը մեծ ձախողութիւն է ամոլներուն համար:*

*4) Մանաւանդ զգացական հարցերու մէջ դուն շատ ուրախ ես կողակիցիդ հետ:*

*5) Ջերմ զգացումներդ կ'արտայայտես:*

*6) Անվայել վերաբերմունքին համար բաց սրտով կը ներես զինք:*

*7) Ուրիշներուն դիմաց իրար վիրաւորելէ կը խուսափիք:*

*8) Ամուսնական կեանքիդ մէջ անհատականութիւնդ եւ երջանկութիւնդ աւելի կ'աճին:*

*9) Նեղացուցիչ կամ ոչ-անհրաժեշտ հարցումներ չէք հարցներ իրարու:*

*10) Յաջողցնելու նպատակով միացեալ ծրագիրներ ունիք:*

*11) Կողակիցդ գեղեցիկ եւ գրաւիչ է:*

*12) Միասին ռոմանթիք պտոյտներ կը կատարէք:*

*13) Ձեզմէ իւրաքանչիւրը կը քաջալերէ միւսին ձգտումներն ու ծրագիրները:*

*14) Նիւթական եւ դրամական հարցերուն մեծ կարեւորութիւն կու տաք:*

*15) Ձես զղջար ամուսնութեանդ համար:*

*16) Քեզի հանդէպ կողակիցիդ զգացումներուն վրայ կասկած չունիս:*

*17) Անցեալին հարցերու հանդիպած էք, սակայն յաջողութեամբ շրջանցած էք զանոնք:*

*18) Դուն վստահ ես, որ կողակիցդ կը ներէ քեզի՝ գործած մեծ սխալիդ համար:*

*Շար.ը էջ 18*

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

# ՅՈՒՇԱՐՁԱՆ

## ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ






Մրտաբուխ նուէրով գիրքէն օրինակ մը ստանալու համար հեռաձայնել՝
**(626) 797-7680** կամ
**(818) 429-2322** թիւերուն

Լաթակազմ, մաքուր տպագրութեամբ, 580 էջերէ բաղկացող գիրքը: Ժողովածուն լոյս ընծայուած է Բենիամին Ժամկոչեանի նախկին սաներուն կողմէ, որպէս երախտիքի տուրք անոր ծննդեան 115 ամեակի առիթով:

Յուշարձան ժողովածուն, նաեւ իր մէջ կ'ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնին կրթական, մանկավարժական, ազգային-մշակութային, Պէյրութի Սահակեան վարժարանի կէս դարեայ կենսապատումը:

Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Բենիամին Ժամկոչեանի ժամանակիցներուն յուշերու ծաղկաքաղը:

**ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ**

**Մայիս 10, 2013**

**Բենիամին Ժամկոչեանի գիրքի ներկայացում**

**Սահակեան Սանուց Միութեան**

**կազմակերպութեամբ**

**Մանրամասնութիւնները յաջորդիւ:**

## ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ

*Շարունակուած էջ 8-էն*

*Պատրիարքին:*

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2012 թ. գործունէութեան մասին զեկոյց ներկայացրեց Մայր Աթոռի դիւանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրեանը՝ անդրադառնալով անցնող տարում Մայր Աթոռի կողմից ներեկեղեցական եւ միջեկեղեցական ասպարէզներում իրագործուած ծրագրերին, Սուրբ Էջմիածնի քարոզչական, կրթադաստիարակչական եւ սոցիալական առաքելութեանը: Տեղեկացուեց, որ 2012 թ. հրապարակուել են հայրապետական 57 կոնդակներ, ձեռնադրուել են 9 քահանաներ՝ 2 կուսակրօն եւ 7 ամուսնացեալ, ինչպէս նաեւ 35 սարկաւագներ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականութեան թիւը 668 է, որոնցից՝ 56-ը եպիսկոպոս, 33-ը՝ վարդապետ եւ ծայրագոյն վարդապետ, 61-ը՝ աբեղայ, 423-ը քահանայ, 95-ը՝ սարկաւագ, ովքեր ծառայում են Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարբեր կառոյցներում: Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատութիւններում ուսանողների թիւը 220 է:*

*Մայր Աթոռի հովանու ներքոյ գործող եօթ Հայորդեաց տներ յաճախել են 5000 երեխաներ: Սոցիալական ոլորտում նոր կարեւոր ձեռնարկ էր Արաբկիրում «Նազգաշեան մանուկների տուն» կեդրոնի բացումը, որտեղ 10 տարեկանից բարձր 20 աղջիկներ ստանում են մասնագիտական կողմնորոշում եւ սոցիալական աջակցութիւն: Անցնող տարում Մայր Աթոռի 51 բաժինների կենսագործունէութիւնը ապահովել են 1174 անձինք՝ 142 եկեղեցականներ եւ 1032 աշխարհականներ:*

*Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամները գոհունակութեամբ ընդունեցին զեկոյցը՝ մաղթելով անսասանութիւն եւ պայծառութիւն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:*

*Գերագոյն հոգեւոր խորհուրդը քննարկեց նաեւ եպիսկոպոսաց ժողովի կազմակերպման հետ առնչուած հարցեր: Վերահաստատուեց ժողովն առաջիկայ Սեպտեմբերին Մայր Աթոռում գումարելու որոշումը եւ քննութեան առնուեցին ԱՄՆ Հայոց Արեւելեան թեմի առաջնորդ, Կանոնական յանձնախմբի համաատենապետ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի, Տաւուշի թեմի առաջնորդ, Սրբադասման յանձնախմբի համաատենապետ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսեանի եւ Մայր Աթոռի դիւանապետ եւ ծիսական յանձնախմբի համաատենապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրեանի զեկոյցները՝ առնչուած եպիսկոպոսաց ժողովի օրակարգային նիւթերին:*

*Ժողովի երկրորդ նիստին քննարկուեցին Հայոց Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցին նուիրուած Հայ Եկեղեցու կողմից իրականացուելիք միջոցառումների առաջարկները: Առաջարկների յանձնախմբի աշխատանքը ներկայացրեց Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայէլ եպիսկոպոս Աջապահեանը: Այս առնչութեան ծրագրուած միջոցառումները եւ այդ շրջանակներում Մայր Աթոռի հետ հնարաւոր համագործակցութիւնը ներկայացրեց նաեւ նիստին հրաւիրուած ՀՀ Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի տնօրէն Հայկ Դեմոյեանը: Գերագոյն հոգեւոր խորհուրդը յանձնարարեց ԱՄՆ Արեւմտեան թեմի առաջնորդ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի գլխաւորած յանձնաժողովին վերամշակել առաջարկները, կազմել միջոցառումների ծրագիրն ու ժամանակացոյցը եւ ձեռնամուխ լինել աշխատանքների իրականացմանը:*

*Ժողովի ընթացքում լսուեց նաեւ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատութիւնների վերատեսուչ Տ. Գէորգ եպիսկոպոս Սարոյեանի զեկոյցը՝ Գէորգեան հոգեւոր ճեմարանի, Վազգէնեան հոգեւոր դպրանոցի եւ Հառիճավանքի ընծայարանի վերաբերեալ: Գէորգ Սրբազանը, անդրադառնալով Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատութիւնների գործունէութեանը, մասնաւորաբար խօսեց հոգեւորականութեան պատրաստութեան ծրագրերի, ինչպէս նաեւ Հայաստանի բուհերի ու արտերկրի համալսարանների եւ հոգեւոր հաստատութիւնների հետ համագործակցութեան մասին:*

*Հանրակրթական ոլորտում Մայր Աթոռի գործունէութեան հիմնական ուղղութիւններին անդրադարձաւ Քրիստոնէական դաստիարակութեան կեդրոնի տնօրէն Տ. Վարդան աբեղայ Նաւասարդեանը՝ ընդգծելով նոր կեդրոնի արդիւնաւէտ գործակցութիւնը ՀՀ Կրթութեան եւ գիտութեան Նախարարութեան եւ թեմերի հետ մի շարք կրթական ծրագրերի շրջանակներում եւ յատկապէս «Հայ Եկեղեցու պատմութիւն» առարկայի ուսուցիչների վերապատրաստութեան գործում: Ի թիւս տարբեր ծրագրերի Հայր Սուրբը տեղեկացրեց, որ այս տարի ծրագրուած է դպրոցներում անցկացնել «Հայ հոգեւոր եւ ազգային երգի փառատօն» հանրապետական մրցոյթ: ՀԽ անդամները գոհունակութեամբ ընդունեցին կատարուած աշխատանքների մասին զեկոյցները՝ կարեւորելով ինչպէս հոգեւորականութեան պատրաստութիւնը, այնպէս եւ հոգեւոր-քրիստոնէական արժէքների ջամբումը երիտասարդ սերնդին:*

*Ժողովի երրորդ նիստին Գերագոյն հոգեւոր խորհուրդն անդրադարձ կատարեց եկեղեցու կողմից սիրիահայութեանը ցուցաբերուող զօրակցութեանը: Տեղեկացուեց, որ այդ նպատա- կով Մայր Աթոռը 200 հազար ԱՄՆ տոլար գումար արդէն փոխանցել է, իսկ վերջերս տրամադրել է եւս 100 հազար ԱՄՆ տոլար: Գերագոյն հոգեւոր խորհուրդը յորդորեց թեմակալ առաջնորդներին շարունակել առաւել ջանքեր ներդնել՝ համայնքներից օգնութիւն եւ օժանդակութիւն հասցնելու կարիքի մէջ գտնուող Սիրիայի հայ համայնքին:*

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱԼԱԾԱՆՔԸ

*Շարունակուած էջ 17-էն*

*շուրջ յօրինուածքներ ստեղծելու հնարաւորութիւն կու տայ: Իսկ արդեօք գործընկերները հնարաւորութիւն ունեցա՞ծ են ձեզի աւելի լաւ ճանչնալու: Ի՞նչ կրնան խօսիլ ձեր մասին, բացի անկէ, որ աշխատանքի կը ներկայանաք ժամանակին, ամուսնացած չէք եւ ստացած էք տնտեսագիտական կրթութիւն, օրինակ: Յիշեցէք, թէ ձեր շրջապատին մէջ ինչ սիրով ընդունուեցաւ այդ նոր ընդունուած աղջիկը, որ առաջին իսկ օրը պատմեց, որ կը պաշտէ ֆրանսական ֆիլմը, որ արձակուրդներու ժամանակ իր լուսանկարչական մեքենային հետ արշաւներու կ'երթայ, եւայլն:*

** Վստահ մտէք պայքարի մէջ կամ զիջեցէք.*

*Գրասենեակային հալածանքները շատ պարագաներու ծնունդ կ'առնեն մրցակցութեան պատճառով: Մինչեւ ձեր յայտնուիլը աշխատողներէն մի քանին աչք ունէին ձեր այժմու դիրքին վրայ, եւ շատ պատահաբար կը պարզուի, որ դուք, յանկարծ յայտնուելով ստանձնած էք այդ դիրքը: Վիրաւորական է: Բացի անկէ, ձեր ներկայութեամբ կ'աւելցնէք աւելի բարձր պաշտօնի յաւակնողներու թիւը: Փաստ մը, որ դժուար թէ ուրախացնէ ձեր գործընկերները:*

*Ի՞նչ կը մնայ ընել: Առաջին հերթին գիտակցեցէք, որ հալածանքը ամենեւին կապ չունի անձին եւ մասնագիտական որակին հետ: Երկրորդ՝ ձեր նկատմամբ ընդհանուր տարածում գտած վերաբերմունքը դիտեցէք որպէս հաճոյախօսութիւն:*

*Ձեզ կ'ընդունին որպէս զօրաւոր մրցակից, իսկ դուք միայն պէտք է լաւ զգաք անկէ եւ աւելի բարձրացնէք ձեր ինքնագնահատականը: Երրորդ՝ ընդունեցէք ձեր մասին եղած կարծիքն ու վերաբերմունքը, եւ սկսեցէք պայքարիլ առաջնորդի դիրքերը գրաւելու համար, եթէ անշուշտ կը փափաքիք զայն նուաճել: Եթէ մասնագիտական վերելքի աստիճանը ձեզ շատ չի հետաքրքրեր, ուրեմն փոխեցէք ձեր գործը: Դուք պէտք չէ ուրիշին փոխարէն խաղաք, եթէ կանոնները այնքան ալ չէք հաւնիր:*

** Մնացէք ինչպէս որ էք.*

*Անկախ բոլորի կարծիքէն, մի փոխէք ձեր սկզբունքները: Մի զոհաբերէք ձեր տեսակէտները եւ բնաւորութեան գիծերը միայն անոր համար, որ ձեզի ընդունին անձնակազմի անդամները: Զոհաբերութեան դիրքորոշումը միշտ ամէնէն տկարն է: Դուք ոչ ոքի ոչինչ պարտական էք եւ կրնաք անձամբ որոշել, թէ ինչ քայլերու պատրաստ էք դիմել: Այս կը վերաբերի բոլոր ներքին խաղերուն, որոնց կանոններուն ենթարկուելու պարագային պէտք է ունէք մէկուն կողմը բռնէք: Մի շտապէք հասկնալու, թէ որու հետ եւ որու դէմ պէտք է ըլլալ պաշտօնակիցներուդ շրջանակին մէջ ընդունուած դառնալու համար:*

*Որո՞նք կը յաղթեն այս իրավիճակներուն մէջ: Սառ սիրտ ունեցողներն ու ի ծնէ առաջնորդ եղողները, որոնք այս կամ այն կերպով կը վաստկին իրենց հանդէպ լաւ վերաբերմունքը:*

***

*Հաւանաբար դուք ալ մոպինկ-ի ականատես եղած էք, երբ զոհը ի վերջոյ «կը կշտաէ» գործընկերները՝ անոնց համար բանալով սրտի եւ հոգիի բոլոր դուռերը, ամէն անգամ կազմակերպելով հիւրասիրութիւններ, նուէրներ՝ առիթով կամ առանց առիթի: Գործընկերները կը գնահատեն, բայց աւելի յաճախ կը չարաշահին անոր՝ յանուն ստեղծուած իրավիճակէն փրկուելու մտահոգութիւնը:*

*Արդեօք ընդունելի՞ է ձեզի համար այս միջոցը: Ի վերջոյ, աշխատանքը ինքնադրսեւորման դաշտ է, ոչ թէ լաբիրինթոս, ուր կրնաք կորսնցնել դուք ձեր անձը:*

## 30 ՕՐԷՆՔՆԵՐ ՁԵԶ ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏԵՆ

*Շարունակուած էջ 17-էն*

*19) Կը սիրես միայն իրեն հաւատարիմ ըլլալ:*

*20) Ձեր սեռային կեանքը երկուքիդ համար լաւ եւ գոհացուցիչ է:*

*21) Դուն գուրգուրանքով ես իր հետ (եւ ինքն ալ քու հետդ):*

*22) Միշտ կը յիշէք ձեզ միացնող գեղեցիկ պահերը:*

*23) Աչք կը խփես կողակիցիդ պզտիկ սխալներուն հանդէպ:*

*24) Բոլոր պայմաններուն մէջ կը պայքարիք ձեր յարաբերութեան բարօրութեան համար:*

*25) Կողակիցդ իր ամուսինի դերը գերազանցօրէն կը կատարէ:*

*Արդիւնքները.-*

** Եթէ 19 եւ աւելի «Այո» հաւաքած ես.- Համերաշխ էք եւ իրարու հետ կ'աշխատիք երջանիկ ընտանիք մը կազմելու:*

*Իրարու կարծիքը քաղաքավարութեամբ մտիկ կ'ընէք, թէկուզ որ համաձայն չէք իրար, եւ կը վիճաբանիք հանդարտօրէն: Կը փորձէք ձեր տեսակէտը պարզել, փոխանակ որեւէ ոճով ձեր անձնականը միւսին պարտադրելու: Ձեր զգացումները անկեղծ եւ զօրաւոր են, սակայն երբ առիթը ունենանք քիչ մը արկածախնդրութիւն եւ ռոմանթիզմ բերէք ձեր կեանքէն ներս:*

** Եթէ 12էն 18ի միջեւ «Այո» հաւաքած ես.- Ձեր զգացումները զօրաւոր են: Ապագայի հանդէպ ձեր նայուածքը դրական է, մանաւանդ որ միացեալ ծրագիրներ եւ սկզբունքներ ունիք: Ձեր կեանքը եւ երջանկութիւնը պարզ է: Կ'աշխատիք մոռնալ ցաւալի յիշատակները եւ կը յարգէք կարգ մը հարցերու նկատմամբ ձեր զգայնոտութիւնը: Հակառակ կարգ մը անցողակի անհամաձայնութիւններուն, փառք կու տաք Աստուծոյ՝ ձեզ միացնելուն համար: Խուսափեցէք անպէտք վիճաբանութիւններէ, ինչպէս նաեւ առանց խորհրդակցելու որոշումներ առնելէ:*

** Եթէ 11 եւ նուազ «Այո» հաւաքած ես.- Քիչ մը մտահոգուած էք ձեր ապագայով եւ կը փորձէք բոլոր միջոցներով ձեր յարաբերութեան նեցուկ կանգնիլ: Շատ կ'ազդուիք ձեր շրջապատով եւ անոր մէջ տեղի ունեցող խօսակցութիւններով: Կը փորձէք ձեւացնել, որ միասին հանգիստ էք եւ կ'աշխատիք ձեր յարաբերութեան մասին դրական պատկեր մը հիւսել: Զօրաւոր միասնականութիւն չէք զգացած, ինչ որ ձեր մօտ կ'աւելցնէ ձախողելու հանդէպ վախը: Փորձեցէք ձեզ իրար միացնող եւ ձեր երկուքը հետաքրքրող ծրագիրներ մշակել:*

## ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

*ԿԱՐԻՆԷ ՏԵՓՈՅԵԱՆ վիրաբուժական յաջող գործողութեան մը ենթարկուելէ ետք այժմ տուն փոխադրուած է ապաքինման շրջանը բոլորելու համար:*

*Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը շնորհաւորէ եւ կատարեալ ապաքինում կը մաղթէ իր ժրաջան անդամուհիին:*

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*ԱՐՈՒՍԵԱԿ ՍԻՆԱՆԵԱՆ*

*ԱՐՈՒՍԵԱԿ ՍԻՆԱՆԵԱՆԻ մահուան առաջին տարելիցին առթիւ տեղի պիտի ունենայ շիրիմի այցելութիւն Կիրակի, 10 Մարտ, 2013, առաւօտեան ժամը 11:00ին, Հոլիվուտ Հիլզի Ֆորըսթ Լոն գերեզմանատան* Viel of Hope *հողատարածքին մէջ: Այնուհետեւ հոգեճաշ պիտի մատուցուի* Glendale Metropole *ճաշարանին մէջ,* 701 South Central Avenue:

*Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

*Սգակիրներ՝*
*Ամուսինը՝ Սամուէլ Սինանեան*
*Զաւակները՝*
*Տէր եւ Տիկ. Մանուկ Սինանեան եւ ընտանիք*
*Տէր եւ Տիկ. Կէրի Սինանեան եւ ընտանիք*
*եւ Սինանեան, Զիլինկիրեան, Ասատրեան, Գաբրիէլեան, Տէր Սահակեան, Սագոյեան եւ Հայրապետեան ընտանիքներ եւ հարազատներ՝ Լոս Անճելոսէն, Նիւ Եորքէն, Հայաստանէն եւ Ռուսիայէն:*

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԵԱՆ*

*Վաստակաշատ արձակագիր, գրականագէտ, «Մասիս»ի երբեմնի աշխատակից ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԵԱՆԻ մահուան առաջին տարելիցին առթիւ, Կիրակի, Մարտի 10ին, 2013, Առաջնորդարանի Ս. Ղեւոնդեանց տաճարի մէջ, յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան արարողութիւն:*

## ՎԱՀԷ ՎԱՀԵԱՆ... ԳԵՂԱՄ ՍԵՒԱՆ... ԵՒ ԵՍ...

*Շարունակուածէջ 14–էն*

*սաւ Գեղամ Սեւանի յառաջաբանով եւ խմբագրութեամբ 1984ին: Հայաստանի Գրողներու Միութիւնը նախաձեռնեց եւ կազմակերպեց գիրքը ներկայացնելու միջոցառումը:*

*- Գիտե՛ս, որ Մոսկուայ Արաբ Բարեկամներու հանդիպեցայ, գիտէին, որ հոս ես գիրքիդ համար....*
*- Արաբ բարեկամնե՛ր ... զարմացայ ես:*

*Բաճկոնին պզտիկ գրպանէն արաբերէն գրուած այցետոմս մը երկարեց ինծի: Բարձրաձայն կարդացի:*

***ՃԷԼԱԼ ՄԷԼԱՀ - ՄԱՀՄՈՒՏ ՀՐԷՅԹԱՆԻ - Ս. ՔԱՈՒԱՔԻՊԻ - ԽԱԼԷՏ ՄԱՂՈՒԹ*** *- Բացի* ***ՔԱՈՒԱՔԻՊԻՅԷՆ*** *միւսները յաճախ ներկայ եղած էին* ***ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ*** *անուան գրական սալոնս:* ***ՃԵԼԱԼ ՄԵԼԱՀ*** *Հալէպի Պետական Մշակութային Կեդրոնի Աւետիք Իսահակեանի փառաշուք 100 ամեակը իր հայասէր բարեացակամութեան շնորհիւ կրցած էինք կազմակերպել Պետական Մշակութային Կեդրոնէն ներս: Նաեւ Գրիգոր Զոհրապի երեկոյին կրցած էինք խօսիլ մեր Նորավէպի «Իշխանին» դառնաղէտ մահուան մասին ազատօրէն արաբերէն եւ հայերէն:*

*Դոկտ. Խալէտ Մաղութ եւ Մահմուտ Հրէյթանի Արաբ Գրողներու Միութեան հետ հիմնած մեր Թարգմանչական Կառոյցին հիմնադիր անդամներէն էին:*

*Հայաստանի Գրողներու Միութեան Նախագահ՝ Վարդգէս Պետրոսեան հեռաձայնը վերցուց: Գիրքիս ներկայացման օրը Սուրիացի արաբ մտաւորականութիւնը հիւրերն էին Հայաստանի գրողներու Միութեան եւ ներկայ գտնուեցան Սուրիահայ գրող Լիւսի Սիւլահեանի* ***ԱՆԱՒԱՐՏ ՍԻՐԱՆՈՒԱԳ ՀԱՏՈՐԻ*** *շնորհանդէսին:*

## ԾՈՎԻՆԱՐ ՀԱՅՈՑ ՀԻՆ

*Շարունակուածէջ 15–էն*

*եղել նոյնպէս Արարչի կողմից ստեղծուած քայլող ու թռչող կենդանի էակներով՝ դինոզաւրերով, իխթիոզաւրերով, կիկլոպներով եւ էլի չգիտեմ՝ ինչերով... Այդ հսկայամարմին, դժնատեսիլ կենդանի էակները օժտուած են եղել ահուելի ուժով, հաւանաբար, որպէսզի կարողանան դիմագրաւել բնութեան տարերքներին, բայց ի վերջոյ նրանց միջեւ ծագած կռիւներն ու պատերազմները նրանց հասցրել են ինքնայօշոտման: Հարց է առաջանում. թէ՞ Աստուած նրանց օժտած է եղել բանականութեամբ: Երկրագնդի բոլոր հատուածներում ցրուած կիկլոպեան կառոյցները թոյլ են տալիս եզրակացնելու, որ՝ այո՛, ինչ-որ խելք ունեցել են, որովհետեւ առանց խելք գործադրելու անհնար է նման շինութիւններ ստեղծելը, բայց հետեւելով ժամանակակից աշխարհի ուժային, ռազմական ու նիւթական գերիշխանութեան մրցավազքին, միաժամանակ նկատի ունենալով այդ արարածների անփառունակ վախճանը, ինձ թոյլ եմ տալիս եզրակացնել, որ նրանց կառավարել է ոչ թէ իրենց խելքը, այլ այդ խելքը բազմապատիկ անգամ գերազանցող ֆիզիքական ուժը: Եւ դա թոյլ չի տուել, որ նրանց խելքը վերաճի խելամտութեան: Ժամանակակից գիտութեան առջեւ այս հանգամանքը ոչ թէ սովորական դռներ, այլ հսկայ դարպասներ կարող է բացել՝ մարդկութեան յուսալի ապագայի բազում խնդիրներ լուծելու համար:*

*Եւ այսպէս ուրեմն՝ Առաջին այդ մեծ ջրհեղեղից յետոյ միակ լոյսը՝ Աստծոյ Աչքը կամ Հոգին շրջում էր խաւար ջրերի վրայ եւ ի՞նչ էր որոնում: Աստուած ասաց՝ «Թող լոյս լինի»: Եւ լոյս եղաւ: Լուսաւորուեցին բոլոր խաւար ջրերը, եւ Աստուած նախ տեսաւ ջրերի աստուածուհուն՝ Ծովինարին, որ ջրից մայրացել եւ երկու ջրեղէն զաւակներ էր լոյս աշխարհ բերել:*

*Ահա այս տեղ է հայոց հնագոյն էպոսի սկիզբը, այստե՛ղ՝ նոր կեանքի ու աշխարհակերտման ակունքներում:*

*Ու երբ Տէրը տեսաւ Ծովինարին ու նրա զաւակներին, հրճուեց Հոգին, ցնծաց. ասաց՝ այս անգամ կեանքի սկիզբը Ջուրն է, եւ Ծովինարի զաւակներին անուններ տուեց՝ Սանասար ու Բաղդասար: Եւ երբ կարգի բերեց երկիրը, արեց այն ամէնը, ինչը որ յայտնի է բոլորիս, եւ հերթը հասաւ մարդու արարմանը, Ծովինարը խնդրեց Ամենազօրին՝ այս անգամ չբնակեցնել երկիրը անճոռնի, հսկայամարմին, ագրեսիւ կենդանիներով ու կիկլոպներով, այլ մարդուն արարել իր՝ Աստծոյ պատկերով, որովհետեւ Նրանից աւելի կատարեալ ունէր դաշնակ ուրիշ որեւէ կենդանի էակ անհնար է պատկերացնել երկրի վրայ. խնդրեց՝ մարդու մէջ դնել իր լոյսից, հոգուց եւ Նրա մէջ արթնացնել այնպիսի մի միտք, որ ամբողջութեամբ ծառայի իր ստեղծած կատարեալներ դաշնակութեան անմեռ գոյութեանը: Հաճոյ եղաւ Արարչի սրտին ջրերի Աստուածուհու, ծովերի թագուհու խնդրանքը, եւ Նա կերտեց հողեղէն մարդուն, Ծովինարի էութիւնը՝ ջուրը, դարձնելով Նրա կազմութեան ամենամեծ բաղադրիչը...*

*Այնուհետեւ մարմին հագցրեց Սանասարին ու Բաղդասարին եւ դրեց Արարատեան դաշտի ճիշտ կենտրոնում, փաղաքշօրէն անուանելով նրանց Սիս ու Մասիս: Ասաց՝ Ծովերի թագուհի, քանի քո Սանասարն արդէն Սուրբ սար է իր անուանումով, իմ գահը երկրի վրայ պիտի լինի նրա ուսերին, իսկ իմ ստեղծած մարդիկ կը բնակեցնեն երկիրը՝ բազմանալով նրա ոտքերի մօտ ու տարածուելով ողջ երկրի վրայ:*

## ԱՐԴԵՕՔ ՄԻ ԲԱՆ ՀԱՍԿԱՆՈ՞ՒՄ ԷՔ «ՀԱՅԻՑ»

*Շարունակուածէջ 15–էն*

*թէկուզ: Նա մեկուսի է, խստակեաց, բարի եւ ազատասէր:*

*Երբ նայում եմ Հային, ինձ թւում է, թէ նրա վիրաւորանքը այն արծուի վիրաւորանքն է, որին ցած են բերել բարձր լեռներից: Թպրտում է, ընկնում քարի, աղբի մէջ, կեղտոտւում, թեւերը կոտրում: Կերակուր ես մեկնում՝ չի՛ ուզում: Զի սիրում ո՛չ ստրկութիւն, ո՛չ երջանկութիւն, գերադասում է տառապանք եւ ազատութիւն: Մաղձոտ է, մեկուսի, բայց չունի մեկուսի ատելութիւն, որ բարձր լեռներին անծանօթ զգացում է: Գերի արծուի խոր վիշտն է իր սրտի մէջ: Սա Հայկն է, որին զրկել են իր կեանքի միակ պայմանից՝ ազատութիւնից:*

*Ոչինչ չեմ ուզում ձեզնից,- ասում է Նա իր նեղիչներին,- ձեզ լինի ձեր լուծը, ձեզ լինի ձեր երջանկութիւնը, գնացէ՛ք, ապրեցէ՛ք խաղաղ եւ երջանիկ: Եթէ դուք սիրում էք կեանքը, ես սիրում եմ կեանքից աւելի թանկ բանը՝ Ազատութիւնը...:*

**«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ՌՒԴԻԴ ԵԹԵՐ ՇՕ**
**Ամէն Կիրակի**
**երեկոյեան ժամը 10:00-ից 12:30**
**Կլենտէյլի 380-րդ կայանից**




833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065
Dr. Missak Ekmekdjian
Chiropractor
Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor
Մեծահասակներու և մանուկներու Քայրոփրաքթիք բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային և մկանային ցաւեր:
Ինքնաշարժի վթարի հետեւանքով պատահած
վնասուածքներու բուժում:
Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

# ԼԱՐՔԸ՝ ԻԲՐԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՇՄ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 13–էն*

Վ.Դ. Դպրոցէն բաւական տարբեր մանկավարժական մօտեցում պէտք է որդեգրել մանուկներու ձիրքերը խմորելու, թէքնիքի զարգացման փուլերէն անկախ, զիրենք ոգեպէս երաժշտութեան կապելու, անոնց մէջ ապագայի երազներ սերմանելու գործընթացին մէջ, եւ այս կ՚ենթադրէ ինքնուրոյն կարգապահական մթնոլորտ: Կարելի՞ է խօսիլ այս մասին:

*Վ.Պ. Անշո՛ւշտ, քանի որ մեր գլխաւոր հարցն է ասիկա: Եթէ մանուկը Ամերիկայի մէջ յարմարաւէտ պայմաններու մէջ կը մեծնայ, տրուած ըլլալով որ վարժուած կ՚ըլլայ իր ուզածը ունենալու, անպայման որ չփացածութիւն մը կ՚ունենայ իր մէջ, ուզես թէ չուզես, մանաւանդ՝ երբ ծնողները բազմազբաղ են, եւ վայրկեան առաջ կը գոհացնեն անոր իւրաքանչիւր պահանջը: Թոյլ եւ դիւրին կեանք մը կը ստեղծուի մանուկին շուրջ ուր կարգ ու կանոն, discipline գրեթէ գոյութիւն չունի: Այդպիսի տղաք շատ ունեցած ենք, որոնք չեն դիմանար մեր կարգապահութեան եւ կը ձգեն ու կ՚երթան: Մենք կը նախընտրենք, որ դպրոցը իր կարգապահ ընթացքը ունենայ, որովհետեւ ատիկա երաժիշտին համար ամենէն կարեւոր բանալիներէն մէկն է, որ աշակերտը պէտք իւրացնէ, առանց որուն ստեղծագործական աշխատանքը կը կաղայ կամ նոյնիսկ կ՚անհետի: Ատոր մէջ մեզի կ՚օգնեն մեր հայաստանցի ծնողները: Կարգապահութիւնը կայ, այո, բայց չի նշանակեր որ խիստ օրէնքներու տակ կը գործենք: Կարգապահութիւն մը կայ, որուն մէջ մանուկը ինքզինքը կը զգայ հանգիստ եւ ուրախ գուարթ մթնոլորտի մը մէջ: Կատակներով, խնդալով ու խաղալով կ՚աշխատինք, բայց միեւնոյն ժամանակ անպայման բան մը պէտք է սորվինք այստեղ:*

*Ինչ կը վերաբերի թէքնիքէն մեկնելով երաժշտութեան կապելուն, ըսեմ, որ նախ դաշնամուրի ուսուցողութիւնը քանի մը շրջափուլ ունի: Նախ մատները պէտք է հասկնան թէ ինչ կ՚ընեն: 10 մատ ունիս, ամէն մէկը անհատապէս պէտք է մտածէ թէ ինչ կ՚ընէ եւ միաժամանակ ինչ կ՚ընեն: Այս մտածողութիւնը միտքին մէջ զարգացնելու համար տարիներ պիտի առնէ, ուզենք թէ չուզենք, բայց այս ընթացքին ժամանակ իրեն կը ծանօթացնենք երաժշտական կերպարի գիտակցութեան: Սկիզբը այս աշխատանքը ճիգ եւ սովորականէն աւելի աշխատանք կը պահանջէ, եւ ատոր պէտք է դիմանան: Աղջիկները աւելի դիմացկուն են քան տղաքը առհասարակ եւ աւելի խելացի ալ են, անշուշտ: Տղաքը հազիւ ոտնակոխած արբունքի շրջանը, կը սկսին զգուիլ, «ասանկ բաներ» չսիրել, մանաւանդ երբ իրենց ձայնն ալ կը փոխուի, եւ կը սկսին ամչնալ իրենց ձայնէն եւ կը հեռանան: Անոնք, որոնք կը դիմանան այդ 13–16 տարիքի վերիվայրումներուն, կը սկսին զարգացնել ու խորացնել իրենց իմացական կարողութիւնները, կը սկսին վերացական իմացութիւնները ըմբռնել, անցած կ՚ըլլան արդէն առաջին մատ, երկրորդ մատի խաւէն, հասնելու համար երաժշտական կերպարի ըմբռնումին, թէ ի՞նչ է երաժշտական նկարագիրը, թէ ինչո՞ւ այս այսպէս է եւ ոչ՝ այնպէս: Կը սկսի «ինչու»–ներու շարանը, եւ անոր պատասխաններու փնտռտուքը: Ի՞նչ է երաժշտական արտայայտութիւն կոչուածը, ի՞նչ է բառերէն վեր գտնուածը, որ միայն ձայներով կ՚ըլլայ եւ անպայման կ՚ազդէ քու վրադ: Ասոնք բաւական ծանր հարցումներ են, եւ եթէ մենք դիմացուցինք զիրենք մինչեւ 16 տարեկան, անկէ ետք աստուածները չեն կրնար զիրենք բաժնել երաժշտութենէն:*

Վ. Դ. Բան մը սորվելու բնական դիւրութիւն ունեցողներ կան տարբեր մարզերու մէջ: Բնական ձիրք ունեցողներ կան լեզուներ սորվելու մէջ: Երաժշտութիւնն ալ լեզու մըն է, որ աշխատանքով կրնայ յաղթահարելի ըլլալ, բայց տաղանդաւորն ալ առանց աշխատանքի, անտաղանդին չափ կրնայ կորսուիլ: Ձեր աշակերտներուն մէջ տաղանդաւոր եւ աշխատասէրներ կա՞ն:

*Վ. Պ. Մեր աշակերտներուն մէկ մասը շատ տաղանդաւոր է: Տաղանդը ծնունդէն կու գայ, աստուածատուր է, կախում ունի թէ ինչպէս կը մեծնայ, ինչ միջավայրի մէջ է եւ ինչ միջոցներ ունի իր տաղանդը զարգացնելու: Կարեւոր է նաեւ մէկու մը ունեցած թեքումը, կամ դիւրութիւնը, գործիքի մը հանդէպ ունեցած բնական թեքում մը: Մէկը կրնայ աւելի դիւրութեամբ նուագել, օրինակի համար, կիթառ քան՝ դաշնամուր: Մէկը կրնայ դիւրութեամբ ձայնանիշեր (notes) կարդալ, միւսը պէտք է գոց սորվի: Երբ պզտիկ մը հանգիստ կը զգայ ինքզինք դաշնամուրին առջեւ, եւ մանաւանդ երբ ելոյթէ մը ետք ծափահարուի, իր ինքնաճանաչողութեան աստիճանը կը բարձրանայ, եւ կ՚որդեգրէ դաշնամուրը: Մէկ ուրիշը՝ ջութակը, կամ կիթառը: Բեմ ելլող այս տղաքը, իրե՛նք քովս կու գան շնորհակալ ըլլալու, որ զիրենք ընտրած էի ելոյթի մը համար, որովհետեւ ծափահարութենէն ետք կը զգայ, որ այդ վայրկեանին կ՚ապրի իր «ծնունդը» որպէս երաժիշտ: Ալ անկէ ետք իրենք «երաժիշտ» կը պսակեն իրենք զիրենք, եւ այն ալ՝ ինչ հպարտութեամբ: Ամբողջ էութեամբս կը ջանամ մշակութային եւ մարդկային առումով կիրթ մարդ պատրաստել մեր աշակերտներէն: Նայեցէ՛ք ձեր շուրջը եւ պիտի տեսնէք թէ ինչո՞ւ:*

Վ.Դ. Կարելի չէ ունենալ այսքան աշխոյժ եւ յարատեւ ստեղծագործող ուղեղ եւ չունենալ ապագայի նորանոր ծրագիրներ: Կարելի՞ է քօղազերծել անոնցմէ գէթ մի քանին:

*Վ.Պ. Պարզապէս ըսեմ, որ տարեկան ձեռնարկներու հարց մը ունինք, որոնք պէտք է ընենք, որպէսզի մեր կենսունակութիւնը վառ պահենք, մենք մեզի համար եւ մեր ընկերներուն եւ բարեկամներուն համար, որոնք այդ կ՚ակնկալեն եւ նաեւ, որպէսզի մեր գործունէութեան դիմագիծը պահպանենք: Այդ մէկը ընելու համար զանազան գործունէութիւններ ունինք, ինչ որ յստակօրէն կ՚երեւի մեր համացանցին վրայ: Հրատարակչական գործունէութիւն ունինք: Մօտաւորապէս հայ երաժշտութեան նուիրուած 20 գիրք հրատարակութեան կը սպասեն: Եւ մեր մեծագոյն եւ ամենասիրելի ծրագիրներէն է Լարքը երաժշտական թեքումով առօրեայ դպրոցի վերածելը: Կը ծրագրենք նաեւ, դպրոցին կողքին ունենալ նաեւ գրադարան–թանգարան մը, որուն համար ահագին բան հաւաքած եմ արդէն: Ասիկա անհրաժեշտ կը նկատեմ, որպէսզի հայկականութեան պզտիկ կռուան մը ունենանք:*

*Ամառնային ծրագիր մը ունիմ, որ այս տարի կ՚ուզեմ սկսիլ, բոլոր անոնց համար որոնք հետաքրքրուած են հայերէն լեզու, գրականութիւն, եւ մշակոյթի պատմութիւն սորվելու: Ընդամէնը ամրան 3 շաբթուան դասընթացք է:*

*Միքատօ օփերէթթան շատոնց հաստատուած է եւ ծրագրուած Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան հետ: 2001–էն ի վեր կը խօսինք այն մասին, որ տարեկան մէկ օփերէթթա պիտի կրնա՞նք ներկայացնել: Ի պատիւ իրենց, մենք յաջողեցանք բեմ հանել Միքատօն, իրենք էին, որ մարտահրաւէրին պատասխանեցին, երբ $200,000 տրամադրեցին մէկ ծրագրի համար:*

Վ.Դ. Բաւական յուսադրիչ եւ շնորհաւորելի երեւոյթ է ձեր շուրջ խմբուած այս նորագոյն սերունդին հայ երգին եւ երաժշտութեան հանդէպ ցուցաբերած լրջութիւնը, ձեր յանձնառութիւնը հանդէպ իրենց »որդեգրած« ասպարէզին, որուն աղբիւրը դուք էք, ձեր ազգային ինքնութեան գիտակցութեան վարակող շունչով: Շնորհակալութիւն հարցազրոյցին համար եւ ձեր վարձքը՝ կատար:


1991

ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS
Cordially invites you

**Armenian Genocide Research and Study Programs in USA**
**How far we have progressed and in what direction?**
**Achievements and Failures.**





**ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ**
Սիրով կը հրաւիրէ ձեզ

Հայոց Ցեղասպանութեան
Հետազօտութեան եւ
Ուսումնասիրութեան Յայտագիրները
Միացեալ Նահանգներուն մէջ
Ո՞րքան յառաջդիմած ենք եւ ի՞նչ ուղղութեամբ:
Կատարելագործումնե՞րն ու Ձախողութիւննե՞րը

**By**
**Professor Taner Akçam**
**Kaloosdian/Mugar Chair**
Professor of History
**Armenian Genocide Studies Clark University - Worcester, MASS.**

**Discussant**

**Professor Richard Hrair Dekmejian**
**Director of USC Institute of Armenian Studies**
Professor of Political Science
**University of Southern California**

**Friday, March 22, 2013 at 8 PM**
Free Admission-Lecture in English-Reception will follow

**OIA Center, 19726 Sherman Way, Winnetka, CA 91306**
For further details please call OIA office (818) 342-0110